Մրցութային փաստաթղթեր

Փոքր ծավալի աշխատանքների գնում

Ազգային մրցութային սակարկություններ (ԱՄՍ)

# Հատոր 1

# «ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ վերանորոգում»

ԱՄՍ No՝ CR4/NCB/B-W/005-16

Ծրագիր՝«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում վարկային ծրագիր»

Փոխառություն No. 5222-ԱՄ

Պատվիրատու՝ « Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Թողարկվել է՝ 2016թ.ապրիլի 11

# Հատոր 1

1. *Բաժին I՝ Հրահանգներ մրցույթի մասնակիցներին*
2. *Բաժին IV՝ Մրցույթի ձևաթղթեր*
3. *Բաժին V՝ Իրավասու երկրներ*
4. *Բաժին VI՝ Բանկի քաղաքականություն. Կաշառակերություն և խարդախություն*
5. *Բաժին VIII՝ Պայմանագրի ընդհանուր պայմաններ*
6. *Բաժին X՝ Պայմանագրի ձևեր*

# Բաժին I. Հրահանգներ մրցույթի մասնակիցներին

## Դրույթների ցանկ


**Ա. Ընդհանուր դրույթներ...... 4**

1. Հայտի ոլորտը...... 4
2. Միջոցների աղբյուրը...... 4
3. Կաշառակերություն և խարդախություն ...... 5
4. Մրցույթի իրավասու մասնակիցներ ...... 5
5. Թույլատրելի նյութեր. Սարքավորումներ և ծառայություններ...... 9

**Բ. Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը ...... 9**

6. Մրցութային փաստաթղթերի բաժինները ...... 9
7. Մրցութային փաստաթղթերի պարզաբանումներ, այցելություն շինհրապարակ, նախամրցութային հանդիպում...... 10
8. Մրցութային փաստաթղթերի փոփոխություն...... 11

**Գ. Մրցութային առաջարկների պատրաստում...... 12**

9. Մրցույթին մասնակցելու հետ առնչվող ծախսերը ...... 12
10. Մրցույթի լեզուն ...... 12
11. Մրցութային առաջարկի մաս կազմող փաստաթղթերը ...... 13
12. Մրցութային առաջարկի ներկայացման նամակ և աղյուսակներ ...... 13
13. Այլընտրանքային մրցութային առաջարկներ...... 14
14. Մրցութային առաջարկի գները և զեղչերը...... 14
15. Մրցութային առաջարկի արժույթները և վճարում...... 16
16. Տեխնիկական առաջարկի մաս կազմող փաստաթղթերը...... 16
17. Մրցույթի մասնակցի որակավորումները հաստատող փաստաթղթեր ...... 16
18. Մրցութային առաջարկների վավերության ժամկետ...... 16
19. Մրցույթի երաշխիք...... 17
20. Մրցութայինառաջարկիձևաչափըևստորագրելը ...... 19

**Դ. Մրցութայինառաջարկներներկայացնելըևկնքելը...... 20**

21. Մրցութայինառաջարկներկնքելընևնշելը ...... 20
22. Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետ...... 21
23. Ուշացված մրցութային առաջարկներ ...... 21
24. Մրցութային առաջարկներիհետվերցնել, փոխարինելըևփոփոխելը ...... 21
25. Մրցութային առաջարկների բացում...... 22

**Ե. Մրցութայինառաջարկներիգնահատումըևհամեմատումը...... 24**

26. Գաղտնիություն ...... 24
27. Մրցութային առաջարկների պարզաբանում ...... 24
28. Շեղումներ, վերապահումներ և բացթողումներ...... 25
29. Համապատասխանության որոշում...... 25

30. Անհամապատասխանություններ, սխալներևբացթողումներ .................................... 26
31. Թվաբանական սխալների ուղղում ........................................................................ 26
32. Փոխարկումը մեկ արժեքի ............................................................................................ 27
33. Նախապատվու-թյան զեղչ ............................................................................................ 27
34. Ենթակապալա-ռուներ ..................................................................................................... 27
35. Մրցութային առաջարկների գնահատում ........................................................................ 28
36. Մրցութային առաջարկների համեմատում ..................................................................... 29
37. Մրցույթի մասնակցի որակավորումը ............................................................................. 29
38. Պատվիրատուիիրավունքը՝ընդունելորևէՄրցութային առաջարկկամմերժելորևէկամբոլորՄրցութային առաջարկները ............................. 30

**Զ. Պայմանագրի շնորհումը ........................................................................................... 30**

39. Շնորհման ........................................................................................................................ 30
չափանիշները .................................................................................................................... 30
40. Շնորհման ծանուցում ........................................................................................................ 30
41. Պայմանագրի ստորագրումը ............................................................................................ 32
42. Կատարողական երաշխիք ............................................................................................... 32
43. Արբիտր ............................................................................................................................. 32

# Բաժին I. Հրահանգներ մրցույթի մասնակիցներին

## Ա. Ընդհանուր դրույթներ

**1. Հայտի ոլորտը**

1.1 Պատվիրատուն, որի սահմանումը տրված է «**Մրցութային տվյալների աղյուսակ**»-ում (այսուհետ՝ «**ՄՏԱ**»), թողարկել է սույն Մրցութային փաստաթղթերը **ՄՏԱ-ում սահմանված** «Առաջարկներ ներկայացնելու հրավերի» առնչությամբ, Բաժին VII-ում՝ «Աշխատանքներին ներկայացվող պայմանները», նշված Աշխատանքները գնելու համար: Սույն մրցույթի լոտերի (պայմանագրերի) անվանումները և նույնականացման համարները **սահմանվածեն ՄՏԱ-ում**:

1.2 Սույն Մրցութային փաստաթղթում ամենուր՝

(ա) «գրավոր» տերմինը նշանակում է գրավոր եղանակով կատարված հաղորդագրություն և հանձնում ստացականի դիմաց,

(բ) բացառությամբ այն դեպքերի, երբ ենթատեքստից բխում է հակառակը, եզակիով օգտագործված բառերն ունեն նույն իմաստը, ինչ որ հոգնակիով օգտագործածները, և հակառակը,

(գ) «օր» նշանակում է օրացուցային օր:

**2. Միջոցների աղբյուրը**

2.1 Փոխառուն կամ Ստացողը (այսուհետ՝ «Փոխառու»), որի **սահմանումը բերված է ՄՏԱ-ում**, ստացել է, կամ դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ, կամ Միջազգային զարգացման ընկերակցություն՝ **ՄՏԱ-ում նշված** գումարով, **ՄՏԱ-ում նշված** ծրագրի համարֆինանսավորում ստանալու համար (այսուհետ՝ «միջոցներ»): Փոխառուն մտադիր է տրամադրել միջոցների մի մասն այն պայմանագրի (-երի) շրջանակներում թույլատրելի վճարումներ անելու համար, որի համար թողարկվել են սույն Մրցութային փաստաթղթերը:

2.2 Վճարումները Բանկին կիրականացվեն միայն Փոխառուի խնդրանքով ու Բանկի հաստատմամբ, և բոլոր առումներով պետք է համապատասխանեն Վարկային (կամ որևէ այլ ֆինանսավորման) համաձայնագրի պայմաններին ու պահանջներին: Վարկային (կամ այլ ֆինանսավորման) համաձայնագրով արգելվում է մասհանումներ անել վարկից (կամ այլ ֆինանսավորումից) այնպիսի անձանց կամ կազմակերպություններին, կամ որևէ ապրանքի ներկրման

համար վճարումներ անելու նպատակով, որոնք՝ որքանով տեղյակ է Բանկը, արգելված են ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի համաձայն ընդունված որոշմամբ: Փոխառուից բացի ոչ մի այլ կողմ չի կարող ձեռք բերել որևէ իրավունք Վարկային (կամ այլ ֆինանսավորման) համաձայնգրով, կամ որևէ պահանջ ներկայացնել Վարկի (կամ այլ ֆինանսավորման) միջոցներին:

| | | | |
|---|---|---|---|
| **3.** | **Կաշառակերություն և խարդախություն** | 3.1 | Բանկը պահանջում է կաշառակերության և խարդախության բացառման քաղաքականության դրույթների պահպանում, որոնք սահմանված են VI բաժնում |
| | | 3.2 | Ի կատարումն այդ քաղաքականության, Մրցույթի մասնակիցները պետք է իրենք թույլ տան, ինչպես նաև պահանջեն իրենց գործակալներից (անկախ նրանից, հայտարարված են դրանք, թե ոչ), ենթակապալառուներից, ենթախորհրդատուներից, ծառայություններ մատուցողներից, մատակարարներից կամ դրանց աշխատողներից թույլ տալ Բանկին զննել նախաորակավորման գործընթացի, առաջարկների ներկայացման և պայմանագրի կատարման (շնորհման դեպքում) հետ առնչվող բոլոր հաշիվները, հաշվետվությունները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև իրականացնել դրանց աուդիտ՝ Բանկի կողմից նշանակված աուդիտորների կողմից: |
| **4.** | **Մրցույթի իրավասու մասնակիցներ** | 4.1 | Մրցույթի մասնակիցը կարող է լինել մասնավոր ընկերություն կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություն՝ ՀՄՄ 4.5 կետի պայմաններին համապատասխանելու դեպքում, կամ դրանց՝ որևէ ձևով միավորված համատեղ ձեռնարկություն (ՀՁ), որը ստեղծվել է գործող համաձայնագրով, կամ որի ստեղծումը հիմնավորվում է նման համաձայնագիր կազմելու մտադրության նամակով: Համատեղ ձեռնարկության դեպքում բոլոր անդամները համապարտ պատասխանատվություն են կրում Պայմանագիրը՝ վերջինս պայմանների համաձայն կատարելու համար: ՀՁ-ն կնշանակի Ներկայացուցիչ, որը լիազորված կլինի ՀՁ-ի անդամներից որևէ մեկի և բոլոր անդամների անունից ցանկացած գործողություն կատարելու համար մրցութային գործընթացի ժամանակ, իսկ եթե Պայմանագիրը շնորհվի ՀՁ-ին՝ ապա նաև Պայմանագիրն իրականացնելու ժամանակ: ՀՁ-ի անդամների թվի առումով սահմանափակում չկա, **եթե դրա մասին հատուկ չի նշվում ՄՏՍ-ում**: |
| | | 4.2 | Մրցույթի մասնակիցը չպետք է ունենա շահերի բախում: |

Շահերի բախում ունեցող բոլոր Մրցույթի մասնակիցները կորակազրկվեն: Սույն մրցութային գործընթացում կհամարվի, որ Մրցույթի մասնակիցն ունի շահերի բախում, եթե նա՝

(ա) ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկում է Մրցույթի մեկ այլ մասնակցին, վերահսկվում է նրա կողմից, կամ Մրցույթի մեկ այլ մասնակցի հետ գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ,

(բ) ստացել է ուղղակի կամ անուղղակի սուբսիդիա Մրցույթի մեկ այլ մասնակցից, կամ

(գ) ունի նույն իրավաբանական ներկայացուցիչը, ինչ որ Մրցույթի մեկ այլ մասնակից,

(դ) այնպիսի հարաբերությունների մեջ է մրցույթի մեկ այլ մասնակցի հետ ՝ ուղղակիորեն կամ ընդհանուր երրորդ անձանց միջոցով, որը հնարավորություն է տալիս նրան ազդել Պատվիրատուի որոշումների վրա՝ կապված մրցութային առաջարկի գործընթացի հետ,

(ե) սույն մրցութային գործընթացում մասնակցում է մեկից ավելի Մրցութային առաջարկում: Մեկից ավել Մրցութային առաջարկում ներգրավված լինելը կհանգեցնի բոլոր այն առաջարկների որակազրկմանը, որոնցում ներգրավված է տվյալ Մասնակիցը: Այնուամենայնիվ, դա չի սահմանափակում միևնույն ենթակապալառուի ներառումը մեկից ավելի առաջարկներում, կամ

(զ) նրա դուստր կազմակերպություններից որևէ մեկը մասնակցել է որպես խորհրդատու այն աշխատանքների մանրամասն նախագծի կամ մասնագրերի պատրաստմանը, որոնք հանդիսանում ուն սույն մրցույթի առարկա, կամ

(a) նրա դուստր կազմակերպություններից որևէ մեկը Պատվիրատուի կամ Փոխառուի կողմից վարձվել է (կամ նախատեսվում է վարձվել) որպես Ճարտարագետ Պայմանագրի իրականացման համար,

(ը) իրականացնելու է աշխատանքներ, տրամադրելու է ապրանքներ կամ ոչ խորհրդատվական ծառայություններ, որոնք բխում կամ ուղղակիորեն առնչվում են ՄՏԱ-ի ՀՄՄ 2.1-ում սահմանված ծրագրի խորհրդատվական ծառայությունների պատրաստումից կամ կատարումից, որն իրականացրել է ինքը կամ նրա կողմից ուղղակիորեն

կամ անուղղակիորեն վերահսկվող որևէ դուստր ընկերություն, կամ այնպիսի ընկերություն, որի հետ գտնվում է համատեղ վերահսկողության տակ,

(թ) ունի սերտ գործարար կամ ընտանեկան հարաբերություններ Փոխառուի մասնագիտական անձնակազմի (կամ ծրագրի իրականացման կազմակերպության, կամ փոխառության մի մասի ստացողի) հետ, որը՝ (i) ուղղակի կան անուղղակի կերպով մասնակցել է պայմանագրի մրցութային փաստաթղթերի կամ մասնագրերի պատրաստմանը, կամ (ii) ներգրավված կլինի այդ պայմանագրի վերահսկմանը, քանի դեռ այդ հարաբերություններից բխող շահերի բախումը լուծված չլինի Բանկի կողմից ընդունելի ձևով՝ ողջ գնման ընթացակարգի և պայմանագրի իրականացման ընթացքում:

4.3 Մրցույթի մասնակիցը կարող է ունենալ ցանկացած երկրի ազգություն՝ ՀՄՄ 4.7 կետի սահմանափակումներով հանդերձ: Մրցույթի մասնակիցը համարվում է տվյալ երկրի ազգություն ունեցող, եթե նա հանդիսանում է տվյալ երկրի քաղաքացի, գրանցված է կամ գործունեություն է ծավալում տվյալ երկրի օրենսդրության դրույթներին համապատասխան, ինչը հիմնավորվում է նրա հիմնադրման փաստաթղթերով (կամ հիմնադրման կամ միավորման համարժեք այլ փաստաթղթերով): Այս չափանիշը վերաբերում է նաև Պայմանագրի որևէ մասի, այդ թվում Առնչվող ծառայությունների, համար առաջարկվող ենթակապալառուների կամ ենթախորհրդատուների ազգությունը որոշելիս:

4.4 Այն մրցույթի մասնակիցը, որի նկատմամբ Բանկի կողմից կիրառվել են պատժամիջոցներ վերոնշյալ ՀՄՄ 3.1 ենթակետի համաձայն, այդ թվում «ՄԶՎԲ փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհներում կաշառակերության դեմ պայքարի և կանխարգելման ուղեցույցների» («Ուղեցույցներ կաշառակերության դեմ») համաձայն, իրավասու չեն նախավորակավորվելու, մասնակցելու սակարկություններին կամ շնորհվելու Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի համար, կամ՝ ֆինանսապես, կամ որևէ այլ կերպ, օգուտ ստանալ Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերից՝ Բանկի կողմից որոշված ժամանակաշրջանի ընթացքում: Արգելված ընկերությունների և անհատների ցանկը

մատչելի է **ՄՏԱ-ումնշված** էլեկտրոնային հասցեով:

4.5 Պատվիրատուի երկրի պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունները կամ հաստատությունները կարող են մասնակցել միայն այն դեպքում, եթե հիմնավորեն, որ նրանք՝ (i) իրավաբանորեն և ֆինանսապես ինքնուրույն են, (ii) գործում են առևտրային օրենքի շրջանակներում, և (iii) չեն հանդիսանում Պատվիրատուից կախյալ գործակալություններ: Իրավասու լինելու համար, պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունը կամ հաստատությունը պետք է՝ ներկայացնելով բոլոր համապատասխան փաստաթղթերը, այդ թվում իր կանոնադրությունը և Բանկի կողմից պահանջված այլ տեղեկատվությունը, Բանկին գոհացնող կերպով հիմնավորի, որ նա՝ (i) հանդիսանում է պետությունից առանձին իրավաբանական անձ, (ii) ներկայումս չի ստանում էական սուբսիդիա կամ բյուջետային աջակցություն, (iii) պարտավոր չէ իր շահույթը փոխանցել պետությանը, կարող է ձեռք բերել իրավունքներ և պարտականություններ, փոխառությամբ վերցնել միջոցներ, իրավասու է մարելու պարտքերը և ճանաչվել սնանկ, և (iv) նա չի մրցում մի պայմանագրի համար, որը պետք է շնորհվի այն պետական վարչության կամ գործակալության կողմից, որը՝ կիրառվող օրենսդրությամբ կամ կանոնակարգերով, նրա ենթահաշվետու կամ վերահսկող լիազոր մարմինն է, կամ կարող է ազդել նրա վրա կամ իրականացնել նրա վերահսկումը:

4.6 Մրցույթի մասնակիցը չի կարող կասեցվել Պատվիրատուի կողմից մրցույթին մասնակցելուց Մրցույթի ապահովության հայտարարագիրը կիրառելու պատճառով:

4.7 Ընկերությունը կամ անհատը կարող են լինել ոչ իրավասու, եթե դրա մասին նշված է V բաժնում (Իրավասու երկրներ), և՝ (ա)օրենքով կամ պաշտոնական ակտով, Փոխառուի երկիրն արգելում է առևտրային հարաբերություններն այդ երկրի հետ, պայմանով, որը Բանկի համոզվի, որ այդ արգելքը չի բացառի արդյունավետ մրցակցությունը պահանջվող ապրանքների մատակարարման կամ աշխատանքների ու ծառայությունների պայմանագրերի կնքման գործընթացում, կամ (բ) Միացյալ ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի VII խարտիայի որոշման համապատասխան, Փոխառուի երկիրն արգելել է որևէ ներմուծում այդ երկրից, կամ որևէ վճարում որևէ երկրին, կամ այդ երկրի անհատին կամ կազմակերպությանը:

4.8 Մրցույթի մասնակիցը պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել իրավասության այնպիսի ապացույցներ, որը վերջինս կպահանջի ողջամիտ կերպով:

**5. Թույլատրելի նյութեր. Սարքավորումներ և ծառայություններ**

5.1 Բանկի կողմից ֆինանսավորվող Պայմանագրի շրջանակներում մատակարարվող նյութերը, սարքավորումները և ծառայությունները կարող են ունենալ ցանկացած երկրի ծագում՝ V բաժնի՝ «Իրավասու երկրներ»,սահմանափակումներով հանդերձ, և Պայմանագրի շրջանակներում իրականացվող բոլոր ծախսերը չպետք հակասեն այդ սահմանափակմանը: Պատվիրատուի պահանջով՝ Մրցույթի մասնակիցները պետք է ապացույցներ տրամադրեն նյութերի, սարքավորումների և ծառայությունների ծագման մասին:

## Բ. Մրցութային փաստաթղթերի բովանդակությունը

**6. Մրցութային փաստաթղթերի բաժինները**

6.1 Մրցութային փաստաթղթերը բաղկացած են 1, 2 և 3 մասերից, որոնք ներառում են բոլոր ներքոհիշյալ բաժինները, և պետք է կարդացվեն ՀՄՄ 8 կետի համաձայն թողարկած բոլոր հավելվածների հետ:

**ՄԱՍ 1 Մրցութային ընթացակարգեր**

Բաժին I՝ Հրահանգներ մրցույթի մասնակիցներին (ՀՄՄ)

Բաժին II՝ Մրցութային տվյալների աղյուսակ (ՄՏԱ)

Բաժին III՝ Գնահատման և որակավորման չափանիշներ

Բաժին IV՝ Մրցույթի ձևաթղթեր

Բաժին V՝ Իրավասու երկրներ

Բաժին VI՝ Բանկի քաղաքականություն. Կաշառակերություն և խարդախություն

**ՄԱՍ 2 Աշխատանքներին ներկայացվող պահանջներ**

Բաժին VII՝ Աշխատանքներին ներկայացվող պահանջներ

**ՄԱՍ 3 Պայմանագրի պայմաններ և պայմանագրային ձևեր**

Բաժին VIII՝ Պայմանագրի ընդհանուր պայմաններ (ՊԸՊ)

Բաժին IX՝ Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ)

Բաժին X՝ Պայմանագրային ձևեր

6.2 Պատվիրատուի կողմից թողարկած Մրցույթին մասնակցելու հրավերը չի հանդիսանում Մրցութային փաստաթղթերի մաս:

6.3 Պատվիրատուն պատասխանատու չէ Մրցութային

փաստաթղթերի և դրանց Հավելվածի ամբողջականության համար, պարզաբանման հարցումներին արված պատասխանների, նախամրցութային կոնֆերանսի արձանագրությունների համար, եթե դրանք չեն ստացվել անմիջապես Պատվիրատուից ՀՄՄ 8 կետի համաձայն: Հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է անմիջապես Պատվիրատուի կողմից ստացված փաստաթղթերին:

6.4 Ակնկալվում է, որ Մրցույթի մասնակիցը կուսումնասիրի Մրցութային փաստաթղթերի բոլոր հրահանգները, ձևերը, պայմանները,մասնագրերը և իր առաջարկում կներկայացնի Մրցութային փաստաթղթերով պահանջվող բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը:

**7. Մրցութային փաստաթղթերի պարզաբանումներ, այցելություն շինհրապարակ, նախամրցութային հանդիպում**

7.1 Եթե մրցույթի մասնակցին անհրաժեշտ է ստանալ Մրցութային փաստաթղթերի պարզաբանում, նա պետք է գրավոր կապվի Պատվիրատուի հետ **ՄՏԱ-ում նշված Պատվիրատուի հասցեով**, կամ բարձրացնի իր հարցը նախամրցութային հանդիպման ընթացքում, եթե դա նախատեսված է ՀՄՄ 7.4 կետով: Պատվիրատուն կպատասխանի բոլոր պարզաբանումների խնդրանքներին, եթե դրանք ներկայացվել են հայտերի բացման համար սահմանված ժամկետից շուտ՝ **ՄՏԱ-ում նշված ժամանակահատվածում**: Պատվիրատուի պատասխանի պատճենները պետք է ուղարկվեն ՀՄՄ 6.3 ենթակետի համաձայնմրցութային փաստաթղթեր ձեռք բերած բոլոր Մրցույթի մասնակիցներին՝ ներառելով հարցի նկարագրությունը, սակայն առանց նշելու ստացման աղբյուրը: Պատվիրատուն պետք է նաև անմիջապես հրապարակի իր պատասխանը ՄՏԱ-ում նշված կայքում, **եթե դա սահմանված է ՄՏԱ-ում**: Եթե պարզաբանման արդյունքում առաջանա մրցութային փաստաթղթերի փոփոխության անհրաժեշտություն, Պատվիրատուն պետք է փոփոխի դրանք ՀՄՄ 8 և ՀՄՄ 22.2 հետևելով կետերում նշված ընթացակարգին:

7.2 Մրցույթի մասնակիցներին խորհուրդ է տրվում այցելել և ուսումնասիրել Աշխատանքների Շինհրապարակն ու դրա շրջակայքը և ստանալ իր իսկ պատասխանատվությամբ ողջ տեղեկատվությունը, որ կարող է անհրաժեշտ լինել առաջարկը պատրաստելու և Աշխատանքների շինարարության պայմանագիրը կնքելու համար: Մրցույթի մասնակիցն իր հաշվին է հոգում Շինհրապարակի այցելության ծախսերը:

7.3 Պատվիրատուն թույլ կտա Մրցույթի մասնակցին և նրա

անձնակազմի կամ գործակալներից որևէ մեկին այցելության նպատակով մուտք գործել իր սեփականությունը հանդիսացող շինություն կամ տարածք, պայմանով, որ Պատվիրատուն, նրա անձնակազմը և գործակալները պատասխանատվություն չեն կրի Պատվիրատուի, նրա անձնակազմի և գործակալների մահվան կամ վնասվածքի, սեփականության կորստի կամ վնասի, կամ որևէ այլ կորստի, վնասի և ծախսերի համար, որոնք պատճառվել են զննման արդյունքում:

7.4 Մրցույթի մասնակցի կողմից նշանակված ներկայացուցիչը հրավիրվում է մասնակցել նախամրցութային հանդիպմանը, **եթե դրա մասին նշված է ՄՏԱ-ում**: Հանդիպման նպատակն է պարզաբանել բոլոր հարցերը և ստանալ պատասխաններ ցանկացած խնդրի շուրջ, որ կարող է առաջ գալ այդ փուլում

7.5 Մրցույթի մասնակիցը պետք է հնարավորինս արագ ներկայացնի իր հարցերը գրավոր ձևով, որպեսզի Պատվիրատուն կարողանա դրանք պարզաբանել հանդիպումից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

7.6 Նախամրցութային հանդիպման արձանագրությունները (եթե այն եղել է), այդ թվում բարձրացված հարցերը՝ առանց աղբյուրը նշելու, պատասխանները, ժողովից հետո պատրաստված պատասխանները արագ փոխանցվում են ՀՄՄ 6.3 ենթակետի համաձայն Մրցութային փաստաթղթեր գնած բոլոր Մրցույթի մասնակիցներին: Նախամրցութային հանդիպման արդյունքում Մրցութային փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխություն Պատվիրատուն պետք է ներկայացնի բացառապես ՀՄՄ 8 կետի համաձայն հավելվածի, այլ ոչ նախամրցութային հանդիպման արձանագրությունների տեսքով: Նախամրցութային հանդիպմանը չմասնակցելը հիմք չէ Մրցույթի մասնակցին որակազրկելու համար:

## 8. Մրցութային փաստաթղթերի փոփոխություն

8.1 Պատվիրատուն կարող է փոփոխել մրցութային փաստաթղթերը նախքան հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետը՝ հրատարակելով հավելված:

8.2 Ցանկացած թողարկած հավելված կազմում է Մրցութային փաստաթղթերի անբաժանելի մասը և պետք է գրավոր հաղորդվի ՀՄՄ 6.3 ենթակետի համաձայն Մրցութային փաստաթղթեր գնած բոլոր Մրցույթի մասնակիցներին և անմիջապես հրապարակվի Պատվիրատուի ինտերնետային կայքում՝ ՀՄՄ 7.1 ենթակետի համաձայն:

| | | | |
|---|---|---|---|
| | | 8.3 | Հայտերը պատրաստելիս հավելվածները հաշվի առնելու նպատակով հնարավոր Մրցույթի մասնակիցներին ողջամիտ ժամկետ տրամադրելու համար Պատվիրատուն՝ իր հայեցողությամբ, կարող է երկարաձգել առաջարկների ներկայացման վերջնաժամկետը համաձայն ՀՄՄ 22.2 կետի |

**Գ. Մրցութային առաջարկների պատրաստում**

| | | | |
|---|---|---|---|
| **9.** | **Մրցույթին մասնակցելու հետ առնչվող ծախսերը** | 9.1 | Մրցույթի մասնակիցը պետք է հոգա Մրցութային առաջարկի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը: Պատվիրատուն ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրի այդ ծախսերի համար՝ անկախ մրցութային գործընթացի ընթացքից կամ արդյունքից: |
| **10.** | **Մրցույթի լեզուն** | 10.1 | Մրցութային առաջարկը, ինչպես նաև Մրցութային առաջարկին վերաբերող Մրցույթի մասնակցի և Պատվիրատուի միջև փոխանակված ողջ նամակագրությունը և փաստաթղթերը պետք է գրվեն **ՄՏԱ-ում նշված լեզվով**: Մրցութային առաջարկի մաս հանդիսացող օժանդակ փաստաթղթերը և տպված գրականությունը կարող են ներկայացվել մեկ այլ լեզվով՝ միևնույն ժամանակ ապահովելով դրանց ճշգրիտ թարգմանությունը **ՄՏԱ-ում նշված լեզվով**: Տվյալ դեպքում, Մրցութային առաջարկները մեկնաբանելիս, ղեկավարող է հանդիսանում թարգմանությունը: |

| | | |
|---|---|---|
| **11. Մրցութային առաջարկի մաս կազմող փաստաթղթերը** | 11.1 | Մրցութային առաջարկը պետք է պարունակի հետևյալ նյութերը.<br>ա) Մրցութային առաջարկի նամակ՝ համաձայն ՀՄՄ 12 կետի,<br>բ) լրացված Աղյուսակներ՝ **համաձայն ՀՄՄ 12 և 14 կետերի**,<br>գ) Մրցութային առաջարկի երաշխիք կամ Մրցութային առաջարկի անվտանգության ապահովման մասին Մրցութային հայտարարագիր՝համաձայն ՀՄՄ 19 կետի,<br>դ) այլընտրանքային Մրցութային առաջարկներ, եթե թույլատրվում են ՀՄՄ 13 կետով,<br>ե) գրավոր հաստատում, որով լիազորվում է Մրցութային առաջարկը ստորագրողին ներկայացնել Մրցույթի մասնակցին ՀՄՄ 20.2 ենթակետի համաձայն,<br>զ) փաստաթղթային ապացույցներ ՀՄՄ 17 ենթակետի համաձայն, որոնք հաստատում են Մրցույթի մասնակցի որակավորումները պայմանագիրը կատարելու համար՝ Մրցութային առաջարկն ընդունելու դեպքում,<br>է) Տեխնիկական առաջարկ՝համաձայն ՀՄՄ16 կետի,<br>ը) **ՄՏԱ**-ով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ: |
| | 11.2 | Համատեղ ձեռնարկության(ՀՁ) կողմից ներկայացված Մրցութային առաջարկը, ի լրումն ՀՄՄ 11.1 կետի, պետք է ներառի Համատեղ ձեռնարկության համաձայնագիր, որը կնքվում է բոլորի կողմից: Որպես այլընտրանք, մրցութային առաջարկի հետ պետք է ներկայացվի Համատեղ ձեռնարկության համաձայնագիր կնքելու մտադրության նամակ՝ ստորագրված բոլոր անդամների կողմից, այդ թվում առաջարկվող համաձայնագրի նախագիծը: |
| | 11.3 | Մրցութային առաջարկի նամակում Մրցույթի մասնակիցը պետք է տեղեկատվություն ներկայացնի գործակալներին կամ այլ կողմերին սույն Մրցութային առաջարկի առնչությամբ վճարված միջնորդավճարների կամ պարգևատրումների մասին: |
| **12. Մրցութային առաջարկի ներկայացման նամակ և** | 12.1 | Մրցութային առաջարկի ներկայացման նամակը և աղյուսակները պետք է պատրաստվեն օգտագործելով Բաժին IV-ում (**Մրցույթի ձևաթղթեր**) ներկայացված համապատասխան ձևերը: Վերջիններս պետք է լրացվեն առանց տեքստի փոփոխության, բացառությամբ ՀՄՄ 20.2 կետի, որևէ |

| | |
|---|---|
| **աղյուսակներ** | փոխարինում չի թույլատրվում: Բոլոր դատարկ հատվածները պետք է լրացվեն պահանջվող տեղեկատվությամբ: |
| **13. Այլընտրանքային մրցութային առաջարկներ** | 13.1 Այլընտրանքային մրցութային առաջարկները կդիտարկվեն միայն այն դեպքում, եթե դրա մասին **նշված լինի Մրցութային փաստաթղթերում**: |
| | 13.2 Ավարտման այլընտրանքային ժամկետներ թույլատրելու դեպքում դրա մասին, ինչպես նաև ավարտման տարբեր ժամկետների գնահատման մեթոդը **ներառված կլինեն Մրցութային փաստաթղթերում**: |
| | 13.3 Բացառությամբ ՀՄՄ 13.4 կետով նախատեսված դեպքի, Մրցույթի այն մասնակիցները, որոնք ցանկանում են ներկայացնել Մրցութային փաստաթղթերի պահանջների այլընտրանքային տեխնիկական առաջարկներ, պետք է նախ գնանշեն Պատվիրատուի ծրագիրը, ինչպես նկարագրված է Մրցութային փաստաթղթում, իսկ հետո տրամադրեն այլընտրանքային առաջարկի ամբողջական գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ այդ թվում գծագրերը, նախագծային հաշվարկները, տեխնիկական բնութագրերը, գների բացվածքը, կառուցման առաջարկվող մեթոդները և այլ վերաբերող մանրամասներ, որպեսզի Պատվիրատուն կարողանա կատարել ամբողջական գնահատում: Պատվիրատուն կուսումնասիրի միայն ամենացածր գնահատված մրցութային գին առաջարկած Մրցույթի մասնակցի տեխնիկական այլընտրանքային առաջարկները, որոնք կհամապատասխանեն հիմնական տեխնիկական պահանջներին: |
| | 13.4 **Եթե դա նշված է ՄՏԱ-ում**, Մրցույթի մասնակիցներին թույլ է տրվում ներկայացնել այլընտրանքային տեխնիկական լուծումներ Աշխատանքների կոնկրետ մասերի համար: Այդ մասերը որոշված կլինեն ՄՏԱ-ում և նկարագրված VII Բաժնում՝ «Աշխատանքներին ներկայացվող պահանջները»: Դրանց գնահատման մեթոդը կսահմանվի III Բաժնում՝ «Գնահատման և որակավորման չափանիշներ»: |
| **14. Մրցութային առաջարկի գները և զեղչերը** | 14.1 Մրցութային առաջարկի ներկայացման նամակում և Աղյուսակներում Մրցույթի մասնակցի կողմից առաջարկված գներն ու զեղչերը (այդ թվում գնի նվազեցումը) պետք է համապատասխանեն ստորև բերված պահանջներին: |
| | 14.2 Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկ ՀՄՄ 1.1-ում նկարագրված բոլոր տեսակի աշխատանքների համար՝ |

լրացնելով Աշխատանքների բոլոր կետերի գները, որոնք ներառված են Բաժին IV-ում՝ «Մրցույթի ձևաթղթերում»: Չափագրվող պայմանագրերի դեպքում Մրցույթի մասնակիցը պետք է լրացնի Աշխատանքների ծավալների ցուցակում նկարագրված բոլոր կետերն ու գները: Այն կետերը, որոնց համար մասնակիցը չի լրացրել ոչ մի դրույք կամ գին, կատարվելու դեպքում չեն վճարվի Պատվիրատուի կողմից և կհամարվի, որ դրանք ներառված են Աշխատանքների ծավալների ցուցակների այլ կետերի դրույքների և գների մեջ:

14.3 ՀՄՄ 12.1 ենթակետի համաձայն Մրցութային առաջարկի ներկայացման նամակում առաջարկված գինը Մրցութային առաջարկի ընդհանուր գումարն է՝ առանց որևէ առաջարկված զեղչերի:

14.4 Մրցույթի մասնակիցը՝ Մրցութային առաջարկի ներկայացման նամակում պետք է նշի ցանկացած զեղչ և դրա կիրառման մեթոդը՝ համաձայն ՀՄՄ 12.1 կետի:

14.5 **Մրցույթի մասնակցի կողմից առաջարկված գները** պետք է լինեն ֆիքսված, քանի դեռ **ՄՏԱ**-ում և Պայմանագրի պայմաններում այլ բան չի նախատեսված: Եթե գները ենթակա են ճշգրտման Պայմանագրի կատարման ընթացքում Պայմանագրի պայմանների համաձայն, Մրցույթի մասնակիցը Բաժին IV-ի (Մրցույթի ձևաթղթեր) Տվյալների ճշգրտման աղյուսակում պետք է ներկայացնի կշիռներ գների ճշգրտման բանաձևի համարը՝ դրանում ներկայացված հրահանգների համաձայն:

14.6 ՀՄՄ 1.1 կետով նախատեսված լինելու դեպքում, առաջարկներ հրավիրվում են ինչպես առանձին լոտերի, այնպես էլ լոտերի ցանկացած զուգակցման համար: Այն մասնակիցները, որոնք ցանկանում են առաջարկել զեղչեր մեկից ավել պայմանագիր ստանալու դեպքում, պետք է իրենց առաջարկում նշեն յուրաքանչյուր փաթեթի, կամ՝ որպես այլընտրանք, փաթեթի ներսում առանձին պայմանագրերի նկատմամբ կիրառվող զեղչերը: Զեղչերն ընդունվում են ՀՄՄ 14.4 կետի համաձայն, պայմանով, որ բոլոր լոտերի (պայմանագրերի) առաջարկները բացվում են նույն ժամանակ:

14.7 Բոլոր մաքսերը, տուրքերը և այլ զանձումները, որոնք պետք է վճարվեն Կապալառուի կողմից Պայմանագրի շրջանակներում կամ որևէ այլ պատճառներով, պետք է ընդգրկվեն Մրցույթի մասնակցի կողմից ներկայացված միավոր գների, արժեքների և Մրցութային առաջարկի ընդհանուր արժեքի մեջ՝ Մրցութային

| | |
|---|---|
| | առաջարկների ներկայացման վերջնաժամկետից 28 օր առաջվա դրությամբ: |
| **15. Մրցութային առաջարկի արժույթները և վճարում** | 15.1 Մրցութային առաջարկի արժույթները և վճարման արժույթները **սահմանվում են ՄՏԱ-ում**:<br>15.2 ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ |
| **16. Տեխնիկական առաջարկի մաս կազմող փաստաթղթերը** | 16.1 Մրցույթի մասնակիցը պետք է տրամադրի Տեխնիկական առաջարկ՝ ներառելով տեղեկատվություն աշխատանքային մեթոդների, սարքավորումների, անձնակազմի, ժամանակացույցերի և այլնի մասին, համաձայն IV բաժնի (Մրցույթի ձևաթղթեր)՝ բավարար մանրամասներով, որպեսզի ներկայացնի իր Մրցութային առաջարկի համապատասխանությունն աշխատանքներին ներկայացվող պահանջներին և ավարտման ժամկետներին: |
| **17. Մրցույթի մասնակցի որակավորումներ ը հաստատող փաստաթղթեր** | 17.1 Որպեսզի Բաժին III-ի (Գնահատման և որակավորման չափանիշներ) համաձայն հաստատվեն Մրցույթի մասնակցի որակավորումները Պայմանագրի կատարման համար, Մրցույթի մասնակիցը պետք է տրամադրի Բաժին IV-ի (Մրցույթի ձևաթղթեր) համապատասխան տեղեկատվական աղյուսակներով պահանջված տեղեկատվությունը:<br>17.2 ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ |
| **18. Մրցութային առաջարկների վավերության ժամկետ** | 18.1 Մրցութային առաջարկները պետք է վավեր լինեն **ՄՏԱ-ում սահմանված ժամկետի ընթացքում**՝ Պատվիրատուի կողմից սահմանված Մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետից հետո: Վավերության ավելի կարճաժամկետ ունեցող Մրցութային առաջարկը մերժվում է՝ Պատվիրատուի կողմից որպես չհամապատասխանող: |

18.2 Բացառիկ դեպքերում՝ մինչև առաջարկների վավերության ժամկետը, Պատվիրատուն կարող է խնդրել Մրցույթի մասնակիցներից երկարաձգել իրենց առաջարկների վավերության ժամկետը: Առաջարկն ու Մրցույթի մասնակիցների պատասխանները պետք է լինեն գրավոր: Եթե ՀՄՄ 19 ենթակետի համաձայն պահանջվում է Մրցութային առաջարկի երաշխիք, ապա այն նույնպես պետք է երկարաձգվի՝ առաջարկի վավերության երկարաձգման ժամկետից 28 (քսանութ) օր երկար ժամկետով: Մրցույթի մասնակիցը կարող է չհամաձայնվել երկարացնել վավերության ժամկետը, որի դեպքում Մրցույթին մասնակցելու երաշխիքը չի կիրարկվում:Եթե մրցույթի մասնակիցը համաձայնվում է ժամկետի երկարացման հետ, նա չի կարող խնդրել, կամ նրան չի կարելի թույլատրել փոփոխություններ անել իր առաջարկում՝ բացառությամբ ՀՄՄ 18.3 կետով նախատեսված դեպքերի:

18.3 Եթե պայմանագրի շնորհումը հետաձգվում է Մրցութային առաջարկի վավերականության սկզբնական ժամկետի ավարտից հետո (56) հիսունվեց օրը գերազանցող ժամկետով, ապա Պայմանագրի արժեքը պետք է որոշվի հետևյալ կերպ.

(ա) ֆիքսված գնով պայմանագրերի դեպքում Պայմանագրի գինը կլինի մրցութային առաջարկի գինը՝ ճշգրտված ՄՏՍ-ում սահմանված գործակցով,

(բ) ճշգրտվող գնով պայմանագրերի դեպքում, ճշգրտում չի լինում:

(գ) Ամեն դեպքում, մրցույթի գնահատումը պետք է հիմնվի մրցութային առաջարկի գնի հիման վրա, առանց հաշվի առնելու վերոնշյալ կիրառվող ուղղումները:

**19. Մրցույթի երաշխիք**

19.1 Մրցույթի մասնակիցը՝ որպես Մրցութային առաջարկի մաս, պարտավոր է բնօրինակով ներկայացնել Մրցութային երաշխիք կամ Մրցույթի երաշխավորության հայտարարագիր՝**ՄՏՍ-ում սահմանված ձևով**: Մրցութային երաշխիքի դեպքում գումարը և արժույթը պետք է լինեն **ՄՏՍ-ում սահմանված ձևով**:

19.2 Մրցույթի երաշխավորության հայտարարագիրը կազմելիս հարկավոր է կիրառել Բաժին IV-ում (Մրցույթի ձևաթղթեր) ներառված ձևը:

19.3 Եթե ՀՄՄ 19.1 կետով սահմանված է մրցութային երաշխիք, այն պետք է՝ Մրցույթի մասնակցի հայեցողությամբ, լինի հետևյալ ցպահանջ երաշխիքներից որևէ մեկի ձևով.

(ա) որևէ բանկի կամ ֆինանսական հաստատության (ինչպես օրինակ՝ ապահովագրական ընկերության, երաշխավորող ընկերության) կողմից թողարկված անվերապահ երաշխիք,

(բ) անհետկանչելի ակրեդիտիվի նամակ,

(գ) դրամարկղային չեկ կամ վկայագրված չէկ,կամ

(դ) **ՄՏԱ-ով սահմանված** այլ երաշխիք

իրավասու երկրի հուսալի աղբյուրից: Եթե անվերապահ երաշխիքը թողարկվում է ոչ Պատվիրատուի երկրում գտնվող ֆինանսական հաստատության կողմից, թողարկող ֆինանսական հաստատությունը պետք է թղթակցային ֆինանսական հաստատություն ունենա Պատվիրատուի երկրում՝ երաշխիքը կիրարկելի դարձնելու համար: Բանկային երաշխիքի դեպքում այն պետք է ներկայացվի կամ օգտագործելով Բաժին IV-ում բերված մրցույթի երաշխիքի ձևով, կամ դրան էապես համանման մեկ այլ ձևաչափով, որը հաստատված կլինի Պատվիրատուի կողմից մինչև առաջարկի ներկայացնելը: Մրցութային երաշխիքը պետք է վավեր լինի մրցույթի սկզբնական վավերության ժամկետից, կամ ՀՄՄ 18.2 ենթակետի համաձայն խնդրված վավերության երկարաձգված ժամկետից 28 (քսանութ) օր անց:

19.4 Եթե ՀՄՄ 19.1 ենթակետի համաձայն սահմանված է մրցութային երաշխիք կամ մրցույթին մասնակցելու հայտարարագիր, ապա ցանկացած Մրցութային առաջարկ, որը չի ուղեկցվում էապես համապատասխանող մրցութային երաշխիքով կամ մրցույթին մասնակցելու հայտարարագրով, մերժվում է Պատվիրատուի կողմից՝ որպես պահանջներին չհամապատասխանող:

19.5 Եթե ՀՄՄ 19.1 ենթակետի համաձայն ներկայացվում է մրցութային երաշխիք, այն պետք է վերադարձվի չընտրված Մրցույթի մասնակիցներին՝ ընտրված Մրցույթի մասնակցի հետ Պայմանագիրը կնքելուց և վերջինիս կողմից ՀՄՄ 41 ենթակետի համաձայն կատարողական երաշխիքը ներկայացնելուց հետո հնարավորինս արագ:

19.6 ԸնտրվածՄրցույթի մասնակցի մրցութային երաշխիքը պետք է վերադարձվի՝նրա հետ Պայմանագիրը կնքելուց և վերջինիս կողմից պահանջվող կատարողական երաշխիքը ներկայացնելուց հետո հնարավորինս արագ:

19.7 Մրցութային երաշխիքը կարող է գանձվել, կամ մրցույթին

մասնակցելու հայտարարագիրը կարող է կիրարկվել, եթե՝

(ա) եթե Մրցույթի մասնակիցը հետ է վերցնում իր առաջարկը՝Մրցութային առաջարկի ներկայացման նամակում վերջինիս կողմից նշված Մրցութային առաջարկի վավերության ժամանակահատվածում, կամ

(բ) եթե ընտրված Մրցույթի մասնակիցը սահմանված ժամանակահատվածում.

(1) չի ստորագրում Պայմանագիրը՝ համաձայն ՀՄՄ 40 կետի, կամ

(2) չի ներկայացնում կատարողական երաշխիք՝ համաձայն ՀՄՄ 41 կետի:

19.8 Համատեղ ձեռնարկության մրցութային երաշխիքը կամ մրցույթին մասնակցելու հայտարարագիրը պետք է լինեն այդ Մրցութային առաջարկը ներկայացնող համատեղ ձեռնարկության անունից: Եթե համատեղ ձեռնարկությունը իրավաբանորեն դեռ չի ձևավորվել մրցույթի ժամանակ, ապա մրցութային երաշխիքը կամ մրցույթին մասնակցելու հայտարարագիրը պետք է լինեն բոլոր ապագա անդամների անունից, ինչպես նշված է ՀՄՄ 4.1 և ՀՄՄ 11.2 կետերում նշված մտադրության նամակում:

19.9 **ԵթեՄՏԱ-ով** մրցութային երաշխիք չի պահանջվում, և՝

(ա) Մրցույթի մասնակիցը հետ է վերցնում իր առաջարկը՝ իր կողմից մրցութային առաջարկի նամակում սահմանված ժամկետի ընթացքում, կամ

(բ) մրցույթում հաղթած մասնակիցը չի ստորագրում Պայմանագիրը ՀՄՄ 41 ենթակետի համաձայն, կամ չի տրամադրում կատարողական երաշխիքը՝ ՀՄՄ 42 ենթակետի համաձայն,

ապա Փոխառուն՝ **եթե դա նախատեսված է ՄՏԱ-ով**, կարող է Մրցույթի մասնակցին հայտարարել ոչ իրավասու՝ **ՄՏԱ-ում սահմանված ժամկետով** Պատվիրատուի կողմից պայմանագիր շնորհվելու համար:

**20. Մրցութային առաջարկի ձևաչափըևստորագրելը**

20.1 Մրցույթի մասնակիցը պետք է պատրաստի ՀՄՄ 11 կետում նկարագրված առաջարկի մաս կազմող փաստաթղթերի մեկ բնօրինակ, որը պետք է հստակ նշված լինի որպես «ԲՆՕՐԻՆԱԿ»: Այլընտրանքային առաջարկները, եթե թույլատրվում են ՀՄՄ 13 կետով, պետք է հստակ նշվեն որպես «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ»: Ի լրումն դրա, Մրցույթի մասնակիցը պետք է

ներկայացնի Մրցութային առաջարկի պատճեններ՝ **ՄՏԱ-ում նշված քանակով**, որոնք բոլորը պետք է հստակ նշված լինեն որպես «ՊԱՏՃԵՆ»: Բնօրինակի և պատճենների միջև հակասությունների դեպքում առաջնահերթությունը տրվում է բնօրինակին:

20.2 Մրցութային առաջարկի բնօրինակը և պատճենները պետք է գրվեն կամ տպվեն չջնջվող թանաքով և ստորագրված լինեն այն անձի կողմից, որը պատշաճ լիազորված է ստորագրել դրանք Մրցույթի մասնակցի անունից: Նման լիազորությունը պետք է գրավոր ամրագրվի, ինչպես նշված է ՄՏԱ-ում, և կցվի Մրցութային առաջարկին: Լիազորագիրը ստորագրող ցանկացած անձի անունը և զբաղեցրած պաշտոնը տպվում են ստորագրության տակ: Առաջարկի բոլոր այն էջերը, որոնց վրա կան ավելացված մասեր կամ ուղղումներ, պետքէստորագրված լինեն առաջարկը ստորագրող անձի կողմից:

20.3 Եթե մրցույթի մասնակիցը ՀՁ-է, մրցութային առաջարկը պետք է ստորագրվի ՀՁ-ի լիազորված ներկայացուցչի կողմից՝ ՀՁ-ի անունից, և լինի իրավաբանորեն պարտադիր բոլոր անդամների համար, ինչի կհաստատվի անդամների լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված լիազորագրով:

20.4 Ցանկացած ավելացում տողերի արանքում, ջնջում կամ ջնջածի վրա գրված նոր մաս վավեր կլինեն միայն այն դեպքում, եթե դրանք ստորագրված լինեն առաջարկը ստորագրող անձի կողմից:

## Դ. Մրցութային առաջարկներ ներկայացնելը և կնքելը

**21. Մրցութային առաջարկներ կնքելը և նշելը**

21.1 Մրցույթի մասնակիցները Մրցութային առաջարկի բնօրինակն ու պատճենների բոլոր օրինակները, այդ թվում այլընտրանքային Մրցութային առաջարկները՝ եթե թույլատրվում են ՀՄՄ 13 կետով, պետք է տեղադրեն առանձին կնքված ծրարներում, որոնց վրա, համապատասխանաբար, նշվում է «ԲՆՕՐԻՆԱԿ», «ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ և «ՊԱՏՃԵՆ»: Բնօրինակը և պատճենները պարունակող այս ծրարներն, իրենց հերթին, դրվում են մեկ արտաքին ծրարի մեջ:

21.2 Ներքին և արտաքին ծրարների վրա պետք է.

ա) նշված լինի Մրցույթի մասնակցի անունը և հասցեն,

բ) հասցեագրված լինեն Պատվիրատուին՝ ՄՏԱ-ում նշված հասցեով՝ **համաձայն ՀՄՄ 22.1 կետի**,

գ) նշված լինի տվյալ մրցութային գործընթացի հատուկ տարբերիչ նշանները՝ համաձայն ՀՄՄ 1.1 կետի,

դ) նշված լինի նախազգուշացում, որ Մրցութային առաջարկը չբացվի սահմանված ժամից և օրից շուտ:

21.2 Եթե բոլոր ծրարները պատշաճ կերպով կնքված/նշագրված չլինեն, ապա Պատվիրատուն որևէ պատասխանատվություն չի կրի Մրցութային առաջարկի կորստի, սխալ և վաղաժամ բացման համար:

**22. Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետ**

22.1 Մրցութային առաջարկները պետք է առաքվեն Պատվիրատուի նշված հասցեով, ոչ ուշ, քան **ՄՏԱ-ում սահմանված** օրն ու ժամը: Եթե **սահմանված է ՄՏԱ-ում**, ապա Մրցույթի մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ներկայացնել իրենց Մրցութային առաջարկներն էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով առաջարկեր ներկայացնող Մրցույթի մասնակիցները պետք է հետևեն **ՄՏԱ-ում սահմանված** էլեկտրոնային եղանակով Մրցութային առաջարկի ներկայացման ընթացակարգերին:

22.2 Պատվիրատուն կարող է՝ իր հայեցողությամբ, երկարացնել Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը՝ փոփոխելով Մրցութային փաստաթղթերը ՀՄՄ 8 կետի համաձայն: Նման պարագայում Պատվիրատուի և Մրցույթի մասնակիցների բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախկինում կիրառվում էին սկզբնական վերջնաժամկետի նկատմամբ, պետք է կիրառվեն նոր վերջնաժամկետի նկատմամբ:

**23. Ուշացված մրցութային առաջարկներ**

23.1 Պատվիրատուն չի ուսումնասիրի որևէ մրցութային առաջարկ, որը ստացվում է ՀՄՄ 22 կետով սահմանված՝ առաջարկների ներկայացման վերջնաժամկետից հետո: Այդ Մրցութային առաջարկները կհամարվեն ուշացած, մերժված, և առանց բացվելու կվերադարձվեն Մրցույթի մասնակցին:

**24. Մրցութային առաջարկների հետ վերցնել, փոխարինելը և փոփոխելը**

24.1 Մրցույթի մասնակիցը կարող է ուղղել, փոփոխել կամ հետ վերցնել իր առաջարկը՝ գրավոր ծանուցմամբ և լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ, և ներառել լիազորագրի պատճենը համաձայն ՀՄՄ 20.2 կետի (բացառությամբ այն դեպքերի, երբ հետ վերցնելու ծանուցումների պատճենները չեն պահանջվում): Մրցութային առաջարկում կատարված համապատասխան ուղղումը կամ փոփոխությունը պետք է ուղեկցվի գրավոր ծանուցմամբ: Բոլոր ծանուցումները պետք է.

(ա) պատրաստվեն և ներկայացվեն ՀՄՄ 20 և ՀՄՄ 21 կետերի

համաձայն (բացառությամբ այն դեպքերի, հետ վերցնելու ծանուցումների պատճենները չեն պահանջվում), բացի այդ, համապատասխան ծրարների վրա պետք է հստակ նշվի «ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ», «ՈՒՂՂՈՒՄ», «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ», և

(բ) Պատվիրատուն պետք է ստանա դրանք Մրցութային առաջարկների ներկայացման համար սահմանված վերջնաժամկետից առաջ՝ համաձայն ՀՄՄ 22 կետի:

24.2 Հետ վերցնելու համար խնդրված Մրցութային առաջարկները Մրցույթի մասնակիցներին վերադարձվում են առանց բացվելու՝ համաձայն ՀՄՄ 24.1 կետի:

24.3 Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետի և Մրցույթի մասնակցի կողմից մրցույթին մասնակցելու նամակում նշված վավերության ժամկետի լրանալու միջև ընկած ժամանակահատվածում արգելվում է հետ վերցնել, ուղղել կամ փոփոխել որևէ Մրցութային առաջարկ:

**25. Մրցութային առաջարկների բացում**

25.1 Բացառությամբ ՀՄՄ 23 և 24 կետերում նշված դեպքերի, Պատվիրատուն պետք է հրապարակայնորեն բացի և ՀՄՄ 25.3 ենթակետի համաձայն բարձրաձայն կարդա Մրցութային առաջարկները Մրցույթի մասնակիցների լիազորված ներկայացուցիչների կամ ցանկացած այլ անձի ներկայությամբ, ով նպատակահարմար է գտել մասնակցել **ՄՏԱ-ում նշված** ժամին և վայրում: Եթե ՀՄՄ 22.1 կետով թույլատրվում է էլեկտրոնային մրցույթ, էլեկտրոնային բացման ցանկացած հատուկ ընթացակարգ պետք է իրականացվի **ՄՏԱ-ով սահմանված ձևով**:

25.2 Սկզբում պետք է բացվեն և կարդացվեն «ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼ» նշումով ծրարները: Համապատասխան Մրցութային առաջարկով ծրարը պետք է առանց բացվելու վերադարձվի Մրցույթի մասնակցին: Մրցութային առաջարկը չի կարող հետ վերցվել, մինչև հրաժարվելու վերաբերյալ ծանուցման մեջ չլինի հետ վերցնելու խնդրանքի վավեր լիազորում և մինչև այն չկարդացվի առաջարկների բացման ժամանակ: Այնուհետև բացվում և կարդացվում են «ՓՈԽԱՐԻՆՈՒՄ» նշումով ծրարները և փոխարինվում համապատասխան ուղղված Մրցութային առաջարկով: Փոխարինվող առաջարկը պետք է առանց բացվելու վերադարձվի Մրցույթի մասնակցին: Մրցութային առաջարկը չի կարող փոխարինվել, մինչև

փոխարինման ծանուցման մեջ չլինի փոխարինման խնդրանքի վավեր լիազորում և այն չկարդացվի առաջարկի բացման ժամանակ: «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» նշագրմամբ ծրարները բացվում և ընթերցվում են համապատասխան Մրցութային առաջարկի հետ միասին: Մրցութային առաջարկը չի կարող փոփոխվել, մինչև փոխարինման ծանուցման մեջ չլինի փոփոխման խնդրանքի վավեր լիազորում և այն չկարդացվի առաջարկի բացման ժամանակ: Հետագայում ուսումնասիրվում են միայն Մրցութային առաջարկների բացման ընթացքում բացված և կարդացված ծրարները:

25.3 Մնացած բոլոր ծրարները պետք է բացվեն առանձին-առանձին և կարդացվի հետևյալը. Մրցույթի մասնակցի անունը, արդյոք կա՞ փոփոխություն, թե ոչ, Մրցութային առաջարկի ընդհանուր գինը, գինն ըստ լոտերի (պայմանագրերի)՝ եթե կիրառվում է, ներառյալ ցանկացած զեղչը և այլընտրանքային առաջարկը, Մրցութային երաշխիքը կամ Մրցույթին մասնակցելու հայտարարագիրը՝ եթե պահանջվում է, ինչպես նաև այլ մանրամասներ, որոնք Պատվիրատուն կհամարի անհրաժեշտ: Կուսումնասիրվեն և կգնահատվեն միայն մրցութային առաջարկների բացման ժամանակ կարդացված զեղչերն ու այլընտրանքային առաջարկները: Մրցույթին մասնակցելու նամակը և Աշխատանքների ծավալների ցուցակը պետք է ստորագրվեն առաջարկների բացմանը մասնակցող Պատվիրատուի ներկայացուցչի կողմից՝ **ՀՄՄ-ում սահմանված ձևով**: Մրցութային առաջարկների բացման ընթացքում Պատվիրատուն ոչ պետք է քննարկի որևէ առաջարկի առավելություն, ոչ էլ մերժի որևէ առաջարկ (բացառությամբ ուշացված առաջարկների՝ համաձայն ՀՄՄ 23.1 կետի):

25.4 Պատվիրատուն պետք է կազմի Մրցութային առաջարկների բացման արձանագրությունը՝ ներառելով առնվազն Մրցույթի մասնակցի անունը, արդյոք կա՞ն առաջարկի փոփոխություններ, ուղղումներ կամ հետ վերցնելու խնդրանքներ, Մրցութային առաջարկի գինը, գինն ըստ լոտերի (պայմանագրերի), այդ թվում ցանկացած զեղչերը և այլընտրանքները, մրցութային երաշխիքի առկայությունը կամ բացակայությունը՝ վերջինիս անհրաժեշտության դեպքում: Մրցութային առաջարկին ներկա գտնվող Մրցույթի մասնակցի ներկայացուցիչները պետք է ստորագրեն արձանագրությունը: Արձանագրությունում Մրցույթի մասնակցի ստորագրության բացակայությունը չեղյալ չի դարձնում արձանագրության բովանդակությունը: Արձանագրության պատճեն պետք է

փոխանցվի բոլոր Մրցույթի մասնակիցներին:

## Ե. Մրցութային առաջարկների գնահատումը և համեմատումը

**26. Գաղտնիություն**

26.1 Մրցութային առաջարկների գնահատման և պայմանագրի շնորհման առաջարկությունը չպետք է բացահայտվի Մրցույթի մասնակիցներին կամ որևէ այլ անձին, որը պաշտոնապես չի առնչվում գնահատման գործընթացին՝ մինչև Պայմանագիրը շնորհելու մասին տեղեկատվությունը չհաղորդվի մրցույթի բոլոր մասնակիցներին՝ ՀՄՄ 40 ենթակետի համաձայն:

26.2 Մրցույթի մասնակցի կողմից ցանկացած փորձ՝ ազդելու մրցութային առաջարկների գնահատման կամ Պայմանագրի շնորհման վերաբերյալ Պատվիրատուի որոշումների վրա, կարող է հանգեցնել տվյալ Մրցութային առաջարկի մերժմանը:

26.3 Անկախ ՀՄՄ 26.2 կետի դրույթներից, մրցույթի բացման պահից մինչ Պայմանագրի շնորհումը, եթե Մրցույթի մասնակիցը ցանկանում է կապվել Պատվիրատուի հետ մրցույթի գործընթացի հետ առնչվող որևէ հարցի առնչությամբ, նա պետք է դա անի գրավոր:

**27. Մրցութային առաջարկների պարզաբանում**

27.1 Մրցութային առաջարկների քննարկմանը, գնահատմանն ու համեմատմանն օժանդակելու համար, Պատվիրատուն՝ իր հայեցողությամբ, կարող է խնդրել ցանկացած Մրցույթի մասնակցից պարզաբանել իր Մրցութային առաջարկը: Մրցույթի մասնակցի կողմից ներկայացված ցանկացած պարզաբանում, որը չի համապատասխանում Պատվիրատուի պահանջին, չպետք է ուսումնասիրվի: Պարզաբանման խնդրանքը և պատասխանը պետք է լինեն գրավոր: Մրցութային առաջարկի գնի կամ բովանդակության որևէ փոփոխություն չի թույլատրվում, բացի այն դեպքերից, երբ պահանջվում է թվաբանական սխալների ուղղման հաստատում, որը հայտնաբերվել և ուղղվել է Մրցութային առաջարկների գնահատման ընթացքում Պատվիրատուի կողմից՝ համաձայն ՀՄՄ 31 կետի:

27.2 Եթե Մրցույթի մասնակիցը չի տրամադրում իր Մրցութային առաջարկին վերաբերող պարզաբանումներ մինչև Պատվիրատուի կողմից պարզաբանման պահանջի օրը և ժամը, նրա Մրցութային առաջարկը կարող է մերժվել:

| | | |
|---|---|---|
| **28.** | **Շեղումներ, վերապահումներ և բացթողումներ** | 28.1 Մրցութային առաջարկների գնահատման ընթացքում կիրառվում են հետևյալ սահմանումները, |

(ա) «շեղում»՝ նշանակում է շեղում Մրցութային փաստաթղթում նշված պահանջներից,

(բ) «վերապահում» նշանակում է՝ Մրցութային փաստաթղում նշված պահանջների նկատմամբ սահմանափակումներ կիրառելը կամ դրանք ամբողջությամբ ընդունելուց հրաժարվելը, և

գ) «բացթողում» նշանակում է՝ Մրցութային փաստաթղթերում պահանջվող տեղեկատվության մասամբ կամ ամբողջությամբ չներկայացնելը:

**29. Համապատասխանության որոշում**

29.1 Մրցութային առաջարկի համապատասխանության սահմանումը Պատվիրատուի կողմից պետք է հիմնված լինի հենց Մրցութային առաջարկի բովանդակության վրա, ինչպես ամրագրված է ՀՄՄ 11 կետում:

29.2 Էապես համապատասխանող է այն Մրցութային առաջարկը, որը բավարարում է Մրցութային փաստաթղթերի պահանջներին առանց նշանակալի շեղումների, վերապահումների կամ բացթողումների: Շեղումը, վերապահումը կամ բացթողումը նշանակալի են այն դեպքում, եթե՝

(ա) ընդունվելու դեպքում՝

i. նշանակալիորեն կազդեն Պայմանագրում նշված Աշխատանքների ծավալի, որակի կամ կատարման վրա, կամ

ii. նշանակալիորեն, Մրցութային փաստաթղթերին չհամապատասխանող կերպով, կսահմանափակեն Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի իրավունքները կամ Մրցույթի մասնակցի պարտավորությունները, կամ

(բ) ուղղելու դեպքում անարդարացիորեն կազդեն էապես համապատասխանող Մրցութային առաջարկներ ներկայացրած Մրցույթի այլ մասնակիցների մրցակցային դիրքի վրա:

29.3 Պատվիրատուն պետք է ուսումնասիրի ՀՄՄ 16 կետի (Տեխնիկական առաջարկ) համաձայն ներկայացված Մրցութային առաջարկի տեխնիկական կողմերը,

մասնավորապես, հաստատելու, որ VI բաժնում (Աշխատանքներին ներկայացվող պահանջներ) ներկայացված բոլոր պահանջները բավարարված են առանց նշանակալի շեղումների, վերապահումների կամ բացթողումների:

29.4 Եթե Մրցութային առաջարկն էապես չի համապատասխանում Մրցութային փաստաթղթում ներկայացված պահանջներին, այն պետք է մերժվի Պատվիրատուի կողմից, և հետագայում չի կարող դարձվել համապատասխանող՝ նշանակալի շեղումները, վերապահումները կամ բացթողումներն ուղղելու միջոցով:

**30. Անհամապատասխանություններ, սխալներ և բացթողումներ**

30.1 Եթե Մրցութային առաջարկն էապես համապատասխանող է, Պատվիրատուն կարող է անուշադրության մատնել Մրցութային առաջարկում առկա որևէ ոչ նշանակալի անհամապատասխանություն:

30.2 Եթե Մրցութային առաջարկն էապես համապատասխանող է, Պատվիրատուն կարող է պահանջել Մրցույթի մասնակցից սահմանված ժամանակահատվածում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կամ փաստաթղթեր՝ Մրցութային առաջարկում ոչ նշանակալի անհամապատասխանություններն ուղղելու նպատակով: Նման անհամապատասխանությունների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չպետք է որևէ կերպով վերաբերեն Մրցութային առաջարկի գնին: Մրցույթի մասնակցի կողմից տվյալ պահանջը չբավարարելու դեպքում նրա Մրցութային առաջարկը կարող է մերժվել:

30.3 Եթե Մրցութային առաջարկն էապես համապատասխանող է, Պատվիրատուն ուղղում է Մրցութային առաջարկի գնի ոչ նշանակալի անհամապատասխանությունները: Այդ իմաստով Մրցութային առաջարկի գինը կարող է ճշգրտվել միայն համեմատության նպատակներով՝ բացակայող կամ անհամապատասխան բաղադրիչի արժեքն արտացոլելու համար: Նման ճշգրտումը կատարվում է Բաժին III-ում (Գնահատման և որակավորման չափանիշներ) սահմանված մեթոդների կիրառությամբ:

**31. Թվաբանական սխալների ուղղում**

31.1 Եթե Մրցութային առաջարկն էապես համապատասխանող է, Պատվիրատուն ուղղում է թվաբանական սխալները հետևյալ կերպ.

(ա) միայն չափագրվող պայմանագրերի համար. եթե առկա է անհամապատասխանություն միավոր գնի և այդ միավոր

գնի ու քանակի բազմապատկումից ստացված ընդհանուր գումարի միջև, ապա գերակայում է միավոր գինը և ուղղվում ընդհանուր գումարը, եթե միայն՝ Պատվիրատուի կարծիքով, տեղի չի ունեցել ակնհայտ սխալ միավոր գնում բաժանարար կետը կամ ստորակետը սխալ տեղ դնելուց, որի դեպքում գերակայում է ընդհանուր գումարը և համապատասխանաբար ուղղվում է միավոր գինը,

(բ) եթե ընդհանուր գումարում առկա է որևէ սխալ, որը առաջացել է միջանկյալ գումարների սխալ հանումից կամ գումարումից, ապա գերակայում են միջանկյալ գումարները և ուղղվում է ընդհանուր գումարը,

(գ) եթե առկա է անհամապատասխանություն բառերի և թվերի միջև, ապա գերակայում է բառերով արտահայտված գումարը, եթե միայն բառերով արտահայտված գումարը չի վերաբերում թվաբանական սխալին, որի դեպքում գերակայում է թվերով արտահայտված գումարը՝ վերոհիշյալ (ա) և (բ) կետերին համապատասխան:

31.2 Մրցույթի մասնակիցներին կառաջարկվի ընդունել թվաբանական սխալների ուղղումը: ՀՄՄ 31.1 ենթակետի համաձայն արված ուղումների չընդունելու դեպքում Մրցութային առաջարկը մերժվում է:

**32. Փոխարկումը մեկ արժեքի**

ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ

**33. Նախապատվության զեղչ**

ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ

**34. Ենթակապալառուներ**

34.1 Քանի դեռ ՄՏԱ-ով այլ բան չի ասվում, Պատվիրատուն մտադիր չէ Աշխատանքների որևէ կոնկրետ մաս իրականացնել նախապես իր կողմից ընտրված ենթակապալառուների միջոցով:

34.2 Պատվիրատուն կարող է թույլ տալ որոշակի մասնագիտացված աշխատանքների կատարումը ենթակապալի միջոցով՝ համաձայն III բաժնի: Եթե Պատվիրատուն թույլ է տալիս աշխատանքների կատարումը ենթակապալի միջոցով, մասնագիտացված ենթակապալառուի փորձը պետք է հաշվի առնվի գնահատման ժամանակ: III բաժնում նկարագրված են ենթակապալառուների որակավորման չափանիշները:

34.3 Մրցույթի մասնակիցները ենթակապալով կարող են առաջարկել ենթակապալով իրականացնել պայմանագրերի ընդհանուր արժեքի այն մասը, կամ աշխատանքների այն

ծավալը, որը **սահմանված է ՀՄՄ-ում**:

**35. Մրցութային առաջարկների գնահատում**

35.1 Պատվիրատուն պետք է օգտագործի սույն կետում թվարկված չափանիշները և մեթոդաբանությունները: Գնահատման ոչ մի այլ չափանիշ կամ մեթոդաբանություն չի թույլատրվում

35.2 Մրցութային առաջարկը գնահատելու համար Պատվիրատուն հաշվի է առնում հետևյալը՝

(ա) մրցութային առաջարկի գինը, հանած Աշխատանքների ծավալների ցուցակի չնախատեսված գումարները և պահուստները՝ չափագրվող պայմանագրերի դեպքում, սակայն հաշվի առած օրավարձու աշխատանքը,[1] եթե այն գնանշված է մրցակցային կարգով,

(բ) գնի ճշգրտումը՝ թվաբանական սխալները ՀՄՄ 31.1 ենթակետի համաձայն հաշվի առնելու համար,

(գ) գնի ճշգրտումը՝ ՀՄՄ 14.4 ենթակետի համաձայն առաջարկված զեղչերը հաշվի առնելու համար,

(դ) չի կիրառվում,

(ե) գնի ճշգրտումը՝ անհամապատասխանությունները ՀՄՄ 30.3 ենթակետի համաձայն հաշվի առնելու համար,

(զ) Բաժին III-ում (Գնահատման և որակավորման չափանիշներ) նշված գնահատման բոլոր լրացուցիչ գործոնները:

35.3 Պայմանագրի պայմանների գնի ճշգրտման դրույթների ազդեցությունը Պայմանագրի իրականացման ժամկետի ընթացքում հաշվի չի առնվում Մրցութային առաջարկի գնահատման ժամանակ:

(դ) ցանկացած պահի պատժամիջոցներ կկիրառի ընկերության կամ անհատի նկատմամբ՝ Բանկի պատժամիջոցների ընթացակարգերի համաձայն[17], այդ թվում՝ հրապարակայնորեն հայտարարելով այդ ընկերությանը ոչ իրավասու որոշակի կամ անորոշ ժամկետով՝ (i) Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի համար, (ii) Բանկի ֆինանսավորմամբ ծրագրերի համար իրավասու հանդիսացող ընկերությունում որպես ենթախորհրդատու, մատակարարող կամ ծառայություններ տրամադրող նշանակվելու համար[18],

(ե) կպահանջի, որ մրցութային փաստաթղթերում և Բանկի փոխառություններից ֆինանսավորվող պայմանագրերում ներառվի մի դրույթ, համաձայն որը մրցույթի մասնակիցները, մատակարարները և կապալառուները, ինչպես նաև նրանց ենթախորհրդատուները, գործակալները, անձնակազմը, խորհրդատուները, ծառայություններմատուցողները, մատակարարներըթույլտանԲանկինզննելառաջարկիներկայացմաննպայմանագրիկատարմանհետառնչվողբոլորհաշիվները, հաշվետվություններընայլփաստաթղթերը, ինչպեսնաևիրականացնելդրանցաուդիտ՝ Բանկիկողմիցնշանակվածաուդիտորներիկողմից:»

---

[17]Ընկերությունը կամ անհատը կարող են հայտարարվել ոչ իրավասու Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի շնորհման համար՝ (i) Բանկի պատժամիջոցների ընթացակարգերի համաձայն գործի քննության ավարտից հետո, այդ թվում, ի թիվս այլոց՝ փոխադարձ կասեցում այլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համաձայնեցված կերպով, Խարդախության և կաշառակերության համար Համաշխարհային բանկի խմբի պատժամիջոցների վարչական կորպորատիվ ընթացակարգերի միջոցով, (ii) ժամանակավոր կասեցման, կամ ընթացքի մեջ գտնվող գործի քննության կապակցությամբ վաղաժամ ժամանակավոր կասեցման արդյունքում: Տես 12 տողատակը և սույն Ուղեցույցների 1 Հավելվածի 8 կետը:

[18] Նշանակված ենթախորհրդատու, մատակարարող կամ ծառայություններ մատուցող են համարվում նրանք, որոնք (i) ընդգրկված են խորհրդատուի կողմից իր առաջարկում, քանի որ դա ապահովում է կոնկրետ և վճռորոշ փորձ ու տեխնոլոգիական գիտելիքներ, որոնք հաշվի են առնվում հատուկ ծառայությունների մասով խորհրդատուի առաջարկի տեխնիկական գնահատման ժամանակ, (ii) նշանակվել են Փոխառուի կողմից:

# Բաժին X. Պայմանագրի ձևեր

Սույն բաժինը պարունակում է ձևեր, որոնք լրացվելուց հետո կկազմեն Պայմանագրի մաս: Կատարողական երաշխիքի և կանխավճարի երաշխիքի ձևերը՝ պահանջված լինելու դեպքում, լրացվում են միայն հաղթող մասնակցի կողմից պայմանագրի շնորհումից հետո:

**Ձևերի աղյուսակ**


**Ընդունման նամակ**.......................................................................... Error! Bookmark not defined.

**Պայմանագրի համաձայնագիր**........................................................................................ 104

**Կատարման երաշխիք (բանկային երաշխիք)**...................................................................... 106

**Կանխավճարի երաշխիք**.............................................................................................. 107

# Ընդունման նամակ

[ամսաթիվ]

Ում՝ [*Կապալառուի անունը և հասցեն*]

Խնդրո առարկան՝ [*Պայմանագրի շնորհման ծանուցման համարը*]

Սույնով տեղեկացնում ենք, որ Ձեր [*ամսաթիվ*] Մրցութային առաջարկը՝ [*պայմանագրի անվանումը և նույնականացման համարը, ինչպես նշված է Մրցութային առաջարկի ՊՀՊ-ում*] աշխատանքների իրականացման համար հաստատվում է մեր կազմակերպության կողմից [*գումարը թվերով և տառերով և արժույթը*] Պայմանագրի ընդունված գումարով՝ ուղղված և փոփոխված համաձայն «Հրահանգներ Մրցույթի մասնակիցներին» բաժնի:

Պայմանագրի դրույթների համաձայն, Դուք պետք է 28 օրվա ընթացքում ներկայացնեք կատարողական երաշխիք, օգտագործելով կատարողական երաշխիքի ձևը, որը բերված է Մրցութային փաստաթղթերի Բաժին IX-ում (Պայմանագրի ձևեր):

[*Ընտրեք հետևյալ ձևակերպումներից մեկը*՝]

Մենք համաձայն ենք, որ [*Մրցույթի մասնակցի կողմից առաջարկված արբիտրի անունը*] նշանակվի որպես արբիտր:

[*կամ*]

Մենք համաձայն չենք, որ [*Մրցույթի մասնակցի կողմից առաջարկված արբիտրիանունը*] նշանակվի որպես Արբիտր, և ուղարկելով Ընդունման նամակի պատճենը [*Լիազոր մարմնի անունը*], սույնով խնդրում ենք վերջինիս նշանակել Արբիտր՝համաձայնՀՄՄ 43.1 ևՊԸՊ 23.1 կետերի:

Լիազորված ստորագրությունը՝

Ստորագրողի անունը և պաշտոնը՝

Ընկերությ անանվանումը՝

Առդիր՝Պայմանագրի համաձայնագիր

**Պայմանագրի համաձայնագիր**

ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կազմվել՝ 2016թ.....-ին [Պատվիրատուի անունը]-ի (այսուհետ՝ «Պատվիրատու») մի կողմից և [Կապալառուի անունը] (այսուհետ՝ «Կապալառու») մյուս կողմից միջև:

*[Եթե Կապալառուն համատեղ ձեռնարկությունում է, վերոնշյալ մասը պետք է ձևափոխվի հետևյալ կերպ.* « ՍՈՒՅՆՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կազմվել՝ 2016թ.....-ին մի կողմից՝[Պատվիրատուի անունը]-ի (այսուհետ՝ «Պատվիրատու»), մյուս կողմից՝ հետևյալ կազմակերպություններից կազմված Համատեղ ձեռնարկության միջև՝ *[կազմակերպության անունը],[կազմակերպության անունը] ...* (այսուհետ՝ «Կապալառու»), որոնք բոլորը համապարտ պատասխանատվություն են կրում Պատվիրատուի առջև սույն Պայմանագրի բոլոր պարտավորությունների համար:]

ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Պատվիրատուն ցանկանում է, որ [Պայմանագրի անունը] Աշխատանքներն իրականացվեն Կապալառուի կողմից և ընդունել է Կապալառուի Մրցութային առաջարկն այդ Աշխատանքներն իրականացնելու ու ավարտելու, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր թերությունները վերացնելու համար,

Պատվիրատուն և Կապալառուն համաձայնվում են հետևյալի շուրջ,՝

1. Սույն Համաձայնագրի բառերն ու արտահայտություններն ունեն նույն իմաստը, որը դրանց վերագրվել է Պայմանագրի փաստաթղթերում,
2. Հետևյալ փաստաթղթերը պետք է կազմվեն, կարդացվեն ու մեկնաբանվեն որպես սույն Համաձայնագրի մաս: Սույն Համաձայնագիրը գերակայում է Պայմանագրի մնացած փաստաթղթերի նկատմամբ:
   (ա) Համաձայնագիր
   (բ) Ընդունմաննամակ
   (գ) Կապալառուի մրցութային առաջարկ
   (դ) Պայմանագրի հատուկ պայմաններ
   (ե) Պայմանագրի ընդհանուր պայմաններ, այդ թվում հավելվածներ
   (զ) Մասնագրեր
   (է) Գծագրեր
   (ը) Աշխատանքների ծավալների ցուցակ
   (թ) ՊՀՊ-ումթվարկած այլ փաստաթղթեր, որոնք հանդիսանում են Պայմանագրի մաս

3.Այս Համաձայնագրով սահմանված ձևով Պատվիրատուի կողմից Կապալառուին արվելիք վճարումների դիմաց հետ, սույնով Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի առջև իրականացնել և ավարտել Աշխատանքները, ինչպես նաև վերացնել դրանց թերությունները՝ բոլոր առումներով Պայմանագրի դրույթների համաձայն:

4.Սույնով Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կապալառուին՝ Աշխատանքների կատարման ու ավարտման, ինչպես նաև դրանց թերությունների վերացմանդիմաց, Պայմանագրի գինը կամ որևէ այլ գումար, որը ենթակա կլինի վճարման Պայմանագրի դրույթների համաձայն՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում և ձևով:

ԻՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ դրա, Պայմանագրի կողմերը կնքում են սույն Համաձայնագիրը **Հայաստանի Հանրապետության** օրենքների համաձայն՝ վերոնշյալ օրը, ամսին և տարում:

| | |
|---|---|
| ***Պատվիրատուի անունից՝*** | *[ԿապալառուիկամՀամատեղձեռնարկման (ՀՁ) անունից՝ նշելԿապալառուիկամՀՁանունը]* |
| **“Առողջապահական ԾԻԳ” ՊՀ** | |
| Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0051, Կոմիտասի 49/4 | Հասցե՝ ........................... |
| ՀՎՀՀ | ՀՎՀՀ ............................. |
| Հ/Հ | Հ/Հ .............................. |
| ՀՀ ՖՆ գանձապետարան | Բանկի անվանումը՝ |
| ________________________________ | ________________________________ |
| **Տնօրենի պաշտոնակատար** | *[Կապալառուիլիազորվածներկայացուցիչ – անունևստորագրություն]* *[ՀՁ-իդեպքումպետքէստորագրենբոլորանդամները, օրինակ՝* |
| | *Անդամիանունըևհասցեն* |
| | *Լիազորվածներկայացուցիչ]* |
| | *Անդամիանունըևհասցեն* |
| | *Լիազորվածներկայացուցիչ]* |

# Կատարման երաշխիք (ցպահանջ երաշխիք)
## (Բանկային երաշխիք)

*[Երաշխավորողի ձևաթղթով նամակ կամ SWIFT կոդը]*
***Շահառու՝*** *[Գնորդի անուն և հասցե]*
***Ամսաթիվ՝*** *[տրամադրման ամսաթիվը]*
***ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ No.*** *[Երաշխավորողի համարը]*
***Երաշխավորող:*** *[թողարկողի անվանումը և հասցեն, եթե նշված չէ ձևաթղթում]*

Մեզ տեղեկացրել են, որ __________________ *[Կապալառուի անունը (համատեղ ձեռնարկության դեպքում պետք է լինի համատեղ ձեռնարկության անունը]* (այսուհետ՝ «Մրցույթի մասնակից») *[ամսաթիվ]* Շահառուի հետ կնքել է *[պայմանագրի համարը և Աշխատանքների հակիրճ նկարագրությունը]* (այսուհետ՝ «Պայմանագիր) կատարելու համար:

Ավելին, գիտակցում ենք, որ համաձայն Պայմանագրի պայմանների, պահանջվում է կատարման երաշխիք:

Մրցույթի մասնակցի խնդրանքով մենք՝ որպես Երաշխավոր, սույնով անչեղարկելիորեն պարտավորվում ենք՝ Շահառուին վճարել ցանկացած գումար/ներ, որոնք չեն գերազանցի *[գրել գումարը(ները[1]) թվերով և բառերով]* այն արժույթով, որով ենթակա է վճարման Պայմանագրի գինը, Շահառուի պահանջի դեպքում, որը ուղեկցվում է Շահառուի տեղեկանքով, պահանջը ինքնին կամ ուղեկցվող առանձին ստորագրված կամ պահանջը նշող փաստաթղթով, որով կնշվի, որ Դիմողը Պայմանագրի շրջանակում չի կատարել պայմանագրային իր պարտավորություն(ներ)ը՝ առանց փաստարկների, կամ Ձեր պահանջի կամ պահանջով ներկայացվող գումարի համար հիմնավորում կամ պատճառաբանություն ներկայացնելու:

Այս երաշխիքի ժամկետը կլրանա ոչ ուշ քան *[գրել օրը], [ամիսը], [տարին]* [2], և դրա շրջանակներում ցանկացած վճարման պահանջ պետք է ներկայացվի վավերության ժամկետի ավարտից ոչ ուշ:

Սույն Երաշխիքը ենթակա է Ցպահանջ երաշխիքների միասնական կանոններին (URDG) 2010, ICC հրապարակում No. 758, բացառությամբ հոդված 15 (ա) ենթակետով հիմնավորող փաստաթուղթը չի ներառվում:

________________________
*[ստորագրություն(ներ)]*

***Ծանոթություն. շեղագիր ամբողջ տեքստը նախատեսված է սույն ձևը լրացնելու համար է և պետք է ջնջել վերջնական փաստաթղթից:***

---

*[1] Երաշխավորը պետք է գրի այն գումարը, որը ներկայացնում է Ընդունված պայմանագրային գումարի տոկոսը, որը նշված է Ընդունման նամակում, և նշվում է կամ Պայմանագրի արժույթ(ներ)ով կամ Շահառուի համար ազատ փոխարկելի արժույթով:*

*[2] Գրել ամսաթիվը ՊԸՊ 18.4 դրույթում նկարագրված ավարտի ամսաթվերից քսանութ օր հետո: Գնորդը պետք է նշի, որ Պայմանագրի իրականացման այդ ժամկետի երարաձգման դեպքում Գնորդը պետք է Երաշխավորից խնդրի այդ երաշխիքի երկարաձգում: Նման խնդրանքը պետք է լինի գրավոր և պետք է կատարվի նախքան երաշխիքում նշված գործողության ժամկետի ավարտի օրը: Սույն երաշխիքը պատրաստելիս Գնորդը կարող է հետևյալ տեքստը հավելել ձևին՝ նախավերջին պարբերության վերջում. □Երաշխավորը համաձայն է սույն երաշխիքը երկարաձգել մեկ անգամ՝ {վեց ամիսը} {մեկ տարին} չգերազանցող ժամկետով՝ ի պատասխան Շահառուի՝ այդ երկարաձգման գրավոր խնդրանքի-դիմումի, որը պետք է ներկայացվի Երաշխավորին մինչ երաշխիքի ժամկետի ավարտը□:*

# Կանխավճարի երաշխիք

*[Երաշխավորի բլանկկամ SWIFT նույնականացման կոդ]*
**Շահառու**՝*[Գնորդի անուն և հասցե]*
**Ամսաթիվ**՝ *[տրամադրման ամսաթիվը]*
**ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԵՐԱՇԽԻՔ No.** *[Երաշխավորողի համարը]*
**Երաշխավորող.** *[թողարկողի անունը, հասցենևվայրը եթե նշվածչէ ձևաթղթում ]*

Մեզ տեղեկացրել են, որ ____________________ *[Կապալառուի անունը (համատեղ ձեռնարկության դեպքում պետք է լինի համատեղ ձեռնարկության անունը]* (այսուհետ՝ «Մրցույթի մասնակից») *[ամսաթիվ]* Շահառուի հետ կնքել է *[պայմանագրի համարը և Աշխատանքների հակիրճ նկարագրությունը]* (այսուհետ՝ «Պայմանագիր) կատարելու համար:

Ավելին, գտակցում ենք,, որ, համաձայն Պայմանագրի պայմանների, պահանջվում է կանխավճար *[գրել գումարը թվերով]* () *[գրել գումարը բառերով]* Պայմանագրի արժույթով, որը պետք է կատարել կանխավճարի երաշխիքի դիմաց*:*

Մրցույթի մասնակցի խնդրանքով մենք՝ հանդիսանալով երաշխավոր, սույնով պարտավորվում ենք՝ անվերապահորեն Շահառուին վճարել *[նշել գումարը բառերով և թվերով]*[1] Շահառուի պահանջի դեպքում, որը ուղեկցվում է Շահառուի տեղեկանքով, պահանջը ինքնին կամ ուղեկցվող առանձին ստորագրված կամ պահանջը նշող փաստաթղթով, որով կնշվի, որ Դիմողը

(ա) օգտագործել է կանխավճարը ոչ Աշխատանքները մոբիլիզացնելու ծախսերի համար, կամ
(բ) չի մարել կանխավճարը Պայմանագրի դրույթների համաձայն՝ նշելով Մրցույթի մասնակցի կողմից չմարված գումարը:

Սույն երաշխիքով պահանջը կարող է ներկայացվել որպես Շահառուի բանկի վկայական Երաշխավորողին՝ նշելով, որ վերոնշյալ կանխավճարը փոխանցվել է Դիմողին՝ նրա հաշվեհամարին *[գրել համարը] [գրել Դիմողի բանկի անունը և հասցեն]:*

Սույն երաշխիքով սահմանված առավելագույն գումարն աճողաբար կնվազեցվի այն գումարի չափով, որքանով Կապալառուն կմարի կանխավճարը՝ համաձայն միջանկյալ վճարման հայտարարագրերի կամ վկայագրերի, որոնց պատճենները կներկայացվեն մեզ: Սույն երաշխիքը կդադարի գործել՝ ամենաուշը, մեր կողմից աշխատանքների ընդունման վճարման վկայագիրը ստանալուն պես, որում նշված կլինի վճարման համար վկայագրված է Պայմանագրի ընդունված գումարի իննսուն (90) տոկոսը՝ հանած պայմանական գումարները, կամ*[ամսաթիվը],*[2] որը որ լինի ավելի վաղ: Համապատասխանաբար, սույն երաշխիքով ցանկացած վճարման պահանջ պետք է ներկայացվի վերոնշյալ ամսաթվից ոչ ուշ:

---

[1]Երաշխավորը պետք է նշի Պայմանագրի ընդունված գումարը տոկոսը, որը սահմանված է Ընդունման նամակով՝ հանած պայմանական գումարները (առկայության դեպքում)՝ Պայմանագրի արժույթով:

Սույնէրաշխիքըկարգավորվումէ « Uniform Rules for Demand Guarantees (URDG) 2010 Revision, ICC Publication No. 758» դրույթների և պահանջների համաձայն, բացառությամբ հոդված 15(a)-ի օժանդակ հայտարարության:

*[Բանկի կնիքը և ստորագրություններ]*

***{Ծանոթություն. Շեղտառերով գրված ողջ տեքստը և տողատակերը բերված են ուղղություն տալու համար և պետք է հանվեն վերջնական տեքստից}***

[2] Նշեք ավարտման ակնկալվող ամսաթիվը: Պատվիրատուն պետք է ուշադրություն դարձնի նրա վրա, որ Պայմանագրի երկարացման դեպքում պետք է երաշխավորից պահանջի երաշխիքի երկարացում: Պահանջը պետք է ներկայացվի գրավոր՝ մինչև երաշխիքով սահմանված ժամկետի ավարտը: Երաշխիքը պատրաստելիս Պատվիրատուն կարող է պարբերության վերջում ավելացնել հետևյալ տեքստը՝ Երաշխավորը համաձայն է մեկ անգամ երկարացնել սույն երաշխիքը վեց ամիսը չգերազանցող ժամկետով՝ Շահառուի կողմից նման խնդրանք գրավոր ստանալու դեպքում: Այդ խնդրանքը կներկայացվի մինչև երաշխիքի վավերության ժամկետի ավարտը: «Երաշխավորը համաձայն է մեկ անգամ երկարացնել սույն երաշխիքը [վեց ամիսն, մեկ տարի]՝ Շահառուի կողմից նման խնդրանք գրավոր ստանալու դեպքում: Այդ խնդրանքը կներկայացվի մինչև երաշխիքի վավերության ժամկետի ավարտը»:

Մրցութային փաստաթղթեր

Փոքր ծավալի աշխատանքների գնում

Ազգային մրցութային սակարկություններ (ԱՄՍ)

# Հատոր 2

# «ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ վերանորոգում»

ԱՄՍ No՝ CR4/NCB/B-W/005-16

Ծրագիր՝«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում վարկային ծրագիր»

Փոխառություն No.՝ 5222-ԱՄ

Պատվիրատու՝ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Թողարկվել է՝ 2016թ, ապրիլի 11

# Հատոր 2

*1.Բաժին II ՝Մրցույթի տվյալների աղյուսակ (ՄՏԱ)*

*2.Բաժին III ՝ Գնահատման և որակավորման չափանիշներ*

*3. Բաժին VII ՝ Աշխատանքներին ներկայացվող պահանջներ*

*4. Բաժին IX ՝ Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ)*

*5. Առաջարկներ ներկայացնելու հրավեր (ԱՆՀ)*

# Բաժին II ՝ Մրցութային տվյալների աղյուսակ (ՄՏԱ)

## Ա.Ներածություն

| | |
|---|---|
| ՀՄՄ 1.1 | Առաջարկ ներկայացնելու համար՝CR4/NCB/B-W/005-16<br>Պատվիրատու՝ՀՀ **առողջապահության նախարարության “Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ** |
| ՀՄՄ 1.1 | Մրցութային գործընթացի անուն՝ **"ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ վերանորոգում"**<br>Մրցութային գործընթացի նույնականացման համար՝ CR4/NCB/B-W/005-16<br>Սույն մրցութային գործընթացի լոտերի թիվը և համարները՝ **մեկ** |
| ՀՄՄ 2.1 | Փոխառու՝ **Հայաստանի Հանրապետություն** |
| ՀՄՄ 2.1 | Ծրագրի անուն՝ **« Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում վարկային ծրագիր»** |
| ՀՄՄ 2.1 | Փոխառության գումարը՝ **45 մլն ԱՄՆ դոլար** |
| ՀՄՄ 4.1 | ՀՁ-ում առավելագույն անդամների թիվը՝2 (երկու) |
| ՀՄՄ 4.4 | Արգելված ընկերությունների և անձանց ցանկի հետ կարելի է ծանոթանալ Բանկի հետևյալ արտաքին կայքում՝ www.worldbank.org/debarr |

## Բ.Մրցութային փաստաթղթեր

| | |
|---|---|
| ՀՄՄ 7.1 | **Միայն պարզաբանումների համար** Պատվիրատուի հասցեն է՝<br>Ում՝ **Պրն. Հովակիմ Պողոսյան (Գնումների մասնագետ)**<br>Հասցե՝ **Կոմիտասի 49/4**<br>Հարկ/Սենյակ՝ **5-րդ հարկ, (գնումների բաժին)**<br>Քաղաք՝ **Երևան**<br>Երկիր՝**Հայաստանի Հանրապետություն**<br>Հեռախոս՝(+374 10) 297-536, (+374 10) 297-537, (+374 10) 297-538<br>Էլ. Փոստիհասցեն՝ **info@healthpiu.am; procurement@healthpiu.am**<br>ՊարզաբանումներիխնդրանքովհարցումներըպետքէստացվենՊատվիրատուի կողմիցոչուշ, քանառաջարկների ներկայացման վերջնաժամկետից **7 օր առաջ:** |
| ՀՄՄ 7.1 | Կայք էջ՝ www.gnumner.am |

| | |
|---|---|
| ՀՄՄ 7.4 | Նախամրցութային հանդիպում **տեղի չի ունենալու**<br>Ժամը՝ **կիրառելի չէ**<br>Տեղը՝ **կիրառելի չէ**<br>Պատվիրատուն **չի կազմակերպելու** Շին. Հրապարակի այցելություն: |

## Բ.Մրցութայինառաջարկներիպատրաստում

| | |
|---|---|
| ՀՄՄ 10.1 | Մրցույթի լեզուն՝ **հայերեն**<br>Ողջ թղթակցությունը պետք է լինի **հայերեն** լեզվով:<br>Օժանդակ փաստաթղթերի և տպված գրականության թարգմանության լեզուն նշված է վերը: |
| ՀՄՄ 11.1 (բ) | Մրցութային առաջարկի հետ պետք է ներկայացվեն հետևյալ աղյուսակները<br>- **Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակ (Ծավալաթերթ)** |
| ՀՄՄ 11.1 (ը) | Մրցութային առաջարկի հետ պետք է ներկայացվեն հետևյալ լրացուցիչ փաստաթղթերը՝<br>*-Տեղեկանք պետ.բյուջեի և սոց.ապահովագրության պետական հիմնադրամի հանդեպ պարտավորություն չունենալու մասին (տեղեկանքը պետք է թողարկված լինի ոչ շուտ, քան 15 օր առաջարկը ներկայացնելու վերջնաժամկետից),*<br>*- Հայտատուն պետք է ունենա քաղաքաշինության նախարարության կողմից տրված հետևյալ լիցենզիաները՝ համապատասխան շինարարական ոլորտներում.*<br>• *Բնակելի, հասարակական և արտադրական*<br>• *Հիդրոտեխնիկական*<br>• *Էներգետիկ*<br>• *Կապի*<br>• *Տրանսպորտի* |
| ՀՄՄ 13.1 | Այլընտրանքային առաջարկներ **չեն թույլատրվում.** |
| ՀՄՄ 13.2 | Այլընտրանքային ավարտման ժամկետներ **չեն թույլատրվում.**<br>Այլընտրանքային ավարտման ժամկետներ թույլատրելու դեպքում դրանք կգնահատվեն Բաժին III (Գնահատման և որակավորման չափանիշներ) սահմանված մեթոդի համաձայն. |
| ՀՄՄ 13.4 | Այլընտրանքային տեխնիկական լուծումներ թույլատրվում են Աշխատանքների հետևյալ մասերի համար՝**կիրառելի չէ:**<br>Այլընտրանքային տեխնիկական լուծումներ ավարտման ժամկետներ |

| | |
|---|---|
| | թույլատրելու դեպքում դրանք կգնահատվեն Բաժին III (Գնահատման և որակավորման չափանիշներ) սահմանված մեթոդի համաձայն: |
| ՀՄՄ 14.5 | Մրցույթի մասնակցի կողմից առաջարկված գները **պետք է ճշգրտվեն**Պայմանագրի կատարման ժամանակ: Եթե գները ճշգրտվելու են հետևաբար. |

## Աղյուսակ 1

Գների ճշգրտման տվյալների աղյուսակ

| **Ինդեքսի կոդը** | **Ինդեքսի նկարագիր** | **Ինդեքսի աղբյուրը** | **Բազային արժեք և ամսաթիվ** | **Մասնակցի առաջարկվող մասնաբաժինը** |
|---|---|---|---|---|
| — | Չճշգրտվող | — | — | A: 0.15 |
| Io | Ամրան: A500 C, AIII-Φ=8մմ | ՀՀ ֆինանսների նախարարության <<Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից հրատարակվող ՀՀ պետական կարիքների համար շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների ինֆորմացիոն տեղեկագիր | Արտադրամիջոցի գերակշռող ինդեքսները Մրցութային առաջարկների բացումից 28 օր առաջվա դրությամբ | B: 0.45-0.55 |
| Mo | Ծանր բետոն B 25 դասի | ՀՀ ֆինանսների նախարարության <<Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից հրատարակվող ՀՀ պետական կարիքների համար շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների ինֆորմացիոն տեղեկագիր | Արտադրամիջոցի գերակշռող ինդեքսները Մրցութային առաջարկների բացումից 28 օր առաջվա դրությամբ | C: 0.30-0.40 |
| | | | **Ընդամենը** | **1.00** |

| | |
|---|---|
| | *Տվյալ բանաձևը օգտագործվելու է գների ճշգրտման համար:*<br><br>**$P_c$= $A_c$ + $B_c$*Im/Io+ $C_c$*Mm/Mo**<br><br>*Որտեղ:*<br>• *Pc-ն վճարման ենթակա Պայմանագրի գումարի ճշգրտման գործակիցն է: Ac-ն ներկայացնում է վճարվելիք գումարի չճշգրտվող մասը, իսկ Bc-ն և Cc-ն՝ճշգրտվող մասը (ՀՀ դրամով):*<br>• *Im-ն և Mm-ն ինդեքսի արժեքն է, համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-իկողմից վերջին հրապարակված ինֆորմացիոն տեղեկագրի՝ հաշիվ-ապրանքագրի ներկայացման օրվա դրությամբ (ՀՀ դրամով):*<br>• *Io-ն և Mo-ն՝վճարման ենթակա արտադրամիջոցների գերակայող ինդեքսն է մրցութային առաջարկների բացումից 28 օրառաջ (ՀՀ դրամով):*<br><br>(1) 15 տոկոսը չճշգրտվող տարրն է (գործակից A)<br>(2) 85 տոկոսը ճշգրտվող տարրն (գործակից B+C).<br><br>Գործակից A-ն պետք է լինի պայմանագրի արժեքի 15 տոկոսը: Հայտատուի կողմից ներկայացված գործակից B+C-ն պետք է լինի աղյուսակում նշված սահմաններում: Համապատասխանաբար՝ A+B+C-ն պետք է հավասար լինի 100 և բանաձևը կդառնա հետևյալը.<br><br>***P (ճշգրտման գործոն) = 0.15+ B*Im/Io+ C*Mm/Mo***<br><br>**Մրցույթի մասնակիցը պետք է լրացնի իր կողմից առաջարկվող կշիռները:*<br>*Շեղ տառերով գրված տեքստը բերված է որպես ուղեցույց, և մրցույթի մասնակիցը պետք է ջնջի այն:* |
| **ՀՄՄ 15.1** | Մրցույթի մասնակիցը պետք է առաջարկի գները **հայկական դրամով (ՀՀԴ):** |
| **ՀՄՄ 18.1** | Մրցութային առաջարկի վավերության ժամկետը **91 (իննսուն մեկ) օր է**՝ առաջարկի ներկայացման սահմանված օրվանից հետո: |
| **ՀՄՄ 18.3 (ա)** | Պայմանագրի գինը պետք է ճշգրտվի հետևյալ գործակցով. **չի կիրառվում** |
| **ՀՄՄ 19.1** | Մրցութային առաջարկի երաշխիք **պահանջվում է:** Մրցույթի ապահովության |

| | |
|---|---|
| | հայտարարագիր **չի պահանջվում:**<br>Եթե Մրցութային առաջարկի երաշխիք **պահանջվում է,** երաշխիքի գումարը և արժույթը հետևյալն են՝<br>**29,800,000 ՀՀԴ** կամ համարժեք գումար ազատ փոխարկելի արտարժույթով: |
| **ՀՄՄ 19.3 (բ) (գ)** | **Կիրառելի չէ** |
| **ՀՄՄ 19.3 (դ)** | Ընդունելի երաշխիքների այլ տեսակներ՝**Ոչ** |
| **ՀՄՄ 19.9** | **Կիրառելի չէ** |
| **ՀՄՄ 20.1** | Ի լրումն մրցութային առաջարկի բնօրինակի, պետք է ներկայացվի **2 (երկու) պատճեն:** |
| **ՀՄՄ 20.2** | Մրցույթի մասնակցի անունից ստորագրելու գրավոր լիազորագիրը պետք է պարունակի. ***Նույն լիազորագիրը պետք է լինի գրավոր, ընկերության տնօրենի կամ նախագահի անունից և կցված լինի մրցութային առաջարկին:*** |

## Դ.Մրցութային առաջարկների բացում

| | |
|---|---|
| **ՀՄՄ 22.1** | Մրցույթի մասնակիցները **չեն կարող** ներկայացնել իրենց առաջարկներն էլեկտրոնային եղանակով: Եթե էլեկտրոնային եղանակով Հայտատերի ներկայացումը թույլատրելի է համաձայն ՀՄՄ 21.1-ի ապա հայտերի էլեկտրոնային ներկայացման ընթացակարգը կլինի հետևյալը՝ **Կիրառելի չէ:** |
| **ՀՄՄ 22.1** | **<u>Միայն մրցութային առաջարկի ներկայացման նպատակով</u>** Պատվիրատուի հասցեն է՝<br>Ում՝ **Պրն. Նելսոն Զուլոյան, ԱԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար**<br>Հասցե՝ **Կոմիտասի պող. 49/4**<br>Հարկ/Սենյակ՝ **5-րդ հարկ, (գնումների բաժին)**<br>Քաղաք և Երկիր՝ **Երևան, Հայաստանի Հանրապետություն**<br>**Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է՝**<br>Ամսաթիվ՝ **2016թ. Մայիսի 10-ին,**<br>Ժամը՝ **10:00 Երևանի ժամով**<br>Եթե հայտատուներն ունենան հայտերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորություն, հայտերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ընթացակարգերը պետք է լինեն՝ **Չի** |

| | |
|---|---|
| | կիրառվում: |
| ՀՄՄ 25.1 | Առաջարկների բացումը տեղի կունենա<br><br>Հասցե՝ **Կոմիտասի պող. 49/4**<br><br>Հարկ/Սենյակ՝ **5-րդ հարկ, (գնումների բաժին)**<br><br>Քաղաք և Երկիր՝ **Երևան, Հայաստանի Հանրապետություն**<br><br>Ամսաթիվ և Ժամը՝ **2016թ. Մայիսի 10-ին, ժամ՝ 10:05 (Երևանի ժամով)** |
| ՀՄՄ 25.3 | Մրցութային առաջարկի նամակը և գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակը պետք է ստորագրվեն Պատվիրատուի մրցութային առաջարկների բացում իրականացնող **մեկ** ներկայացուցչի կողմից.<br><br>**Գնահատող հանձնաժողովի անդամը կստորագրի յուրաքանչյուր ներկայացված առաջարկի Մրցութային առաջարկի նամակի և գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակի բոլոր էջերը:** |

## Ե.Մրցութային առաջարկների գնահատում և համեմատում

| | |
|---|---|
| ՀՄՄ 34.1 | Այս պահին Պատվիրատուն **չի նախատեսում** իրականացնել Աշխատանքների կոնկրետ մասեր նախապես ընտրված ենթակապալառուներով: |
| ՀՄՄ 34.3 | Կապալառուի կողմից ենթակապալի առաջարկվող աշխատանքներ.<br>Ենթակապալով թույլատրվում է առավելագույնը պայմանագրի գումարի **20% տոկոսը:**<br>(բ) Մրցույթի այն մասնակիցները, որոնք պլանավորում են ենթակապալով տալ աշխատանքների ընդհանուր ծավալի 10% տոկոսից ավելին, պետք է Մրցութային առաջարկի ներկայացման ձևում նշեն այն գործողությունը (ները) կամ աշխատանքների ծավալը, որոնք նրանք պատրաստվում են տալ ենթակապալի, ինչպես նաև ենթակապալառուների որակավորման և փորձի մանրամասները: Ենթակապալառուների որակավորումները և փորձը պետք է համապատասխանեն ենթակապալով տրվող աշխատանքի համար պահանջվող նվազագույն չափանիշներին: Այն ենթակապալառուներին, որոնք չեն համապատասխանի նվազագույն որակավորման չափանիշներին, չի թույլատրվի մասնակցել:<br>(գ) Ենթակապալառուների որակավորումները և փորձը հաշվի չեն առնվում Մրցույթի մասնակցի գնահատման ժամանակ: Մրցույթի մասնակիցն ինքը (առանց հաշվի առնելու ենթակապալառուիորակավորումները և փորձը) պետք է համապատասխանի որակավորման չափանիշներին: |

## Զ.Պայմանագրի շնորհում

| | |
|---|---|
| **ՀՄՄ 43.1** | Պատվիրատուի կողմից որպես Արբիտր է նշանակվում **պրն. Վահե Ստեփանյանը**:<br><br>Արբիտրի ժամավճարն է. **25,000 ՀՀ դրամ**<br><br>Արբիտրի կենսագրական տվյալները հետևյալն են.<br><br>*Վահե Վարդանի Ստեփանյան (ծնվ. 1948թ., 6 ապրիլի ք. Ստեփանակերտ, ԼՂԻՄ), 1972թթ. - սովորել և ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, 1973-1977թթ. - ավարտել է Խորհրդային օրենսդրության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան: Իրավաբանական գիտությունների թեկնածու, 1988թ. - ավարտել է Խորհրդային օրենսդրության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի դոկտորանտուրան: Իրավաբանական գիտությունների դոկտոր, 2006-2011թթ. - Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկավար, 2011թ. ապրիլից - Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչ:* |

# Բաժին III –Գնահատման և որակավորման չափանիշներ

Այսբաժնումներկայացվածենբոլորայնչափանիշները, որոնքՊատվիրատունպետքէկիրառիՄրցութային առաջարկներըգնահատելիսևՄրցույթի մասնակիցներինորակավորելիս, եթեմրցութայինգործընթացին չի նախորդել նախաորակավորում, և կիրառվում է հետ-որակավորման գործընթաց:ՀամաձայնՀՄՄ 35 ևՀՄՄ 37կետերի, որևէայլմեթոդ, չափանիշկգործոն չի կարելի օգտագործել: Մրցույթի մասնակիցըպետքէտրամադրիՄրցույթի ձևաթղթերում ներառված ձևերով պահանջվողողջտեղեկատվությունը:

Ամենուր, ուր Մրցույթի մասնակցից պահանջվում է նշել գումարը, Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա այն ազգային արժույթով: Եթե որևէ գումար արտարժույթով է, ազգային արժույթի համարժեքով գումարը կորոշվի մրցույթի մասնակցի կողմից սահմանված փոխանակման կուրսով հետևյալ կերպ.

- Յուրաքանչյուր տարվա շինարարության գծով շրջանառության կամ ֆինանսական տվյալների համար օգտագործվում է համապատասխան օրացուցային տարվա (որի գումարը պետք է փոխարկվի) վերջին օրվա դրությամբ փոխանակման կուրսը:
- Առանձին պայմանագրի արժեքի համար՝ պայմանագրի ամսաթվի դրությամբ գերակայող փոխանակման կուրս:

## 1. Գնահատում

ԻլրումնՀՄՄ 35.2(ա)–(ե) կետերումթվարկվածչափանիշների, կիրառվում են հետևյալչափանիշները.

### 2.1 Տեխնիկական առաջարկի համապատասխանություն

Մրցույթի մասնակցի Տեխնիկական առաջարկի գնահատումը ներառում է Մրցույթի մասնակցի տեխնիկական առաջարկի և դրա ըստ էության համապատասխանության գնահատում, հիմնական սարքավորումներ և անձնակազմ մոբիլիզացնելու կարողությունները պայմանագրի համար՝ Մրցույթի մասնակցի աշխատանքային մեթոդներին, ժամանակացույցին, և նյութերի մատակարարման աղբյուրներին համապատասխան, որոնք ներկայացված կլինեն բավարար մանրամասներով և լիովին Բաժին VI-ով (Պատվիրատուի պահանջներ) սահմանված պահանջների համաձայն:

### 2.2 Միանգամից մի քանի պայմանագրերի շնորհման գնահատում՝ Կիրառելի չէ

### 2.3 Ավարտման այլընտրանքային ժամանակ՝ Կիրառելի չէ

Ավարտման այլընտրանքային ժամկետը՝ եթե թույլատրվում էՀՄՄ 13.2 ենթակետով, գնահատվում է հետևյալ կերպ:

### 2.4 Տեխնիկական այլընտրանքներ՝ Կիրառելի չէ

Եթե ՀՄՄ 13.4 ենթակետով թույլատրվում են տեխնիկական այլընտրանքներ, դրանք կգնահատվեն հետևյալ կերպ.

### 2.5 Մասնագիտացված ենթակապալառուներ՝

Նկատի կառնվեն միայն Պատվիրատուի կողմից թույլատրված մասնագիտական աշխատանքների համար ենթակապալառուների հատուկ փորձը: Մասնագիտացված ենթակապալառուների ընդհանուր փորձը և ֆինանսական ռեսուրսները չեն ավելացվում Մրցույթի մասնակցի փորձին և ռեսուրսներին՝ վերջինիս որակավորումը որոշելու նպատակով:

Մասնագիտացված ենթակապալառուները պետք է լիովին որակավորված լինեն իրենց աշխատանքն իրականացնելու համար և համապատասխանեն հետևյալ չափանիշներին. Կիրառելի չէ

**2.6 Անհամապատասխանություններ, սխալներ և բացթողումներ**: ՀՄՄ 30.3 ենթակետի համաձայն, ճշգրտումներն իրականցվում են հետևյալ մեթոդաբանության համաձայն.ՀՄՄ 14.2 դրույթին համապատասխանելու դեպքում, եթե՝ i) կետը նշված չէ Աշխատանքների ծավալների ցուցակում, այսինքն՝ կետը բաց է թողնված, կամ թվարկված է և գնանշված, սակայն չի համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջներին, կամii) աշխատանքի ոլորտի բաղադրիչը կամ մրցութային առաջարկում որևէ պայման չի համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջին, և պայմանով, որ Մրցութային առաջարկը որոշվել է

որպես էապես համապատասխանող՝ անկախ վերոնշյալ i) և ii) կետերի անհամապատասխանությունների, ապա մրցութային առաջարկի գնին կավելացվիէապես համապատասխանող մրցույթի մասնակիցների կետի կամ բաղադրիչի միջին գինը, և գների համեմատության համար կօգտագործվի այդ ձևով որոշված մրցութային առաջարկի արժեքի համարժեքը: Եթե չհամապատասխանող բաղադրիչի կամ պայմանի արժեքը հնարավոր չէ որոշել այլ էապես համապատասխանող առաջարկներից, Պատվիրատուն՝ իր սեփական գիտելիքների, կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, կորոշի, թե ինչ գին պետք է ավելացնել դրանց արժեքը որոշելու և առաջարկները համեմատելու համար:

## 3. Որակավորում

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայացման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| 1. Իրավասություն | | | | | | | |
| 1.1 | **Ազգություն** | Ազգություն ՀՄՄ4.3 ենթակետի համաձայն | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև ELI – 1.1 և 1.2, հավելածներով |
| 1.2 | **Շահերի բախում** | Շահերի բախում չկա՝ ՀՄՄ4.2 ենթակետի համաձայն | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Մրցույթի նամակ |
| 1.3 | **Բանկի կողմից ոչ իրավասու հայտարարելը** | Բանկի կողմից չի հայտարարվել ոչ իրավասու՝ՀՄՄ 4.4, 4.5, 4.6 և 4.7ենթակետերի համաձայն | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Մրցույթի նամակ |
| 1.4 | **Փոխառուի երկրի պետական սեփականություն հանդիսացող** | Համապատասխանում է ՀՄՄ4.5 ենթակետի պայմաններին | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև ELI – 1.1 և 1.2, հավելվածներով |

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | | Համապատասխանության պահանջներ | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | կազմակերպություն | | | | | | |
| 1.5 | **Ոչ իրավասու Միավորված Ազգերիորոշմամբ կամ Փոխառուի երկրի օրենքով** | Չի համարվել ոչ իրավասու՝ Փոխառուի երկրի օրենքներով կամ պաշտոնական ակտերով Մրցույթի մասնակցի երկրի հետ առևտրային հարաբերությունների արգելքի պատճառով, կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ, երկուսն էլ՝ ՀՄՄ 4.7 ենթակետի և Բաժին V-ի համաձայն: | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև ELI – 1.1 և 1.2, հավելվածներով |
| **2. Չկատարված պայմանագրերի պատմություն** | | | | | | | |
| 2.1 | **Չկատարված պայմանագրերի** | Կապալառուի մեղքով պայմանագրի չկատարման դեպք չի եղել **2010թ.հունվարի** 1-ից:[19] | Պետք է բավարարի | Պետք է բավարարի | Պետք է բավարարի | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON-2 |

[19]Պատվիրատուիորոշմամբ, չկատարումըներառումէբոլորայնպայմանագրերը, որտեղ՝ (ա) չկատարելըչիվիճարկվելկապալառուիկողմից, այդթվումհամապատասխանպայմանագրիվեճերիլուծմանմեխանիզմներիմիջոցով, (բ) պայմանագրերըվիճարկվելեննշվածձևով, սակայնկարգավորվելենիվնասկապալառուի: Չկատարումըչիներառումայնպիսիպայմանագրեր, որտեղպատվիրատուներիորոշումներըչեղյալենհամարվելվեճերիլուծմանմեխանիզմներիմիջոցով:

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | **պատմություն** | | պահանջը | պահանջները | պահանջը[20] | | |
| 2.2 | **Կասեցում մրցութային երաշխիքի հայտարարագրի կիրարկման պատճառով, կամ մրցութային առաջարկի հետ վերցնել մրցույթի վավերության ժամկետում** | Չի կասեցվել մրցութային երաշխիքի հայտարարագրի կիրարկման պատճառով համաձայն ՀՄՄ 4.6 ենթակետի կամ մրցույթի վավերության ժամկետում մրցութային առաջարկը հետ վերցնելու պատճառով համաձայն ՀՄՄ 19.9 ենթակետի | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Մրցութային առաջարկի ներկայացման ձև |
| 2.3 | **Ընթացքի մեջ գտնվող դատական վեճ** | Մրցույթի մասնակցի ֆինանսական վիճակը և ակնկալվող երկարաժամկետ շահութաբերությունը հիմնավոր են՝ ստորև 3.1 ենթակետով սահմանված չափանիշների համաձայն, | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON – 2 |

Չկատարումըպետքէհիմնվիամբողջությամբկարգավորվածվեճիկամդատականգործիմասինողջտեղեկատվությանվրա, այսինքն՝ վեճըկամդատականգործըլուծվելենհամապատասխանպայմանագրիվեճերիլուծմանմեխանիզմներիմիջոցով, ևսպառվելենՄրցույթիհամարմատչելիբողոքարկմանբոլորատյանները:

[20] Սույն պահանջը վերաբերում է նաև այն պայմանագրերին, որոնք մրցույթի մասնակիցն իրականացրել է որպես ՀՁ անդամ:

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայացման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | ենթադրությամբ, որ բոլոր ընթացքի մեջ գտնվող վեճերը կլուծվեն ի վնաս Մրցույթի մասնակցի: | | | | | |
| 2.4 | **Դատական վեճերի պատմություն** | Կապալառուի դեմ դատական/արբիտրաժային վճիռների հետևողական պատմություն չի եղել**2010թ.հունվարի 1-ից**:[21] | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև CON – 2 |
| **3. Ֆինանսական իրավիճակ և կատարողական** | | | | | | | |
| 3.1 | **Ֆինանսական կարողություններ** | (i) Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (բացի որևէ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ դրամական միջոցների | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև FIN – 3.1, հավելվածներով |

[21] ՄրցույթինմասնակցելունամակումՄրցույթիմասնակիցըպետքէներկայացնիճշգրիտտեղեկատվությունվերջինհինգտարիներիընթացքումիրկողմիցիրականացվածկամընթացիկպայմանագրերիշրջանակներումվեճերիկամդատավեճերիմասին: ՄրցույթիմասնակցիհամՀՁ-իցանկացածանդամինկատմամբդատական/արբիտրաժայինվճիռներիհետևողականպատմությունըկարողէբերելՄրցույթիմասնակցիորակազրկմանը:

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայացման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | հոսքի կարիքները բավարարելու համար, որոնք՝ տվյալ պայմանագրի համար կազմում են **220,000,000 ՀՀ դրամ** ՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները: | | | | | |
| | | (ii) Մրցույթի մասնակիցները պետք է նաև Պատվիրատուի համար գոհացուցիչ կերպով ցույց տան, որ ունեն բավարար ֆինանսական աղբյուրներ ներկայումս ընթացքի մեջ գտնվող աշխատանքների և ապագա պայմանագրային պարտավորությունների դրամական հոսքերի համար: | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | |
| | | (iii) Պետք է ներկայացվեն աուդիտ անցած ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններ, կամ՝ եթե չեն պահանջվում Մրցույթի մասնակցի երկրի օրենքներով, Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին **5 (հինգ)** | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | |

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայացման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | **տարիների** համար, որոնք պետք է ցույց տան Մրցույթի մասնակցի ֆինանսական վիճակի հուսալիությունը և նրա ակնկալվող երկարաժամկետ շահութաբերությունը: | | | | | |
| 3.2 | **Միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով** | Նվազագույն միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի **992,000,000 ՀՀ դրամ** հաշվարկած որպես վերջին **5 (հինգ)** տարիների ժամանակահատվածում շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների վկայագրերի ընդհանուր գումար՝ բաժանած **5 (հինգ)** տարիների վրա: | Պետք է բավարարի պահանջը | Պետք է բավարարի պահանջը | **Պետք է բավարարի պահանջի առնվազն 25%-ը** | **Պետք է բավարարի պահանջի առնվազն 40%-ը** | Ձև FIN – 3.2 |
| **4. Փորձառություն** | | | | | | | |
| 4.1 (ա) | **Ընդհանուր շինարարական փորձը** | Շինարարական պայմանագրերի **5 (հինգ)**տարվա փորձ՝ որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, ենթակապալառու կամ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև EXP – 4.1 |

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայացման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | կառավարման կապալառու, սկսած **2011թ. հունվարի 1**-ից: | | | | | |
| 4.2 (ա) | **Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ** | (i) Մինիմալ թվով ստորև սահմանված համանման պայմանագրեր[22], որոնք Մասնակիցը գոհացուցիչ և էապես[23] ավարտվել է որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ[24], կառավարման կապալառու կամ ենթակապալառու՝ **2011թ. հունվարի 1-ից** մինչև առաջարկների ներկայացման | Պետք է բավարարի պահանջը | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը[25] | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Ձև EXP 4.2(a) |

[22] Նմանությունը որոշվում է ֆիզիկական չափերի, բարդության, մեթոդների/տեխնոլոգիաների և/կամ VII բաժնում (Աշխատանքներին ներկայացվող պահանջները) նկարագրված այլ բնութագրերի հիման վրա: Փոքր արժեքով (պահանջով սահմանված արժեքից փոքր արժեքով) մի քանի պայմանագրերի գումարումը ընդհանուր պահանջը բավարարելու համար չի թույլատրվում:

[23] Պայմանագիրն էապես ավարտված է, եթե իրականացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների 80% տոկոսը կամ ավելին:

[24] Այն պայմանագրերում, որտեղ Մրցույթի մասնակիցը եղել է ՀՁ անդամ կամ ենթակապալառու, սույն պահանջի կատարումը որոշվում է միայն ընդհանուր արժեքում Մրցույթի մասնակցի կողմից կատարված մասը:

[25] ՀՁ-ի դեպքում անդամների կողմից ավարտված պայմանագրերի արժեքը չպետք է գումարվի՝ առանձին պայմանագրի նվազագույն արժեքի պահանջի կատարումը որոշելու համար: Հակառակը՝ յուրաքանչյուր անդամի կողմից իրականացված յուրաքանչյուր պայմանագիր պետք է բավարարի առանձին պայմանագրի նվազագույն արժեքին, որը պահանջվում է առանձին կազմակերպությունից: Որպեսզի որոշվի, թե արդյոք ՀՁ-ն համապատասխանում է պայմանագրերի ընդհանուր թվի պայմանին, պետք է գումարվեն միայն բոլոր անդամների կողմից իրականացված պայմանագրերը, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի պահանջվող նվազագույն արժեքին հավասար կամ դրանից ավել:

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայացման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | վերջնաժամկետն ընկած ժամանակաշրջանում. **1 (մեկ) պայմանագիր առնվազն 1,190,400,000 ՀՀ դրամ արժեքով՝ հասարակական շինությունների վերանորոգման/վերակառուցման/կառուցման** | | | | | |
| 4.2 (բ) | | Վերոնշյալ 4.2(ա) կետում նշված ժամանակահատվածի օրացուցային տարվա առաջին օրը կամ դրանից հետո վերոնշյալ և բոլոր այլ ավարտված և ընթացքի մեջ գտնվողպայմանագրերում, որտեղ Մրցույթի մասնակիցը եղել է գլխավոր կապալառու, ՀՁ անդամ կամ ենթակապալառու[26], | Պետք է բավարարի պահանջները | Պետք է բավարարի պահանջները | ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ | Պետք է բավարարի պահանջը[28] | Ձև EXP – 4.2 (b) |

[26] Այն պայմանագրերում, որտեղ Մրցույթի մասնակիցը եղել է ՀՁ անդամ կամ ենթակապալառու, սույն պահանջի կատարումը որոշվում է միայն ընդհանուր արժեքում Մրցույթի մասնակցի կողմից կատարված մասը:

[27] Իրականացված աշխատանքների ծավալը, քանակը և ժամկետները կարող են բավարարել պահանջը մեկ կամ մի քանի պայմանագրերի համախմբով, եթե դրանք իրականացվել են միևնույն ժամանակահատվածում: Աշխատանքների ծավալը պետք է համարվի տարեկան հիմնական շինարարական աշխատանքների ծավալը:

| Իրավասության և որակավորման չափանիշներ | | | Համապատասխանության պահանջներ | | | | Փաստաթուղթ |
|---|---|---|---|---|---|---|---|
| No. | Առարկա | Պահանջ | Մեկ կազմակերպություն | Համատեղ ձեռնարկություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) | | | Ներկայաց-ման պահանջներ |
| | | | | Բոլոր կողմերը միասին | Յուրաքանչյուր անդամ | Մեկ անդամ | |
| | | նվազագույն շինարարական փորձը հետևյալ հաջող ավարտված[27] հիմնական աշխատանքներում պետք է լինի.<br><br>**Հիդրոտեխնիկական ոլորտի շինարարություններ՝ -ջրի ռեզերվուարներ-50-150խմ և պոմպակայան** | | | | | |

[28] Պահանջը կարող է բավարարվել մասնագիտացված ենթակապալառուի միջոցով

## 5. Անձնակազմ

Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ ունի անձնակազմ հիմնական պաշտոնների համար, որոնք բավարարում են հետևյալ նվազագույն չափանիշներին.

| Հ/Հ | Որակավորումը | Ընդհանուր աշխատանքային փորձառությունը (տարիներ) | Նմանատիպ աշխատանքային փորձառությունը (տարիներ) |
|---|---|---|---|
| 1 | Ծրագրի ղեկավար, Տնօրեն -1 անձ | 10 | 5 |
| 2 | Գլխավոր ճարտարագետ – 2 անձ | 5 | 3 |
| 3 | Ճարտարագետ-էներգետիկ – 1 անձ | 5 | 3 |
| 4 | Ճարտարագետ-ճանապարհաշինարարար – 1 անձ | 5 | 3 |
| 5 | Ճարտարագետ-կապի մասնագետ – 1 անձ | 5 | 3 |
| 6 | Ճարտարագետ-հիդրոտեխնիկ – 1 անձ | 5 | 3 |
| 7 | Աշղեկ-1 անձ | 5 | 3 |

Մրցույթի մասնակիցը պետք է մանրամասներ տրամադրի իր կողմից առաջարկվող անձնակազմի և նրա փորձի մասին Բաժին IV-ի (Մրցութային ձև) համապատասխան ձևերի վրա:

## 6. Սարքավորումներ

Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են Կապալառուի հիմնական սարքավորումները, ըստ ստորև թվարկածի.

| Հ/Հ | Սարքավորումները տիպը և մասնագրերը | Նվազագույն պահանջվող քանակ |
|---|---|---|
| 1 | Ավտոինքնաթափ (7.5 տ բեռնատարողությամբ) | 3 |
| 2 | Ավտոբետոնախառնիչ 2 խմ տարողությամբ | 2 |
| 3 | Ավտոամբարձիչ 10 տ բեռնատվությամբ | 1 |
| 4 | Ավտոբետոնապոմպ | 1 |
| 5 | Բուլդոզեր Bulldozer (59 կՎտ) | 1 |
| 6 | Կոմպրեսոր (արտադրողականությունը 10 խմ/րոպե) | 1 |
| 7 | Հետահար մուրճ (ՄՕ-10) | 2 |
| 8 | Էքսկավատոր -0.25 խմ շերեփի տարողությամբ | 1 |
| 9 | Խորքային վիբրատոր | 2 |

| | | |
|---|---|---|
| 10 | Եռակցող սարք | 2 |
| 11 | ՇԷԿ-60 | 1 |
| 12 | ՇԷԿ-30 | 2 |
| 13 | Ասֆալտա տեղադրիչ վիբրատորով մեքենա (25 տ) | 1 |
| 14 | Ավազաշիթային ապարատ | 1 |

Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկվող սարքավորումների լրացուցիչ մանրամասներ՝ օգտագործելով Բաժին IV-ում նշված համապատասխան ձևը:

# ԲաժինVII. Աշխատանքին ներկայացվող պահանջներ

# Տեխնիկական մասնագրեր/նորմեր/ստանդարտներ

*Պայմանագրի իրականացման ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը, սարքերն ու սարքավորումները պետք է լինեն նոր և չօգտագործված:*

**Բետոնային և երկաթբետոնային աշխատանքներ**

1. Բետոններում և շինարարական շաղախներում օգտագործվող **ցեմենտները** և կիրառման ոլորտները բերված են ստորև աղյուսակում.

2.

| *Ցեմենտների տեսակները* | *Հիմնական ոլորտները* | *Թույլատրվում է կիրառել* |
|---|---|---|
| Պորտլանդ ցեմենտ, միներալային հավելումներով պորտլանդ ցեմենտ | Բետոնե և երկաթբետոնե միաձույլ և հավաքովի կոնստրուկցիաներ | Բետոնե այն կոնստրուկցիաներում, որոնցում պահանջվում է ցեմենտի լրացուցիչ հատկությունների ստուգում |
| Շարքային մակնիշի ցեմենտ Մ-400 | B-15 և B-25 դասերի համար և B-12.5, երբ պահաջվում է բաց թողման բարձր ամրություն | B-15 բետոնների և շինարարական շաղախների համար |

Շինարարական աշխատանքների համար օգտագործվող ավազները պետք է բավարարեն ԳՕՍՏ 8736-93 –ի(կամ հարժեք) պահանջներին ինչպես ֆիզիկամեխանիկական, այնպես էլ հատիկաչափական կազմի տեսակետից:
Բետոններում օգտագործվող ավազների խոշորության մոդուլները (Մխ) պետք է ունենան հետևյալ մեծությունները.

| *Ավազի հատիկաչափական կոդմը* | *Խոշորության մոդուլը (Մխ)* | 063 մաղի վրա լրիվ մնացորդը, % |
|---|---|---|
| Խոշոր | 3.5 - 2.5 | 45 ավել |
| Միջին | 2.5 - 2 | 30 մինչև 45 |
| Մանր | 2 - 1.5 | 10 մինչև 30 |

| | | |
|---|---|---|
| Շատ մանր | 1.5 - 1 | մինչև 10 |

Եթե Մխ փոքր է 1.5-ից, ապա այդ ավազների կիրառումը խորհուրդ չի տրվում:

Խիտ ավազներում կավային, փոշեկերպ և տիղմային մասնիկների քանակը չպետք է գերազանցի 3%-ը ըստ զանգվածի:

Բացի վերը նշվածից, բնական ծակոտկեն ավազները պետք է բավարարեն ՀUS 43-94 պայմաններին:

3. Բետոնների համար օգտագործվող **խիճը և կոպիճ**ը պետք է բավարարի ԳOUS8267-93-ում (կամ հարժեք) պահաջվող պայմաններին ըստ հատիկաչափական կազմի, ամրության, սառնակայունության, թույլ ապառների, ինչպես և փոշենման, կավային ու տիղմային մասնիկների պարունակության:

Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար օգտագործվող խճերի (կոպիճների) հատիկաչափական կազմը ընդունվում է.

| | |
|---|---|
| խճի դեպքում | 5-ից մինչև 10 մմ |
| | 10-ից մինչև 20 մմ |
| | 20-ից մինչև 40 մմ |
| կոպիճի դեպքում | 5-ից մինչև 10 մմ |
| | 10-ից մինչև 20 մմ |

Ծակոտկեն խոշոր լցանյութերի մակնիշն ըստ լցովի ծավալային զանգվածի, կախված թեթև բետոնի համար նախատեսված ծավալային զանգվածից և կիրառման պայմաններից պետք է բավարարի ստորև բերբած տվյալներին.

| *Չոր վիճակում թեթև բետոնի ծավալային զանգված, կգ/խմ* | *Ծակոտկեն խոշոր լցանյութի մակնիշը ըստ ծավալային լցովի զանգվածի* | | |
|---|---|---|---|
| | *ջերմամեկուսիչ* | *Կոնստրուկտիվ ջերմամեկուսիչ* | *կառուցվածքային կոնստրուկտիվ* |
| 400 | 150-200 | - | - |
| 500 | 250-300 | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| 600 | 300-400 | 200-300 | - |
| 700 | - | 250-400 | - |
| 800 | - | 300-500 | - |
| 900-1000 | - | 400-600 | - |
| 1100-1200 | - | 500-700 | - |
| 1300-1400 | - | 600-800 | 400-600 |
| 1500-1600 | - | 700-1000 | 500-800 |
| 1700-1800 | - | - | 600-1000 |

Հանրապետությունում լիարժեք հետազոտված են և գործում են պեմզայի (լիթոիդային և Անիի), պեռլիտի (Արագածի), խարամային (Կարմրաշենի, Ավանի), տուֆերի (Արթիկի, Անիի, Երևանյան և Բյուրականի տիպերի և այլն) հանքեր: Այլ հանքերի հումքը օգտագործելու դեպքում տվյալ հանքի հումքը պետք է ներկայացվի ՀայՄեյսմՇին ԲԲԸ-ի բետոնների տեխնոլոգիայի լաբորատորիային հետազոտման համար, և միայն արդյունքներ ստանալուց հետո օգտագործվի:

4. Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների **սառնակայունության** (F) և **ջրաթափանցելիության** (W) մակնիշները պետք է բավարարեն աշխատանքային գծագրերում բերված պահանջներին:

5. Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներին և շինվածքներին ներկայացվող ընդհանուր տեխնիկական պահանջները, մակնիշաորումը, որակի վերաբերյալ փաստաթղթերի ընդունումը պետք է բավարարեն ԳՕՍՏ 13015.0-83(կամ հարժեք), ԳՕՍՏ 13015.1-81(կամ հարժեք), ԳՕՍՏ 13015.2-83(կամ հարժեք), ԳՕՍՏ 13015.3-83(կամ հարժեք) և ԳՕՍՏ 13015.4-84 (կամ հարժեք) պայմանների պահանջներին:

6. Հավաքովի բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների միաձուլման համար օգտագործվող մանրահատիկ բետոնները պետք է բավարարեն ԳՕՍՏ 26633-81-ի(կամ հարժեք) տեխնիկական պայմաններին:

7. Շինարարությունում օգտագործվող կոնստրուկտիվ թեթև բետոնները պետք է բավարարեն ԳՕՍՏ 25820-83-ի(կամ հարժեք) պահաջներին:

8. Թեթև բետոնի պատրաստման համար պետք է օգտագործվի հրաբխային կամ նստվածքային ծագում ունեցող ԳՕՍՏ 22263 (կամ հարժեք) պայմաններին բավարարող ապարներից պատրաստվող լցանյութեր:

9. Բետոնի ամրացումը արագացնելու համար և բետոնի սառնակայունությունը բարձրացնելու համար բետոնում անհրաժեշտ է օգտագործել համապատասխան հավելանյութեր:

10. Բետոնի խառնուրդը պատրաստելու համար օգտագործվող ջուրը պետք է բավարարի ԳՕՍՏ 23732-ի(կամ հարժեք) պայմանների պահանջներին:

11. Բետոնի խարնուրդի խտացումը պետք է իրականացվի մակերեսային թրթռահարթակների և խորքային թրթռիչների միջոցով:

12. Բետոնի խարնուրդը տեղադրելիս ազատ անկման բարձրությունը չպետք է գերազանցի 70 սմ-ը:

13. Երկաթբետոնե կոնստրուկցիաներում օգտագործվում են հետևյալ մակնիշի և տեսակների պողպատները.

ա. սովորական որակի ածխածնային պողպատներ - ԳՕՍՏ 380-94(կամ հարժեք)

բ. թույլ ածխածնային սառը ձգված պողպատե լարեր - ԳՕՍՏ 6727-80(կամ հարժեք)

գ. սովորական որակի գլոցված ածխածնային պողպատ - ԳՕՍՏ 30136-94(կամ հարժեք)

դ. շիկագլոցված պողպատ - ԳՕՍՏ 5781-82(կամ հարժեք)

ե. նախալարված երկաթբետոնե կոնստրուկցիաների ամրանավորման համար օգտագործվող ածխածնայուն պողպատե լարեր ԳՕՍՏ 7348-81(կամ հարժեք)

զ. ջերմամեխանիկական եղանակով ամրացված պողպատ ԳՕՍՏ 10884-94(կամ հարժեք)

Համաձայն ԳՕՍՏ 6727-80-ի (կամ հարժեք) սառը ձգված թույլ ածխածնային պողպատե լարերի ուղղման դեպքում հարաբերական երկարումը կազմում է 2-3 %, որը հնարավորություն է տալիս այդ պողպատները օգտագործել երկրաշարժային գոտիներում:

**Քարանյութի և քարի շինվածքներ**

Քարե և ամրանաքարե շարվածքների կառուցման նպատակով օգտագործվում է բնական և արհեստական քարանյութեր՝ քարի, մանր և խոշոր բլոկների ու պանելների տեսքով, ինչպես նաև երեսապատման և ջերմամեկուսիչ նյութեր, շինարարական շաղախ, բետոն և ամրան:

Քարե և քարաշեն շարվածքների համար օգտագործվում են քարերի հետևյալ տեսակները՝ 4, 7, 10, 15, 25, 35, 50, 75, 100, 125, 150, 200, 300, 400, 500, 600, 800, 1000:

300-1000 տեսականիշների քարերը կոչվում են բարձրամուր քարեր, 50-200 – միջին ամրության, իսկ 4-35՝ փոքր ամրության:

Ըստ օգտագործման քարանյութի տեսակի քարե շարվածքը ստորաբաժանում են բնական և արհեստական քարերից կատարված շարվածքի:

Բնական քարերի տեսակները բերված են ACT 100-95 և ԳOUS 4001-84-ում (կամ հարժեք):

Համաձայն ՀՀՇՆ IV-13, 01-96 –ի ,Քարե և ամրանաքարե կառուցատարրերը, քարի տեսականիշը սեղմման ամրության տեսակետից պետք է լինի.

- “միդիս” շարվածքի համար – 75 և բարձր
- կանոնավոր ձևի քարերով շարվածքի համար –50 և բարձր
- ամրանավորված շարվածքի համար – 100 և բարձր:

Նկուղային պատերի հիմքերի համար կարող են ոգտագործվել խամքարե և խամքարաբետոնային շարվածքի՝ խամքարե բազալտե քարով M 100-ից ոչ ցածր տեսականիշի (ԳOUS 21-73-87) (կամ հարժեք):

Շենքերի վերգետնյա մասի պատերի շարվածքի համար (գետնախարսխից վերև) անհրաժեշտ է օգտագործել տուֆային քարեր:

Պատերի երեսպատման համար օգտագործվում են բնական քարից պատրաստված սալեր (ԳOUS 9480-89) (կամ հարժեք):

ՀՀ-ում առավել տարածված և կիրառվող բնական քարանյութերը բերված են ԳOUS 4001-84-ում(կամ հարժեք):

Արհեստական քարերի տեսականին և դրանց ներկայացվող պահանջները բերված են ACT 102-95,ACT 117-95,ԳOUS 379-95-ում (կամ հարժեք):

Սովորական բետոնաքարերին ներկայացվող պահանջները բերված են ԳOUS 6665-91-ում(կամ հարժեք): Դրանց սովորական չափսերն են 390x190x188մմ և 390x90x188մմ:

Բնական քարերով շարվածքների աշխատանքի կատարման և ընդունման կանոնները նկարագրված են ՀՀՇՆ IV-13.01-96-ում:

Երկրաշարժային շրջաններում անհրաժեշտ է կատարել ՀՀՇՆ II-2.02-94-ի պահանջները:

**Շինարարական շաղախներ շարվածքի համար**

Ըստ կապակցանյութի շաղախները տարբերակվում են ցեմենտային, խառը, գիպսային և կավային:

Ցեմենտային շաղախները մեծ մասամբ ունենում են 1:2,5-1,4 բաղադրություն:Ցեմենտային շաղախների տեսականիշը որոշվում է 28 օրական հասակի խորանարդիկներով: Համաձայն նորմերի տարբերակում են շաղախների հետևյալ տեսականիշները՝ 200,150,100,75,50,25,10 և այլն:

Շաղախներին ներկայացվող հիմնական պահանջները ընդգրկված են ՀՀՇՆ IV-13,01-96-ում:

**Տանիքային աշխատանքներ**

**Տանիքի փայտե տարրեր**

Փայտյա կավարամածի կոնստրուկցիան կախված է տանիքածածկի տեսակից: Թերթավոր պողպատից ծածկի դեպքում տանիքածածկի հիմք է ծառայում 5x5սմ չորսուներ, տեղադրված 25սմ քայլով:Ասբոցեմենտային ծածկույթի դեպքում օգտագործվում է ամբողջական կամ նոսր 2-3սմ արանքով կավարամած 2,5-4սմ հաստության և 12-15սմ լայնության տախտակներից:

Ալիքավոր ասբոցեմենտային թերթերը տեղադրում են չորսուներից կավարամածի վրա ՝ թերթերի չափերին համապատասխան քայլով բայց ոչ ավել քան 50սմ:

Կղմինդրային ծածկույթի տակ նույնպես տեղադրում են չորսուներից կավարամած,որոնցից քայլը համապատասխանում է կղմինդրի չափերին:

Ծպեղնային ոտքերը իրականացվում են գերաններից, կիսագերաններից կամ տախտակներից, որոնք դրվում են կողերի վրա: Կոնստրուկտիվ նկատառումներից ելնելով, հատվածքի չափերը ընդունվում են ՝ գերանների համար D=12սմ, կիսագերանների համար D/2=14/2 սմ, տախտակների համար 5x10սմ: Գերանները և կիսագերանները աշխատանքի մեջ են դնում պահելով նրանց կոնավորությունը և վերևի մասի մի փոքր եզրատաշում: Գերաններից ծպեղնային ոտքերի քայլը ընդունում են 1,5-2մ, իսկ տախտակների և կիսագերանների դեպքում ՝ 1-1,5մ: Ծպեղնային ոտքերի ամրացումը մարդակներին և հենարանային չորսուներին իրականացնում են թործերով, ճարմանտներով և մեխերով:

Շենքերի մեծ լայնության դեպքում ծպեղնային ոտքերի թռիչքը փոքրացնելու համար,նաև ամբողջ ծպեղնային համակարգի լայնական կոշտության մեծացման համար դնում են թեքաններ , որոնք դրվում են միայն կանգնակների մոտ կամ բոլոր ծպեղնային ոտքերի տակ:

Մարդակների համար,ինչպես և ծպեղնային ոտքերի համար, օգտագործվում են փշատերևային և սաղարթային անտառանյութեր:

Օգտագործվում են հետևյալ տիպի մարդակներ.

1.խզվածքային

2.ենթահեծաններով

3.թեքաններով

4.բարձակա-հեծանային

5.անխզելի

Բոլոր կոնստրուկցիաների պատրաստման ժամանակ փայտանյութի խոնավությունը չպետք է գերազանցի 25%:

Նեխումից պահպանելու համար փայտանյութը շինհրապարակում մշակում են հակասեպտիկ մածուկներով, հակասեպտիկով ջրային լուծույթներով, ինչպես նաև յուղային հակասեպտիկներով: Այն մածուկները, որոնք նախատեսված են 100գ 1քմ մակերևույթի համար, տարածում են ներկացրիչների միջոցով: Այն մածուկները, որոնք նախատեսված են 200գ 1քմ մակերևույթի համար,տարածում են վրձինով:

Հակահրդեհային պայմանները ապահովելու համար փայտանյութի մակերեսները մշակվում են ջրային լուծույթներով, հատուկ ներկերով կամ քսուկներով, պատրաստված հեղուկ ապակու, բորակի և դիամոնիֆոսֆատի հիմքի վրա:

**Հատակների կառուցման աշխատանքներ**

Հատակները հանդիսանում են շենքի պարսպող մաս և իրենցից ներկայացնում են հորիզոնական կառուցատարր, որի յուրաքանչյուր շերտը ունի որոշ ֆունկցիոնալ նպատակ (ՇՆ և Կ 2.03.13-88). վերնածածկ, հարթեցնող շերտ, ջրամեկուսիչ շերտ, ջերմամեկուսիչ շերտ, ձայնամեկուսիչ և նախապատրաստական շերտ:

Հատակի վերնածածկի տեսակը որոշում է դրա անվանումը: Հատակի կոնստրուկցիայի ամեն մի հաջորդող շերտի փռումը թույլատրվում է ստորին շերտի կատարման ճշտությունը ստուգելուց և ծածկվող աշխատանքների համապատասխան փաստաթուղթը կազմելուց հետո:

Ենթաշերտի հաստությունը սահմանվում է համաձայն նախագծի:Ենթաշերտի խառնուրդների բաղադրությունը բերված է աղյուսակում.

| *Բետոնի դասը* | *Ջուր* | *Ցեմենտ* | *Ավազ* | *Խիճ* | *Խառնուրդի շարժունակությունը* |
|---|---|---|---|---|---|
| B 20 | 0,6 | 1 | 2 | 3,4 | 2-4 |
| B 30 | 0,5 | 1 | 1,4 | 1,2 | 2-4 |
| B 40 | 0,4 | 1 | 1 | 1,7 | 2-4 |

**Ջերմա-ձայնամեկուսիչ շերտ**

Այդ շերտի նյութերը, նպատակային բնութագրերից բացի, պետք է ունենան բավականաչափ դիմադրություն սեղմմանը, քանի որ շահագործման ընթացքում ենթարկվում են անհավասար բեռնվածքների:

Խարամային խճից շերտը, ավելի քան 100մմ հաստության դեպքում անհրաժեշտ է տոգորել ցեմենտակաթով, շահագործման բեռնվածքների ազդեցության տակ այդ շերտի խտացման հետևանքով նստումից խուսափելու համար:

**Ջրամեկուսիչ շերտ**

Գրունտային ջրերից և հոսային հեղուկներից ջրամեկուսացման համար օգտագործվում են նյութեր բիտումային և ձյութային հիմնանյութով՝

- ջրամեկուսիչ տոլ ծածկույթային թաղանթով (ԳՕՍՏ 8736-76) (կամ հարժեք)
- հիդրոիզոլ (ԳՕՍՏ 7415-86) (կամ հարժեք)
- տաք բիտումային մածիկ MBK-G-65 (ԳՕՍՏ 2889-80(կամ հարժեք))

Սոսնձվող ջրամեկուսացման դեպքում տաք մածիկների շերտի հաստությունը պետք է լինի 2մմ, իսկ սառը՝ 1մմ: Ջրամեկուսիչ շերտերում փաթեթանյութերի ժապավենները փռվում են նույն ուղղությամբ, երկայնական և լայնական կցվածքների եզրածածկով 100մմ: Սոսնձվող ջրամեկուսացման շերըերը բարձրացվում են պատերի ուղղաձիգ մակերևույթների վրա ոչ պակաս, քան 150 մմ: Ջրամեկուսացումը կատարելուց հետո կատարվում է հերմետիկության փորձարկում, լցնելով 50 մմ բարձրությամբ ջուր և պահպանելով 3 օր:

**Հարթեցնող շերտ**

Այս շերտը ունի մի քանի դեր՝ կոնստրուկտիվ, կոշտ կեղևի ստեղծում, օժանդակ, պաշտպանական, ջերմատեխնիկական:

Հարթեցնող շերտը ստեղծելու համար օգտագործվում են խառնուրդներ ցեմենտային կապակցություններից, որոնց բաղադրությունը բերված է աղյուսակում.

| *Խառնուրդներ* | *Ջուր* | *Ցեմենտ M 400* | *Ավազ* | *Խիճ* |
|---|---|---|---|---|
| Ցեմենտ-ավազային շաղախ M 150 | 0.55 | 1 | 3 | - |
| Ցեմենտ-ավազային շաղախ M 200 | 0.48 | 1 | 2.8 | - |
| B 20 դասի բետոն | 0.65 | 1 | 2 | 3.4 |
| B 10 դասի բետոն | 0.8 | 1 | 2.8 | 4.4 |

Ոչ կոշտ ջերմա-ձայնամեկուսիչ շերտի վրայով փռվող հարթեցնող շերըի հաստությունը ընդունվում է 40-60 մմ:

**Հատակի ծածկույթներ**

**Սալերից ծածկույթների պատրաստում**

Դեկորատիվ սալեր բնական հիմնակմախքով (ԳՕՍՏ 24099-80(կամ հարժեք))

Հատակի համար օգտագործվող սալերի հաստությունը պետք է լինի ոչ պակաս, քան 25մմ; երկարությունը 400-1200 մմ; լայնությունը՝ 400-600 մմ:

Երեսապատման սալեր բնական քարից (ԳՕՍՏ 9480-77(կամ հարժեք))

Սալերի հաստությունը պետք է լինի ոչ պակաս, քան 20 մմ, չափերը՝ ոչ ավելի, քան 600x600 մմ:

Կերամիկական սալիկներ հատակների համար (ԳՕՍՏ 6787-80(կամ հարժեք))

Հատակների պատրաստման համար անհրաժեշտ կերամիկական սալիկների մակերևույթների որակին ներկայացվող նորմատիվա-տեխնիկական պահաջները ներկայացված են աղյուսակում.

| *Ցուցանիշ* | *Սալիկների տեսակը* | | |
|---|---|---|---|
| | I | II | III |
| Բոլոր սալիկների համար | | | |
| Կորությունը (հարթությունից շեղումը), մմ, ոչ ավել | 0.9 | 1.1 | 1.2 |
| Երանգությունը | Չի թույլատրվում | | Թույլատրվում է |
| Լերկություններ (չջնարկված տեղերում) | Չի թույլատրվում | Չի թույլատրվում ընդհանուր մակերեսով ավելի քան քմմ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 5 | 10 |
| Նշանահատիկ | Չի թույլատրվում ավելի քան 0.2 մմ տրամագծով | Չի թույլատրվում ավելի քան 0.2 մմ տրամագծով | |
| | | 1 | 1.5 |
| | | Ավելի քան, հատ | |
| | | 2 | 3 |
| Թեքություններ | Չի թույլատրվում ավելի քան, մմ տրամագծով և ավելի քան, հատ քանակը | | |
| | 2 | 3 | 5 |
| Ճաքեր | Չի թույլատրվում | | |
| Ջնարակի մազյին ճաքեր | Չի թույլատրվում | | |
| Կոտրած անկյուններ | Չի թույլատրվում | Չի թույլատրվում ավելի քան , մմ տրամագծով | |
| | | 2 | 3 |
| | | Քանակով, ավելի քան հատ | |
| | | 1 | 2 |
| Փոսիկներ և ատամնաքերթեր | Չի թույլատրվում | Չի թույլատրվում ավելի քան 1 մմ լայնությամբ և երկարությամբ մմ | |
| | | 10 | 20 |
| Ջնարակի չորությունը, ջնարակի եռումը (ջնարակված ծածկույթի խախտում տրաքված բշտիկների տեսքով) | Չի թույլատրվում | | |
| Գունավոր սալիկների համար | | | |
| Լուսաճնք սալիկի եզրերին (ջնարակվածքի ավելի բարակ շերտ) | Չի թույլատրվում ավելի քան 1 մմ լայնությամբ | | |
| Ավելի մուգ երանգ սալիկի եզրերին | Չի թույլատրվում ավելի քան, մմ լայնությամբ | | |
| | 1 | | 4 |

| Դեկորոտիվ սալերի համար | | | |
|---|---|---|---|
| Ներկերի պակասություն կամ գերալրում | Չի թույլատրվում | | |
| Ներկերի թեփահանում եռումից | Չի թույլատրվում | Չի թույլատրվում զարթանկարի աղավաղման դեպքում | |
| Զարդանկարի կենտություն, կեղտոտում ներկերով, զարթանկարի իջվածք կամ ուռուցիկություն ֆոնի համեմատ | Չի թույլատրվում ընդհանուր սալիկների տեսքի աղավաղման դեպքում երևացող հեռավորությունից, մ | | Չի կանոնակարգվում |
| | 1 | 2 | |

Սալիկները փաթեթավորված վիճակում և գորգերը, դրած տակդիրների վրա, պահվում են փակ զետնարաններում առանձնացված ըստ տեսակի և գույների:

**Պոլիվինիլքլորիդե հատակների պատրաստում**

Հոմոգեն կամ հետերոգեվ ՊՎՔ հատակները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- հաստությունը 2.0 մմ
- 1 քմ նյութի քաշը $3 \div 3.5$ կգ
- Ընդարձակման կայունություն 0.4%
- Մաշվածքության դասը P խումբ # 0.15 մմ
- Մնացորդային գործակից GOST-11529
- Էլեկտրական դիմադրություն GOST-11529
- Հրդեհակայունության դասը GOST-30402-96 ($B_2$)

Անհրաժեշտ նյութերի օգտագործում (հարթեցնող շերտ, ինքնահարթեցվող շերտ, սոսինձ, կարի լարեր և այլն) տեղադրող կազմակերպության կոմցից երաշխիքային ժամկետի տրամադրում՝ առնվազն 1 տարի.

**Սվաղային աշխատանքներ**

Շաղախի շաղկապման անհրաժեշտ ամրությանը հասնում են նրա բաղադրության ճիշտ ընտրության դեպքում, ինչպես նաև հիմքի բավարար անհարթության, մաքրության և մակերևութային խտության, շաղախի շերտածածկումից առաջ հիմքի թրջման, դարսման

ընթացքում բավարար խտացման, շերտածածկման առաջին օրերին նրանց ճիշտ խնամքի (արևի ճառագայթների ուղիղ ազդեծությունից պաշտպանության, օդի բարձր չորության ժամանակ խոնավացում, նորադարս շերտերի միջանցիկ քամիներից նախապահպանում) դեպքում:

Ցեմենտային շաղախների բաղադրությունը՝

| *Նյութեր* | *Նախասվաղ* | *Աստառ* | *Վերնասվաղ* |
|---|---|---|---|
| Ցեմենտ, ավազ | 1:(2.5-4) | 1:(2-3) | 1:(1-1.6) |

Վերնասվաղային շերտի քսումը քարե կամ բետոնե հարթ մակերևույթի վրա կատարվում է առանց աստառի՝ անմիջապես հիմքի վրա:

Ըստ որակի սվաղները բաժանվում են երեք կարգի. հասարակ, բարելավված և բարձրորակ:

Ճակատները սվաղվում են ճնշածեփ (տորկրետ) սվաղի միջոցով: Հիմքը լավ մաքրում են, անհրաժեշտության դեպքում մշակում են ավազաշիթային ապարատի միջոցով, նախապատրաստված մակերեսը լավ լվանում են ջրով: Սվաղի ընդհանուր հաստությունը հացնում են մինչև 1.5-3 սմ, կատարելով այն մի քանի 8-10 մմ հաստության շերտերով՝ քսելով ամեն շերտը նախորդից 1 օր հետո:

Սվաղային աշխատանքները թույլատրվում է կատարել եթե արտաքին պատերի մոտ, հատակից 0.5 մ բարձրության վրա կայուն միջին ջերմաստիճանը պակաս չէ +8´C: Ավազի չորացման արագացման համար անհրաժեշտ է ջերմաստիճանը հասցնել 10-16, բայց առաստաղի մոտ 30´C ոչ ավելի: Ցեմենտային սվաղը չորացնում են 6-7 օր առանց տարածքը օդափոխելու, քանզի նրանց ամրացման շրջանում անհրաժեշտ է խոնավ օդ:

**Լաքաներկային աշխատանքներ**

Լաքաներկային ծածկույթների նշանակություններն են՝ տեխնիկական, սանիտարական, դեկորատիվ: Բաղադրությունների ճիշտ ընտրության դեպքում այդ երեք նպատակները, որպես կանոն, համատեղում են:

Կատարվող տեխնոլոգիական գործառնությունների թվից կախված, ծածկույթները, ըստ որակի, բաժանված են հետևյալ կարգերի՝ հասարակ, բարելավված և բարձրորակ:

Կախված ծածկույթներում ներկարարական բաղադրությունների նշանակություններից տարբերում են նրանց հետևյալ տեսակները.

աստառներ, որոնք ապահովում են ծածկույթի շաղկապումը մակերևույթի հետ,

- մածվածքներ և քսուկային մածուկներ, որոնք հարթեցնում են ներկման ենթակա մակերևույթը,
- ներկող բաղադրանյութեր, որոնք մակերևույթին տալիս են տեխնիկական, պաշտպանիչ և դեկորատիվ հատկություններ:

Ջրային ներկարարական բաղադրություններ

| *Անվանումը* | *Բաղադրությունը* | | *Աշխատանքային մածուցիկությունը մածուցիկաչափ B-3-4 վրկ* | *Աշխատանքային կենսունակություն, ժ* | *Գործնական չորացման ժամկետները, ժ* | *Նշանակումը* |
|---|---|---|---|---|---|---|
| | *Բաղադրամաս* | *Մանակը զանգ.մաս* | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Ջրա-կավիճային սոսնձված | Կավիճային մածուկ սոսինձ ջուր | 100<br><br>0.5-0.6 բանվորական խտության | 48 | 48 | 12 | Առաստաղների և պատերի որմնագորգերի ներկում ծեփի, բետոնի և մածվածքի վրայով |

<table>
<tr><td>Կրային</td><td>չհանգած<br>կիր<br>օլիֆ<br>գունանյութ<br>հիմքակայոն<br>ջուր</td><td>1.4<br>0.8-0.3<br><br>10</td><td>25</td><td>Չարմավորված</td><td>18</td><td>Ճակատների և ներքին սրահների քարե, ծեփե և բետոնե մակերևույթներ</td></tr>
<tr><td rowspan="2">Կրա-ցեմենտա-ավազային գունավոր</td><td colspan="2">Շաղախացրիչով ներկելու համար ըստ ծավ. մաս</td><td rowspan="2">12-13 (ըստ ստանդարտային կոնի)</td><td rowspan="2">0.5 (շաղախումից հետո)</td><td rowspan="2">24</td><td rowspan="2">Ճակատների ներկում ծեփի վրայով</td></tr>
<tr><td>Ցեմենտ Մ300<br>Կրափոշի<br>Քարեալյուր<br>հիմքակայուն<br>գունանյութ<br>ջուր</td><td>1<br>2<br>3-6<br>0.-0.3<br>բանվոր ական խտություն</td></tr>
<tr><td>Սիլիկատային (ԳՕՍՏ 18958-73(կամ հարժեք))</td><td>հանքային հիմնակայուն գունանյութերի և լցանյութերի չոր խառնուրդ հեղուկ ապակի 1.18-1.2 գ/խսմ խտության</td><td>1<br><br>1</td><td>16</td><td>12</td><td>12</td><td>Շենքերի ճակատների և սանդղավանդակների ներկում քարի, բետոնի, ծեփի, մածվածքի վրայով</td></tr>
</table>

Էմուլսային ներկարարական բաղադրություններ

| Անվանումը | Բաղադրություն | Աշխատանքային մածուցիկությունը ըստ B3-4, | Աշխատանքային կենսունակություն, ամիս | Չորացման ժամկետը, ժ | Նշանակում |
|---|---|---|---|---|---|
| Ջրաէմուլսային ԷՎԱ-17, ԷՎԱ-17Ա (ԳՕՍՏ 20833-75*)(կամ հարժեք) | Լցիչի և գունանյութի կախույթ պլաստիկացված պոլիվինիլացետատային ցրվածքում էմուլսարարի և կայունարարի ավելացումով | 80 | 6 | 1 | Արտաքին և ներքին մակերևույթների փայտե, սվաղված բետոնե, մետաղե առաստաղապատված, յուղե կամ գլիֆտալային առաստաղանյութերով, ինչպես նաև հին ծածկույթների (յուղային, էմուլսային, էմալային) վերնամշակում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ջրաէմուլսային ԷՎԱ-27, ԷՎԱ-27Ա (ԳՕՍՏ 19214-80(կամ հարժեք)) | Նույնը | 80 | 6 | 1 | Ներքին մակերևույթների ներկում. մարե, բետոնե, սվաղված, մածվածքային, փայտե: Արգելվում է ծածկել շիբային և արջասպային աստառապատման դեպքում; կատարել աշխատանքներ բացասական աստիճանների ժամանակ: |
| Ջրաէմուլսային Է-ՎՍ-17, Է-ՎՍ-44 (ԳՕՍՏ 20833-75*(կամ հարժեք)) | Պոլիվինիլացետատային էմուլսիայում բարակ ցրվածքով գունանյութի կախույթ | 60-80 | 6 | 2 | Ցանկացած արտաքին մակերևույթների ներկում |

Էմուլսային բաղադրություններ փայտե մակերեսներ ներկելու համար
(տոկոսներով ըստ քաշի)

| *Նյութեր* | *Արտաքին ներկման համար* | | *Ներքին ներկման համար* | |
|---|---|---|---|---|
| | *M-1* | *M-2* | *M-3* | *M-4* |
| Օլիֆ բնական | 20.00 | 20.00 | - | - |
| Օլիֆ “Օքսոլ” | - | - | 29.30 | 28.30 |
| Լաք բնեկնախեժային | 4.36 | 4.36 | 2.20 | 4.00 |
| Սոսինձ սալիկավոր | 10.40 | - | 9.40 | - |
| Կազեին թթվային | - | 10.4 | - | 9.4 |
| Կրախմոր | 11.8 | 11.80 | 9.70 | 9.70 |
| Ջուր | 53.44 | 53.44 | 48.60 | 48.60 |

Անջուր ներկարարական բաղադրություններ

| *Անվանումը* | *Մինչև աշխատանքային խտության լուծելու համար* [illegible] | *Աշխատանքային մածուցիկությունը ըստ B3-4, վրկ* | *Ներկարարական խտության ներկի* [illegible] | *Չորացման ժամանակը, 20´C, ոչ ավելի* | | *Նշանակումը* |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | *փոշուց* | *լրիվ* | |
| Խիտ քերած, ցինկի շպատ MA-011, MA-011B, MA-011H, MA-011HB մակնիշների (ԳՕՍՏ 482-77(կամ հարժեք)) | 18-25 | 70-130 | 170-200 | 10 | 24 | Արտաքին և ներքին ծածկույթներ: Արտաքին ծածկույթների համար շպատը լուծում են բնական օլիֆով: |
| Ներկեր յուղային և ալկիդային, գունավոր, խիտ քերած, MA-021, MA-025, GF-023, PF-024 մակնիշների (ԳՕՍՏ 695-77*(կամ հարժեք)) | 40 | 80-140 | 120 | 12 | 24 | Ներքին մշակման աշխատանքներ և շենքերի ներսում շահագործվող շինվածքների ներկում |
| Ներկեր յուղային և ալկիդային, պատրաստ կիրառման համար, MA-11, MA-11H, MA-15, MA-15H, GF-13, GF-13H, PF-14, PF-14H, MA-22, MA-22H, MA-21, MA-21H, MA-25, MA-25H | - | 65-140 | 65-200 | 12 | 24 | Արտաքին և ներքին վերջնամշակման աշխատանքներ (բացառությամբ հատակների ներկման) |

Էմալներ

| *Անվանումը* | *Բաղադրությունը* | *Լուծիչ* | *Աշխատանքային մածուծիկություն ը ըստ B3-4, վրկ* | *Աշխատանքային կենսունակությու…* | *Գործնական չորացման ժամկետը, ժամ* | *Նշանակումը* |
|---|---|---|---|---|---|---|
| Գլիֆտալային GF-230 (ԳՕՍՏ 64-77*(կամ հարժեք)) | Գունաներկեր և լցանյութերի կախույթ գլիֆտալային լաքում, ավելացրած սիկկատիվ և լուծիչ | Բենզին, լուծիչ | 70-150 | 12 | 12 | Շենքերի ներքին մակերևույթների ներկում, փայտի, մետաղի, առաստաղապատման վրայով (բացի հատակներից) |
| Պենտաֆտալային PF-115 (ԳՕՍՏ 6465-76*(կամ հարժեք)) տարբեր գույների | Տիտանի և այլ գունանյութերի, լցանյութերի երկու օքսիդի կախույթ պենտաֆտալային լաքում սիկկատիվի և լուծիչների ավելացումով | Սոլվենտ բենկնախեժ, բենզին-լուծիչ | 80 | 12 | 48 | Մթնոլորտային ազդեցություններին ենթարկվող մետաղե, փայտե և այլ մակերևույթների ներկում |
| Տիսոտրոպային (դարձունակ)PF-14 | Դոնդող գունանյութերից պենտաֆտալաձև լաքից բետոնիտի և լցանյութի ավելացումով | բենզին-լուծիչ | 25-60 | 6 | 24 ոչ ավելի | Ժատուհանների և պատշգամբների բլոկների ներկում |

Լաքեր

| Անվանումը | Բաղադրություն | Աշխատանքային մածուծիկությունը (20К2) ´С ըստ B3-4, վրկ | Պահպանման ժամկետը, ժ | Նշանակումը |
|---|---|---|---|---|
| Լաք PF-283 և GF-166 (ԳՕՍՏ 5470-75*(կամ հարժեք)) | Ցրզանական լուծիչներում բուսական յուղերով մոդիֆիկացված ալկիդային և բնական ձյութերի շաղախ | 40-60 | 36-48 | Յուղաներկի և փայտի վրայով ծածկույթի համար |
| Պենտաֆտալային PF-231, բաց շագանակագույն | Բուսական յուղերի կամ տալային յուղի սիկկատիվի ավելացումով ճարպային թթուներով մոդիֆիկացված սինթետիկ | 40-60 | 72 | Ճայտե սալիկներով հատակների ծածկույթի համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պենտաֆտալային խեղի բենզին-լուծիչում շաղախ | | | |
| Լաք BT-5100 (ԳՕՍՏ 312-79(կամ հարժեք)), սև | Նաֆթային բիտումի շախաղ ցնդող լուծիչների խառնուրդում պինդ նավթային կուպրի կամ ասֆալտի ավելացումով | 25-40 | 2 | Արագ չորացում պահանջող մետաղե պատրաստվածքների ծածկույթի համար |

Ներկարարական աշխատանքները կատարում են օդի ջերմաստիճանի 10´C ոչ ցածր լինելու դեպքում:

Սվաղված միջնորմների խոնավությունը պետք է լինի 8%-ից ոչ ավել:

Փայտանյութի թույլատրվող խոնավությունը՝ 12%:

Մետաղե կոնստրուկցիաները պետք է մաքրված լինեն ժանգից, կիզուկից և ճարպային բծերից: Խողովակների և սարքերի ներկումը կատարում են միայն նրանց միջից ջրի հեռացումից հետո:

Շենքերի ներսում ջրային բաղադրություններով մակերևույթների ներկման գործողությունները բերված են աղյուսակում.

| Գործողությունը | Ներկվածք | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Սոսնձային | | | Կրային | | Կազեինային | | Սիլիկատային | Էմուլսիային |
| | Հասարակ | Բարելավված | Բարձրորակ | Սվաղի վրայով | Փայտի և քարի վրայով | Բարելավված | Բարձրորակ | | |
| Մաքրում | + | + | + | + | + | + | + | + | + |
| Ջրով թրջում | - | - | - | + | + | - | - | - | - |
| Հարթեցում փայտի կողճակատով | + | + | + | + | - | + | + | - | - |
| Ճեղքերի հարդարում | - | + | + | + | - | + | + | - | + |
| Առաջին | + | + | + | + | + | + | + | + | + |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| աստառապատում | | | | | | | | | |
| Մասնակի քսում | - | + | + | + | - | + | + | - | - |
| Քսված տեղերի հղկում | - | + | + | + | - | + | + | - | - |
| Առաջին հոծ մածիկապատում | - | - | + | - | - | - | + | - | - |
| Հղկում | - | - | + | - | - | - | + | - | - |
| Երկրորդ մածիկապատում | - | - | + | - | - | - | + | - | - |
| Հղկում | - | - | + | - | - | - | + | - | - |
| Երկրորդ աստառապատում | - | - | + | - | - | - | + | - | - |
| Երրորդ աստառապատում (գունավորումով) | - | - | + | - | - | - | - | - | - |
| Ներկում | + | + | + | + | + | + | + | + | + |
| Կոճղաճակատում | - | - | + | - | - | - | + | - | - |

Առաջին աստառապատումը կատարվում է մորթե զլանիկներով, իսկ մաքուր փոշեզրկված մակերևույթի դեպքում՝ ներկացրիչի օգնությամբ՝ օգտագործելով կրային, սիլիկատային կամ այլ աստառանյութեր, որոնք համապատասխանում են ներկման նշանակված տեսակին:

Խորակները, կոտրվածքները, խանդակները հիմքի մակերևույթի վրա ուղղում են մածուկով: Մածուկապատ տեղերը չորանալուց հետո հղկում են աբրազիվ N8-12 հղկաթղթով, որն ամրացված է փայտե կոճղակում թաղիքե ներդիրով: Ապա այդ տեղերըներկաստառում են բաղադրությամբ, որը կիրառված էր հոծ աստառապատման համար վրձինի խաչաձև շարժման ժամանակ:

Հոծ աստառապատումը կատարում են մեքենայացված եղանակով մի սարքավորման օգնությամբ, որը կազմված է կոմպրեսորից, ներկամղիչ տաշտակից և ձեռքի ներկացրիչից: Այդ դեպքում մածվածքը պետք է ունենա 11-12 սմ շարժողականություն ըստ չափանմուշ կոնի:

Մակերևույթի վրա քսված մածվածքային բաղադրությունը հարթում են ռետինե ծայրակալ ունեցող մակաթիակով, առաստաղների վրա երկարացված բռնակով և մածվածքային բաղադրության ավելցուկները հավաքելու համար տարողուքյամբ (ներկաքերիչի միջով վերամշակումից հետո այն նորից օգտագործում են), իսկ պատերի վրա ՝ սովորական բռնակով:

Մեծ մակերևույթի վրա մածվածքի առաջին շերտի ձեռքով քսելու ժամանակ սովորաբար օգտագործում են մածկաթիակներ կոշտ փայտաթելավոր սալից բանվորական եզրի 300-350 մմ լայնությամբ: Մածվածքը քսում են մակերևույթի վրա ձախից աջ երկայնական զոլերով, յուրաքանչյուր անգամ վերածածկելով 3-5 սմ-ով նախկին շերտը: Մածկաթիակն այդ դեպքում պահում են այնպես, որ նրա ձախ կողմը իջեցված լինի որոշակի անկյան տակ, ինչը հնարավորություն է տալիս քսել մածվածքը տարբեր հաստության: Ավելի հաստ շերտ քսելիս թիակը պահում են 40-60΄ տակ, իսկ բարակ շերտի համար 80΄ անկյան տակ:

Մածվածքի շերտը չորանալուց հետո մակերևույթը հղկում են կապարի մեջ ամրացված N8-12 հղկաթղթով: Հղկումից հետո մակերևույթը մաքրում են փոշուց մազե խոզանակով կամ թափային վրձինով:

Մածվածքված մակերևույթներն անհրաժեշտ է երկրարդ անգամ աստառապատել: Աստառապատման շերտը քսում են գլանիկներով կամ թափային վրձիններով: Վրձիններն ավելի գերադասելի են, քանի որ այդ դեպքում ավելի մեծ է թաղանթի կապակցումը մակերևույթի հետ:

Պատերի վրա մածվածքի (15-15 շարժողունակությամբ ըստ չափանմուշային կոնի) երկրորդ շերտի մեքենայացված քսումը կատարում են ձեռքով՝ օդամղիչ ներկացրիչով: Բաղադրությունը քսում են առաջին մածվածքի մանրազնին աստառապատված մակերևույթի վրա նույնպես զուգահեռ զոլերով: Քսված բաղադրության չորանալուց հետո , եթե պահանջվում է, մակերևույթը հղկվում է:

Բացի մեքենայացված եղանակից, մածվածքը քսում են նաև ձեռքով, բայց շերտի հաստությունը կազմում է միայն 0.1-0.12 մմ: Ավելի լավ որակի են հասնում, երբ բաղադրությունը քսում են կոշտ ռետինե ծայրակալ ունեցող (150-180 մմ լայնությամբ) մածկաթիակով:Բաղադրության մածուծիկությունը 11-12 սմ ոչ ավելի ըստ չափանմուշային կոնի: Մածվածքի երկրորդ շերտը քսելուց հետո այն հղկում են հղկաթղթով, որն ամրացված է փայտե կոճղակի վրա:

Գունավորումով երրորդ աստառապատումըկիրառում են մակերևույթի գունավոր երանգներով բարձրորակ ներկման դեպքում: այլ դեպքերում կիրառում են նույն աստառների բաղադրությունները, ինչ որ առաջ: Նախաներկման գունավորման համար նրան ավելացնում են 3-4 % (ըստ զանգվածի) գոնանյութեր, որոնք նախապես լուծված են ջրում և քերված ներկաքերիչի վրա: Գունանյութի երանգը նույնն է, ինչ որ կիրառվողինը: Քսում են աստառապատման բաղադրությունը միայն թափային վրձինով, մանրազնին ստվերագծելով երկու ուղղություններով:

Ներկվածքային բաղադրության քսումը կատարում են քարթերով, ջրա-կավային և կրային բաղադրությունների մեխանիկական փշրումով առաստաղների և պատերի ներկման ժամանակ (բաղադրությունների կպչունությունը 20-22 վ ըստ В3-4 մածուծիկաչափի) ձեռքի ներկացրիճներով ներկվածքայուն բաղադրությունների օդամղիչ և հիդրոդինամիկ (ԽԾՃ սոսնձի հիման վրա բաղադրությունների համար) փշրումով պատերի ներկման ժամանակ (բաղադրությունների կպչունությունը 35-40 վ ըստ В3-4 մածուծիկաչափի); գլանիկներով, "մակլավիցաներով" և թափային վրձիններով օգտագործելով կենդանական սոսինձների հիման վրա բաղադրությունները առաստաղների և պատերի ներկման ժամանակ (մածուծիկությունը 30-35 վ ըստ մածուծիկաչափի):

Թարմ ներկված մակերևույթների ճակատասալումըկատարում են միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ է վերացնել վրձնի հետքերը:

Բարելավված ներկման համար մակերևույթների պատրաստման ժամանակ, կոնստրուկցիաների գործարանական ցածր պատրաստվածության պատճառով երբեմն անհրաժեշտ է դառնում նրանց հոծ մածվածքը երկու շերտերով և աստառապատումով: Մածվածքի մեքենայական քսման դեպքում կիրառում են օգտագործման համար սինթետիկ մածվածք ԽխԾ (կարբոքսիլատեքսակավիճային) հետևյալ կազմի (%-ով ըստ զանգվածի).

| | |
|---|---|
| Կարբոքսիմետիլցելյուլոզային սոսինձ ԽԾՃ (8%-ոց լուծույթ) | 20 |
| Լատեքս СКС-30 | 4 |
| Ասիդոլ | 2 |
| Օճառ (10%-ոց լուծույթ) | 1 |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են էմալային, սինթետիկ և յուղաներկվող մակերեսների նախապատրաստման և ներկման ժամանակ կատարվող տեխնոլոգիական գործույթները.

| Գործույթ | Ներկում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Փայտի վրա | | | Բետոնի և սվաղի վրա | | | Մետաղի վրա | |
| | Հասարակ | Բարելավված | Բարիկրոակ | Հասարակ | Բարելավված | Բարձրորակ | Հասարակ | Բարելավված |
| Մաքրում | + | + | + | + | + | + | + | + |
| Մակերևույթի հարթեցում | - | - | - | + | + | + | - | - |
| Ոստիկների և խեժակալների կտրում ճեղքերի հարդարմամբ | + | + | + | - | - | - | - | - |
| Ճեղքվածքների հարդարում և լրացում | - | - | - | + | + | + | - | - |
| Աստառապատում(օլիֆապատում) | + | + | + | + | + | + | + | + |
| Մասնակի քսում քսված տեղերի աստառապատմամբ | + | + | + | + | + | + | + | + |
| Քսված տեղերի հղկում | + | + | + | + | + | + | + | + |
| Առաջին հոծ մածվածքապատում | - | + | + | - | - | + | - | + |
| Հղկում | - | + | + | - | - | + | - | + |
| Երկրորդ հոծ մածվածքապատում | - | + | + | - | - | + | - | + |
| Հղկում | - | + | + | - | - | + | - | + |
| Աստառապատում | - | + | + | - | + | + | - | - |
| Լայնավրձնով պատում | - | + | + | + | + | + | + | + |
| Հղկում | - | + | + | - | + | + | - | - |
| Առաջին ներկապատում | + | + | + | + | + | + | + | + |
| Լայնավրձնով պատում | - | + | + | - | + | + | - | - |
| Հղկում | - | + | + | - | + | + | - | - |
| Երկրորդ ներկապատում | + | + | + | + | + | + | + | + |
| Լայնավրձնով պատում կամ ճակատասալում | - | + | + | - | + | + | - | - |

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են նյութերի զուգորդության օրինակներ ջրաէմուլսիոն բաղադրություններով ներկելու դեպքում.

| *Ջրաէմուլսային բաղադրություններ* | *Մակերևույթների տեսակներ* | *Օլիֆա պատում* | *Մածվածք* | *Աստառապատում մածվածքի վրայով* | *Ներկում* |
|---|---|---|---|---|---|
| Պոլիվինիլացետատային | փայտ, սվաղ, բետոն, պողպատ | "Օքսոլ" օլիֆ, գունավորումով | Ցուղասոսնձային | պոլիվինիլացետատային ներկեր, 40-50 վ ըստ B3-4 | պոլիվիվնիլացետատային ներկեր երկու շերտով |
| Ստիրոլբուտադիենային | փայտ, սվաղ, բետոն, պողպատ | Նույնը | Նույնը | ստիրոլբուտադիենային ներկեր (1:1) | ստիրոլբուտադիենային ներկեր 2-3 շերտով |

**Ջրամեկուսացման աշխատանքներ**

Ջրի (գոլորշու) և ագրեսիվ լուծույթների ազդեցությունից շինարարական կոնստրուկցիաների պաշտպանությունը և դրանով շենքերի և կառույցների ապահովության բարձրացումն ու նրանց հարատևությունը ապահովում են ջրա- և գոլորշամեկուսիչ աշխատանքների կատարմամբ:

Ներկայումս տարածում են ստացել ներկարարական, սվաղային, քսուկային, ձուլածո, սոսնձվող, թերթային ջրամեկուսիչ ծածկույթները:

| *N* | *Տեսակը* | *Կիրառման ոլորտը* |
|---|---|---|
| 1 | Սվաղային ցեմենտավազային ասֆալտային ծածկույթներ | Կարերի միաձուլում, արտաքին ջրամեկուսացում: Բարձր ամրության ծածկույթներ մազանոթային խոնավության դեմ պայքարի համար, անփաթթոց ծածկույթներ, ասֆալտաբետոնի մակերևույթի մշակում, դեֆորմացիոն կարերի միաձուլում: |

| | | |
|---|---|---|
| 2 | Զուլածո (ասֆալտային) | Ուղղաձիգ, թեք, հորիզոնական մակերևույթներ, ջերմակծկումային կարեր, կառույցների երիթներ: |
| 3 | Ներկվածքային և քսուկային (բիտումային, բիտումա-ռետինային, պոլիմերային մածիկներ) | Արտաքին և ներքին ջրամեկուսացում. գործվածքների տոգորում, դեֆորմացիոն նստվածքների, թրթռումների չենթարկվող շենքերում մազանոթային խոնավությունից պաշտպանում: |
| 4 | Փաթթոցային, ճկուն թերթային և թաղանթային նյութեր | Ջրի հիդրոստատիկ ճնշման ազդեցության կողմից այն կոնստրուկցիաներում, որոնք ենթարկվում են դինամիկ բեռնվածքների և անհավասարաչափ տեղումների: |
| 5 | Թերթային (համատարած ցանկապատ եռակցված պողպատե կամ վինիլպլաստե թերթերից) | Պատասխանատու կառույցներ, եթե առկա են մեծ հիդրոստատիկ ճնշմամբ ազրեսիվ ջրեր և դինամիկ բեռնվածքներ: |

Բիտումային, ռետինա-բիտումային և բիտումա-պոլիմերային մածիկները կիրառվում են տաք վիճակում փաթթոցային ջրամեկուսացման համար, ինչպես նաև ապակե նյութերով ամրանավորված մածիկային մեկուսացման համար: Բիտումային մածիկները (ԳՕՍՏ 2889-80(կամ հարժեք)) պարունակում են մինչև 75% բիտում և 25% լցանյութ, ինչպես նաև հերբիցիդներ և հականեխիչներ:

Փաթթոցային ջրամեկուսիչ նյութերն են. ռուբերոիդ (АСТ ԳՕՍՏ 10923-94(կամ հարժեք)), հիդրոիզոլ (ԳՕՍՏ 7415-86(կամ հարժեք)), տոլ (ԳՕՍՏ 10999-76(կամ հարժեք)), ապակեռուբերոիդ (ԳՕՍՏ 15879-70(կամ հարժեք)), իզոլ (ԳՕՍՏ 10296-79(կամ հարժեք)):

**Դռներ և լուսամուտներ**

Հիվանդանոցում նախատեսված է տեղադրել պատուհաններ և մուտքի ու միջացքների, ինչպես նաև սանհանգույցների դռներ մետաղապլաստե պրոֆիլներից, սպիտակ գույնի, ապակեփափեթով և հիվանդասենյակներում, աշխատասենյակներում, միջամտության սենյակներում և օժանդակ այլ սենյակներում նախատեսված է ՄԴՖ նյութից՝

հիվանդասենյակներում թրծած ապակուց հատվածամասով: Ընդ որում պրոֆիլների լայնությունը պետք է լինի 60-70 մմ-մետաղոպլաստի դեպքում և 40-50 մմ ՄԴՖ-ի դեպքում, իսկ խցիկների  քանակը՝ ոչ պակաս քան 3-ը: Ջերմակորստի գործակիցը պետք է չգերազանցի *1.5:* Դռներն ու լուսամուտները նախագծային դիրքի բերվելուց հետո ամրացվում են պատերին (միջնորմներին, սյուներին), հատակին և բարավորին  թիթեղյա ժապավենների և դյուբելների միջոցով: Մնացած տարածությունը լցվում է փրփուրով: Մ/Պ պատուհաններին նախատեսվում են բարդ փականներ՝ յուրաքանչյուր սենքում առնվազն մեկ հատ և միջատապաշտպան ցանցեր:

**Ներքին ջրամատակարարման և կոյուղու աշխատանքներ**

Ներքին սանիտարատեխնիկական համակարգերի մոնտաժումը իրականացվում է համաձայն ՍՆիՊ 3.05-85-C պահաջների, ինչպես նաև ՍՆիՊ 478-80, ՍՆիՊ 3.01-85, ՍՆիՊ 3-3-81-ի, ստանդարտների և արտադրող ֆիրմաների տեխնիկական պայմանների և հրահանգների:

Մինչև սանիտարատեխնիկական համակարգերի մոնտաժումը պետք է կատարված լինեն հետևյալ աշխատանքները.

- միջնորմների իրականացում, որոնց վրա պետք է տեղադրվեն սանիտարատեխնիկական սարքերը,
- թողնված կամ բացված են անցքեր, ակոսներ, խոռոչներ պատերի, հիմքերի, միջնորմների, ծածկերի, տանիքի վրա համաձայն նախագծի
- շինկոնստրուկցիաներում տեղադրված են ներդիր դետալներ խողովակների և սարքերի ամրակապման համար
- փորված է խրամուղի կոյուղու թողարկի համար շենքից մինչև առաջին դիտահոր, ինչպես նաև ներացման համար
- սվաղված և երեսապատված են պատերի, միջնորմների և որմնախորշերի սանիտարական սարքերի տեղադրման տեղերը

Դիահերձարանում նախատեսված է տաք և սառը ջրի անցկացման համար օգտագործել d= 36, 28, 22, 16 մետաղապլաստե խողովակներ լազերային եռակցմամբ կարով, պտուտակային միացնող աքսեսուարներով; և պողպատե ջրազազատար խողովակներ d=50, 40 եռակցումով:

Կոյուղագիծը նախատեսվում է իրագործել 5 մմ հաստությամբ պլաստմասե d=200, 150, 100, 50 խողովակներով, ռետինե ներդիրներով; ամրացումը պատերին՝ համապատասխան տրամագծի ձևավոր մասերով:

Արտաքին կոյուղագծին տեղադրվում են գործարանային արտադրության բետոնե կլոր դիտահորեր, պատի հաստությունը 10-12 սմ, տրամագիծը՝ 1000-1500 մմ; թուջե մտոց երկաթբետոնե սալով d= 700 մմ:

Փականները և հակադարձ փականները (տարբեր տրամաչափերի) բրոնզից են: Ջրագծի մուտքի վրա նախատեսվում է տեղադրել d=32 ջրաչափ և զտիչ:

Ծպեղնահարկում նախատեսվում է տեղադրել պլաստմասե ջրի պաշարային բաքեր՝ ըստ տարողության:

Դիահերձարանում նախատեսվում է տեղադրել.

- կերամիկական, թեք միացումով, իր սովորական ջրի ողողման բաքով զուգարանակոնքեր,
- կերամիկական, պատին ամրացվող, իր հատակային հենարանով լվացարաններ,
- էմալապատ, 900x900 մմ չափսերով, խորը հատակային տակդիրներ,
- ներքևի միացումով հոսակներ:

Ստորև ներկայացված են մետաղապլաստե խողովակաշարի անցկացման առաջարկներ, որոնք ապահովում են դրա որակը.

- խողովակների կտրումը իրականացնել միայն հատուկ մկրատներով
- խողովակների վերջույթները պարտադիր կալիբրացվում և վալցովկա են արվում ֆիրմայի կողմից տրամադրված գործիքներով
- բոլոր խողովակները ծռվում են 90΄-180΄ միայն հատուկ զսպանակի միջոցով , ընդ որում ծռման շառավիղը պեք է մեծ լինի խողքվակի հնգակի տրամագծից:
- մոտաժումից առաջ խցուկները (սալնիկները) պատվում են հատուկ էմուլսիայով
- խողովակի ծռումը սկսվում է անցումից ոչ մոտ, քան 5 սմ
- պարուրակային (ռեզբա) միացումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝
    ա. պարուրակները խազվում են 3-4 տեղով մետաղյա գործիքով
    բ. փաթաթվում է կանեփի թել (պակլի)
    գ. թելը ծծեցվում է սիլիկոնով
    դ. վերնից փաթաթվում է տեֆլոնային ժապավենով

ե. կատարվում է պարուրակային միացման ձգում ձեռքով, որից հետո՝ 1/2 պտույտ գործիքով (բանալիով):

Ներքին տաք և սառը ջրի համակարգի փորձարկումը կատարվում է հիդրավլիկ կամ պննմատիկ մեթոդով՝ համաձայն ԳՕՍՏ 25136-82-ի(կամ հարժեք) պահաջների:

Կոյուղու համակարգի փորձարկւմը կատարվում է սանիտարատեխնիկական սարքերի 75%-ի միաժամանակ բացումով փորձարկվող հատվածները լցնելով, որի ընթացքում չպետք է դիտվեն խողովակների վրա կամ հանգույցներում ջրի հետքեր կամ կաթիլներ: Փորձարկումը կատարվում է օդի ջերմաստիճանը 5´C-ից բարձր դեպքում:

**Ջեռուցման և օդափոխության աշխատանքներ**

Մինչև ներքին ջեռուցման և օդափոխության համակարգի մոնտաժումը շինարարական կազմակերպության կողմից պետք է իրականացվեն հետևյալ աշխատանքները. իրականացվեն պատերը և միջնորմները, որոնց վրա պետք է ամրացվեն խողովակները և սարքավորումները, օդափոխության ներծծման խցերի կոնստրուկցիաները, ջեռուցման և օդափոխության սարքավարումների հիմքերը կամ հարթակները, իրականացվեն ջրամեկուսացման աշխատանքներ այն տեղերում, որտեղ պետք է տեղադրվեն տաքացվող սարքերը և օդափոխիչները (որոնք տեղեդրվում են զսպանակավոր թրթուռամեկուսիչների վրա):

Շինությունում նախատեսվում է օգտագործել ջեռուցման ալյումինե սեկցիոն և պանելային մարտկոցներ H=500 մմ; պոլիպրոպիլենային խողովակներ d=15-32Ф և ավել, որոնք ապահովում են 12կգ/ քմ ճնշում; պողպատե խողովակներ d=25-80 (իրենց պարագաներով):

Մետաղապլաստե խողովակաշարի անցկացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել արտադրող ֆիրմայի տեխնիկական պայմանները և սույն “Հիմնական դրույթների” սանտեխնիկական աշխատանքներում բերված ցուցումները:

Նախատաեսվում է տեղադրել կանալային կոնդիցիոներներ, որոնց օդը համապատասխան սենյակներին մատակարարվում է թերթավոր ցինկապատ թիթեղից պատրաստված օդատարներով, որոնք ավարտվում են ժալյուզային ցանցերով: Բոլոր օդամտարները միացվում են միմյանց շրջակակների միջոցով; շրջանակների միջև տեղադրվում է ռետինե միջադիր՝ հերմետիկությունը ապահովելու համար: Օդատարների մոնտաժման աշխատանքները ավարտելուց հետո դրանք տանիքում, իսկ ներաշման

դեպքում ամբողջությամբ մեկուսացվում են ֆոլգայապատ հանքային բամբակով, մեկուսացման շերտը ամրացվում է մետաղական լարով, իսկ օդատարները ամրացվում են մետաղքական պրոֆիլներով և ճգաններով առաստաղներին կամ պատերին: վիրահատական բլոկի օդատարները HEPA ֆիլտրներից հետո նախատեսվում է իրականացնել չժանգոտվող պողպատից թերթերով:

Օդի արտածումը իրականացվում է տանիքային օդամուղների միջոցով:

**Էլեկտրամոնտաժային աշխատանքներ**

**Էլեկտրատեխնիկական սարքերի  մոնտաժում**

Էլեկտրատեխնիկական սարքերի  մոնտաժման և կարգավորման աշխատանքները պետք է կատարվեն նախագծերի և տեխնիկական մասնագրերի պահաջներին համապատասխան: Էլեկտրամոնտաժային աշխատանքները որպես կանոն պետք է կատարվեն երկու փուլերով:

Առաջին փուլում շենքի ներսում կատարվում է էլեկտրասարքավորումներիտեղադրման, մալուխների, հաղորդալարերի անցկացման համար հենարանների, ինչպես նաև պողպատյա և պլաստմասե պատյանների մոնտաժում: Մինչև հարդարման աշխատանքների սկիզբը տեղադրվում են ծածկվող մալուխները և հաղորդալարերը: Մոնտաժվում են նաև արտաքին մալուխային ցանցերը, իրականացվում են հողանցումները:

Երկրորդ փուլում կատարվում են էլեկտրասարքավորումների, մալուխների և հաղարդալարերի մոնտաժման և միացման աշխատանքներ: Այս փուլի աշխատանքները պետք է կատարվեն հարդարման, սանտեխնիկական աշխատանքների, ինչպես նաև տեխնոլոգիական սարքավորումների, օդատարների մոնտաժումն ավարտելուց հետո:

Հողի մեջ մալուխի տեղադրումից առաջ իրականացվում են հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

- խրմատից հեռացվում են ջուրը, քարերը, հողոկույտերը, շինարարական աղբը,
- ճանապարհի և այլ կոմունիկացիաների հատման տեղերում բացվում են անցքեր, տեղադրվում խողովակներ
- մալուխը տեղադրելուց հետո կազմվում է ծածված աշխատանքների ակտ, որից հետո իրականացվում է հետլիցք:

Շենքերի ներսում նախապատրաստվում են ծածկի պանելները, պատի կոնստրուկցիաները, միջնորմները, սյուները և հեծանները: Նախագծին համապատասխան իրականացվում են ակոսներ՝ հաղորդալարերը անցկացնելու համր և ներդիր մասերով ծոռոչներ անջատիչների, տուփերի, կոճակների ամրացման համար:

**Էլեկտրահաղորդալարերի մոնտաժումը**

Պատյանավորված մալուխե անցումները չհրկիզվող պատերի և միջհարկային ծածկերի միջով պետք է իրականացվեն խողովակների կտորների մեջ, տուփերում կամ բացվածքների մեջ: Պատերի և ծածկերի այն տեղերը, որտեղով անցնում են լարերը, մալուխները, դրանց և խողովակների միջև անցքերը պետք է երկու կողմից լցվեն հեշտ հառացվող նյութով:

Հաղորդալարերի նվազագույն թույլատրվելի կտրվածքը տարբեր նշանակության սարքերի էլեկտրասնուցման համար բերված է աղյուսակում.

| *Հաղորդալարերի անվանումը* | *Պղնձե* | *Ալյումինե* |
|---|---|---|
| Լուսավորող սարքերի հաղորդալար շենքի ներսում | 0.5 | |
| Նույնը՝ շենքից դուրս | 1 | |
| Երկթելանի քուշեր և հաղորդալարեր կախովի և սեղանի լամպերի համար, շարժական լուսավորող սարքերի միացման և տեղափոխվող հոսանքընդունիչների համար | 0.75 | |
| Բազմաթելանի լարեր, հաղորդալարեր և մալուխներ, արդյունաբերական սարքավորումներում, շարժական հոսանքընդունիչների համար թեթև և միջին պաշտպանիչ ռետինե և պոլիքլորվինիլային ճկափողում | 1 | |
| Նույնը՝ ծանր ճկափողում | 2.5 | |
| Մեկուսացված լարեր հենարանների վրա անշարժ տեղադրելու համար՝ հոլովակների վրա | 1 | 2.5 |
| Նույնը՝ մեկուսիչների վրա | 1.5 | 4 |
| Մեկուսացված լարեր շենքերի ներսում մեկուսացված խողովակների վրա անշարժ տեղդրելու համար, հեռավորությունը | | |
| 1-ից մինճև 2 մ | 1.5 | 3 |
| 3-ից մինճև 6 մ | 2.5 | 6 |

| | | |
|---|---|---|
| 7-ից մինճև 12 մ | 4 | 10 |
| 12 մ-ից ավելի դեպքում | 6 | 16 |
| Շենքում օգտագործվող մեկ լար | 2.5 | 6 |
| Նույնը՝ պաշտպանված | 1.5 | 4 |

**Հաղորդալարերի և մալուխների տեղդրում խողովակներում**

Խողովակների ներքին մակերևույթը պետք է լինի հարթ, որպեսզի բացառվի լարի վնասումը: Պողպատյա խողովակների 10-20 մմ պայմանական կտրվածքի դեպքում ամրացման կետերի միջև հեռավորությունը չպետք է գերազանցի 2.5մ, 25-32 մմ տրամագծի դեպքում՝ 4 մ, և 100 մմ տրամագծի դապքում՝ 6մ:

Պողպատյա խողովակների նորմավորված շրջման անկյուններն են 90(, 120( և 135(:

Ոչ մետաղական խողովակները ամրացվում են շարժական հենակներով, որոնց միջև հեռավորությունը կախված է խողովակի տրամագծից. 20, 25, 32, 40, 50, 63, 75, 80մմ –ի շարժական լինելու դեպքում հենարանների միջև առավելագույն հեռավորությունը պետք է լինի համապատասխանաբար 100, 1100, 1400, 1600, 1700, 2000, 3200, 3500 մմ:

Հատակների մոնոլիտացման դեպքում բետոնի շերտի հաստությունը խողովակի վրա պետք է լինի 20 մմ-ից ոչ պակաս:

**Լուսատուների, անջատիչների խորդակների մոնտաժում**

Լուսատուների ամրացումը հենարանային կոնստրուկցիաներին պետք է լինի այնպես, որ հնարավորություն լինի լռուսատուն փոխարինելու: Կեռերի և զամասեղների վրա լուսատուի կախման համար  նախատեսվում է հարմարանք, որը մեկուսացնում է նրանք լուսատուից:

Լուսատուի  և միայնակ կոթառների (պատյան) միացումը խմբային ցանցի լարերին կատարվում է սեղմնային տուփերի օգնությամբ:

Լուսատուների, անջատիչների և խորդակների միացումների ժամանակ միացման հանգույցներում պետք է նախատեսվեն լարերի պահուստային երկարություններ, որը բավարար կլինի կրկնակի միացումների համար կտրվելու դեպքում:

Լուսատուները նախատեսվում է տեղադրել լուսադիողային՝ երաշխիքային ժամկետի ապահովումով:

**Բաշխիչ սարքերի մոնտաժում**

Բաշխիչ սարքերը տեղադրվում են էլեկտրավահանակի սենյակում էլեկտրասարքավորումների նախագծին համապատասխան: Սարքերի պանելները ուղղվում են տեղումհարթաչափի և ուղղալարի օգնությամբ և ամրացվում ներդիր դետալներին հեղույսային կամ եռակցման միացումների միջոցով:

Սնող մալուխները ամրանում են բաշխիչ սարքի կոնստրուկցիաներին վրադիր պահանգով (սկոբա):

Սնող գծերը և խմբային գծերը պետք է ունենան նշագրումներ՝ օբյեկտի էլեկտրասարքավորումների նախագծի համաձայն: Բաշխիչ սարքի զրոյականացումը կատարվում է միացնելով զրոյական հաղորդաթիթեղը (շինա) սնող մալուխիզրոյական քուղին և մետաղական ծածկույթին, ապամիացնելով շանթարգելակի կոնտուրին:

**Ռենտգեն սենյակի ճառագայթապաշտպան միջոցառումներ**

Ճառագայթից պաշտպանելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները.

- Պատերը և առաստաղը անհրաժեշտ է մեկուսացնել ճառագայթներից,
- Դռները նույնպես անհրաժեշտ է մեկուսացնել
- Կառավարման խուցի պատուհանը պետք է ճառագայթապաշտպան լինի և մոնտաժվի ռենգեն սարքավորման հետ միասին

Պատերի և առաստաղի մեկուսացումը հարկավոր է իրականացնել բարիտա-ցեմենտային սվաղով. Բարիտային սվաղի հաստությունը կապված սարքավորման ճառագայթման ինտենսիվությունից.

| Կապարի հաստ. | Ճառագայթման ինտենսիվությանը համապատասխան խառնուրդի հաստ., կՎտ | | | |
|---|---|---|---|---|
| | 75 կՎտ | 100 կՎտ | 125 կՎտ | 150 կՎտ |
| 1մմ Pb | 18մմ | 20մմ | 20մմ | 25մմ |
| 2մմ Pb | 36մմ | 37մմ | 38մմ | 40մմ |
| 3մմ Pb | 60մմ | 65մմ | 68մմ | 68մմ |
| 4մմ Pb | 80մմ | 90մմ | 90մմ | 90մմ |

Խառնուրդի հարաբերությունը պետք է լինի – 1 ցեմենտ M400, 6 բարիտի նյութ (GOST 4682-84 կամ համարժեք) և 1.1-1.4 ջուր (կախված բարիտի նստվածքից).

Բարտաբետոնի խառնուրդը սվաղվում է շերտերով, each Յուրաքանչյուր շերտը 10-12 մմ հաստ.. առաջին շերտը իրականացվում է մետաղական ցանցի վրա, որը ամրացվում է պատին կամ առաստաղին դյուբելներով 250-300մմ ցանցով. Վերջին շերտը պետք է իրականացվի 2-3 օր անց:

Դռները և պատուհանները պետք է լինեն պաշտպանված:

1. Համապատասխան հաստության կապարի շերտով;
2. Շեպերում սվաղելով պաշտպանիչ բարիտաբետոնե խառնուրդով.

**Հիվանդանոցային վերելակներ-3 կոմպլեկտ**

Վերելակներին առաջադրվող պահանջներ:

- Էլեկտրամատակարարում 380 Վ, 50 հց, 3 ֆազ;
- Բեռնատարողություն – 1250 կգ;
- արագություն – 1 մ/վ;
- Շարժիչի տիպը VVVF տիպի միկրոպրոցեսորային կառավարումով;
- Խցիկի չափսերը – 2300մմ, լայնք – 1200մմ, բարձրություն– 2100մմ;
- Հարկի դռները ավտոմատ բացվող են և պետք է ունենան-1.1 մ լայնք, բարձրությունը–2.0մ; բոլոր դռները պետք է ունենան հակլահրդեհային պաշտպանվածության աստիճան,
- Անվտանգության UPS համակարգով, վերելակը պետք է կանգնի մոտակա հարկում և դռները պետք է ավտոմատ բացվեն,
- Հատակը ՊՎՔ նյութից,
- Պատերը և առաստաղը բժշկական վերելակների դեպքում պետք է լինեն չժանգոտվող մետաղից, իսկ մարդատար վերելակի դեպքում փոշեներկված կամ լամինատով երեսապատված,
- Խցիկում և բոլոր հարկերում պետք է տեղադրվի կանչի և տեղափոխման էլեկտրոնային ցուցատախտակով վահանակներ և կոճակներ,
- Ֆոտոէլեկտրոնային ավտոմատ արգելափակող համակարգ՝ դռների խցիկների վրա:
- **Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ**
- Շինարարական աշխատանքները, շին նյութերի մատակարարումը, շին. աղբի տեղափոխումը կաղմակերպվել են այնպես, որ չկատարվի որևէ ծառահատում, չվնասվի կանաչապատ տարածքները:

- Այդ նպատակով անհրաժեշտ է սորուն նյութերը (ցեմենտ, ավազ, խիճ և այլն) տեղափոխել հատուկ դրա համար նախատեսված տրանսպորտով, կամ, դրա բացակայության դեպքում՝ ծածկել ինքնաթափի մակերեսը հատուկ անթափանց ծածկույթով:
- Շին. աշխատանքների ընթացքում չի նախատեսվում որևէ ջրերի կամ այլ հեղուկների բացթողում:

- **Շինարարական կադրերի կենցաղային սպասարկման պայմաններ**
- Շինարարական կադրերի համար որպես հանդերձարան, սանհանգույցներ և ինժեներական աշխատողների համար աշխատասենյակ առաջարկվում է ծառայեցնել գոյություն ունեցող շենքերի առաջին հարկերի համապատասխան սենյակները՝ ըստ շինարարության փուլերի:

- **Շինարարական նյութերի պահեստավորում**
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մատակարարվող նյութերի զգալի մասը (դռներ, լուսամուտներ, վինիլային հատակներ իրենց հիմնական շերտերով, մետլախե և հախճապակեր և իրենց սոսինձ, ցեմենտ, ներկեր) կազմում են այնպիսի տարատեսակներ, որոնք պահաջում են պահպանման հատուկ պայմաններ, առաջարկվում է որպես այդ նյութերի պահեստներ օգտագործել գոյություն ունեցող շենքերի առաջին հարկերի համապատասխան սենյակները՝ ըստ շինարարության փուլերի:
- Անհրաժեշտ քանակության ավազը և խիճը նախատեսվում է պահեստավորել համապատասխան հարթակներում (տես “Շինարարության գլխավոր հատակագծերը և Շինարարության կազմակերպման նախագիծը՝ Գիրք-16”):

# Գծագրեր

1. Գիրք1- Բացատրագիր
2. Գիրք 2, Ալբոմ 1- Ճարտարապետական մաս 1-ին մասնաշենք
3. Գիրք 2, Ալբոմ 2- Ճարտարապետական մաս 2-րդ մասնաշենք
4. Գիրք 2, Ալբոմ 3- Ճարտարապետական մաս –Գլխավոր հատակագիծ
5. Գիրք 3 –Կոնստրուկտորական մաս
6. Գիրք 4- Ջեռուցում և օդափոխություն
7. Գիրք 5- Ջրամատակարարում և ջրահեռացում
8. Գիրք 6- Էլեկտրամատակարարում և լուսավորություն
9. Գիրք 7 – Թույլ լարման ցանցեր
10. Գիրք 8- Կենսաապահովման համակարգեր
    Ներտարածքային ինժեներական կոմունիկացիաներ
11. Գիրք 9-  Ճարտարապետաշինարարական մաս, Ջերմային ցանցեր
12. Գիրք10- Էլեկտրամատակարարում և տարածքի լուսավորություն
13. Գիրք 11- Ջրամատակարարում և կոյուղի
    Արտաքին ինժեներական կոմունիկացիաներ
14. Գիրք 12- Ջրամատակարարում և կոյուղի
15. Գիրք 13- Գազամատակարարում
    Կաթսայատուն
16. գիրք 14- Ճարտարապետաշինարարական մաս, ջերմետեխնիկական լուծումներ, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում և ներքին գազամատակարարում
    Պոմպակայան և օրվա կարգավորիչ ջրամբարներ 2x125 խմ
17. Գիրք 15- Ճարտարապետաշինարարական մաս, ջերմատեխնիկական լուծումներ, էլեկտրամատակարարում
18. Գիրք 16- Շինարարության կազմակերպման նախագիծ

# Աշխատանքների ծավալների ցուցակ

**Աշխատանքների ծավալների ցուցակը ներկայացված է առանձին հատորով**

### Ա.Նախաբան

1. Աշխատանքների ծավալների ցուցակը պետք է կարդացվի «Հրահանգեր մրցույթի մասնակիցներին», «Պայմանագրի ընդհանուր դրույթների», «Պայմանագրի հատուկ դրույթների», «Տեխնիկական մասնագրերի» և «Գծագրերի» հետ փոխկապակցված:
2. Ծավալաթերթումնշված ծավալները մոտավոր ու պայմանական են և բերված են մրցույթի ընդհանուր հիմքն ապահովելու համար: Վճարման հիմքը կարգադրված և կատարված փաստացի աշխատանքի ծավալներն են՝ չափված Կապալառուի կողմից և հաստատված Ճարտարագետի կողմից: Դրանց արժեքը, կանխված հանգամանքներից, կորոշվի գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակով առաջարկված դրույքներով և գներով, կամ այն դրույքներով և գներով, որոնք Ծրագրի ղեկավարը կարող է ամրագրել Պայմանագրի պայմանների շրջանակներում:
3. Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակով առաջարկված դրույքները և գները՝ բացառությամբ Պայմանագրով այլ կերպ նախատեսված դեպքերի, ընդգրկում են շինարարական արտադրամասերը, աշխատուժը, վերահսկողությունը, նյութերը, մոնտաժը, պահպանումը, ապահովագրությունը, շահույթը, հարկերը, բոլոր տուրքերը՝ բոլոր այլ ռիսկերի,պարտավորությունների և պարտականությունների հետ միասին, որոնք սահմանվում կամ ենթադրվում են Պայմանագրով:
4. Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակի յուրաքանչյուր կետի դիմաց պետք է նշվի դրույքը կամ գինը՝ անկախ նրանից, նշված է քանակությունը, թե ոչ: Կհամարվի, որ այն կետի արժեքը, որի դիմաց Կապալառուն չի մտցրել դրույք կամ գին, ներառված են Աշխատանքների ծավալների ցուցակում մուտքագրված այլ դրույքների և գների մեջ:
5. Պայմանագրի դրույթներին համապատասխանող ողջ արժեքը պետք է ներառված լինի Գնանշված Աշխատանքների ծավալների ցուցակում բերված կետերի մեջ:
6. Պատվիրատուն կուղղի հաշվարկներում և գումարումների տեղ գտած բոլոր թվաբանական սխալները հետևյալ կերպ.

   (ա) եթե առկա է անհամապատասխանություն բառերիևթվերիմիջև, ապա գերակայում է բառերովարտահայտված գումարը,և

   (բ) եթեառկաէանհամապատասխանությունմիավոր գնի նայդմիավոր գնի ուքանակի բազմապատկումից ստացված ընդհանուր գումարի միջև, ապագերակայում է միավոր գինըև ուղղվում ընդհանուրգումարը, եթե միայն՝ Պատվիրատուիկարծիքով, տեղի չի ունեցել ակնհայտ սխալ միավոր գնում տասանորդական

կետըկամստորակետըսխալտեղ դնելուց, որի դեպքում գերակայում է ընդհանուրգումարը և համապատասխանաբար ուղղվում է միավոր գինը:

7. Գները Աշխատանքների ծավալների ցուցակում Մրցույթի մասնակիցների կողմից պետք է նշվեն **<u>միայն ՀՀ դրամով</u>**:

# Լրացուցիչ տեղեկատվություն

## Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ)

Ենթածրագիր: ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ վերանորոգում

Արարատի մարզպետարան

Բնապահպանական կառավարման պլան

## ԲԱԺԻՆ Ա: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ** | | | | |
| Երկիր | **Հայաստանի Հանրապետություն** | | | |
| Ծրագրի անվանումը | Արտաշատի բժշկական կենտրոնի վերանորոգում (ԲԿ) | | | |
| Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներ | Ծրագրով նախատեսվում է հիվանդանոցի հիմնական մասնաշենքի (6951) արդիականացում և վերանորոգում: Նշված մասնաշենքի վերանորոգման աշխատանքները կներառեն հետևյալը` կտուրի մասնակի վերակառուցում, պատերի վերակառուցում, դռների և պատուհանների փոխարինում, հատակների վերանորոգում, ինժեներական նոր կոմունիկացիաների անցկացում, ներառյալ` ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի մատակարարման, գազամատակարարման, ջեռուցման համակարգերը և այլն: Ծրագրի շրջանակներում ԲԿ կհագեցվի ժամանակակից բժշկական սարքավորումներով և կահույքով: | | | |
| Ինստիտուցիոնալ կառույցներ (կոնտակտային տեղեկատվություն) | Համաշխարհային բանկ<br>(Ծրագրի թիմի ղեկավար)<br>Տիկին Սուսաննա Հայրապետյան<br>shayrapetyan@worldbank.org | Ծրագրի կառավարում<br>ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ<br>Տնօրենի պաշտոնակատար` պարոն Նելսոն Զուլոյան<br>healthpiu@gmail.com | Տեղական իշխանություններ և/ կամ ռեցիպիենտ<br>Արտաշատի ԲԿ ադմինիստրացիա<br>Տնօրեն` պարոն Վարդան Հովհաննիսյան<br>artashatbk-hivandanoc@mail.ru | |
| Իրականացնող կառույցներ (կոնտակտային տեղեկատվություն) | Անվտանգության վերահսկող<br>Դարեջան Կապանաձե<br>dkapanadze@worldbank.org | Տեխնիկական վերահսկողություն<br>Դեռ ընտրված չէ | Տեղական իշխանությունների կողմից վերահսկում<br>Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական բաժին | Կապալառու<br>Դեռ ընտրված չէ |
| **ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |
| Անվանում | Արտաշատի ԲԿ | | | |
| Կառուցապատման տարածքի տեղակայում | Կառուցապատման տարածքը տեղակայված է Հայաստանի հարավ-արևմուտքում Արարատի մարզի Արտաշատ քաղաքում:<br>Մայրաքաղաք Երևանի կողմից մոտեցումը հնարավոր է M-2 մայրուղով: Երևանից հեռավորությունը 30 կմ է: | Կառուցապատման տարածքի քարտեզ<br>■ Այո կամ [ ] Ոչ<br>* Հավելված 1 | | |
| Հողի սեփականատերը | <Արտաշատի բժշկական կենտրոն> ՓԲԸ | | | |
| Աշխարհագրական, ֆիզիկական, բնագիտական, երկրաբանական, հիդրոգրաֆիկ և սոցիո- | Հայաստանի հարավ-արևմուտքում տեղակայված Արարատի մարզը: Հարավից այն սահմանակից է Ադրբեջանի մասը կազմող Նախիջևանի ինքնավար հանրապետությանը, արևմուտքից` Թուրքիային, արևելքից Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերին, , իսկ հյուսիսից` Երևանին և Կոտայքի մարզին: Մարզի տարածքը կազմում է շուրջ 2096 քառ կմ: Մարզի տարածքի մեծ մասը տեղակայված է ծովի մակարդակից 880 մ բարձրության վրա: Ռելիեֆը բաղկացած է լեռնաշղթաներից, | | | |

| | |
|---|---|
| տնտեսական կոնտեկստ | միայն 30%-ն է հարթավայրային: Մարզի խոշոր գետերն են Արաքսը, Հրազդանը, Ազատը, Վեդին: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է (3560 մ):<br>Կլիմա. Կլիման չոր է, խիստ ցամաքային, տարեկան տեղումների քանակը տատանվում է 200-1000 մմ-ի սահմաններում:Ամառային ջերմաստիճանը կարող է հասնել 42 °C , միջին տարեկան ջերմաստիճանը 24 °C:<br>Սեյսմիկ ակտիվություն. Արտաշատի շրջանը տեղադրված՝ 3-րդ սեյսմիկ գոտում: Երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը (I)-9 բալ, երկրի մակերեսի առավելագույն հորիզոնական արագացումը կազմում է (g)->0.4 մ/վրկ2:Արարատի մարզը տեղակայված է սեյսմիկ ակտիվ գոտում:<br>Արտաշատ քաղաքը Արարատի մարզի մարզկենտրոնն է: Այն տեղակայված է Արարատյան դաշտի Արաքս գետի ափին և գտնվում Երևանից 30 կմ հարավարևելք, ծովից 829 մ բարձրության վրա: 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքի բնակչությունը կազմում է 21.500:<br>Արտաշատը շատ արդյունաբերական ընկերությունների կենտրոն է՝ ընդգրկելով հիմնականում սննդի վերամշակման և շինանյութերի արդյունաբերությունը: Առկա են նաև այլ շինանյութերի և տեքստիլի արտադրության փոքր գործարաններ: Քաղաքում գործում են նաև այլ մեծ շինարարական ընկերություններ: Արտաշատի ԲԿ սպասարկում է տարածաշրջանի բնակչությանը, սպասարկման տարածքում ընդգրկված են մոտ 91.500  մարդ:<br>Արտաշատի ԲԿ կառուցվել է 1982 թվականին, որի շինությունները՝ բացառությամբ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի համար նախատեսված տարածքից հետագա տարիների ընթացքում չեն ենթարկվել անգամ կոսմետիկ վերանորոգման: Բժշկական կենտրոնի ծառայությունները տեղակայված են չորս մասնաշենքերում՝ հիմնական, պոլիկլինիկական, վարչական և ինֆեկցիոն: |
| Շինարարության համար անհրաժեշտ նյութերի տեղակայումը (հատկապես՝ քար, ջուր, սարքավորումներ) և վերջիններիս հեռավորությունը շինհրապարակից | Տեղական շինանյութերը տեղափոխվելու են շուրջ 8 կմ հեռավորությունից:<br>Ջուրը հնարավոր է հասցնել շինհրապարակ՝ օգտվելով քաղաքային ջրագծից: Ենթածրագրի իրականացման ընթացքում գոյացած թափոնների քանակը ենթադրվում է, որ չափավոր կլինի: Թափոնները կփոխադրվեն քաղաքապետարանի կողմից տրված 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: |
| **ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ** | |
| Ծրագրի իրականացումը կարգավորող ազգային և տեղական օրենսդրություն, ինչպես նաև շինարարության թույլտվության արտոնագիր | Համաշխարհային բանկի ընթացակարգերի և Բնապահպանական կառավարման պլանի համաձայն ենթածրագիրը դասակարգվել է որպես ցածր ռիսկի B Կատեգորիայի ծրագիր: Արտաշատի քաղաքապետարանի պաշտոնյաների կողմից ենթածրագիրը հավանության է արժանացել:<br>Հայաստանի օրենսդրությունը տվյալ ենթածրագրի համար չի պահանջում շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից իրականացնել ուսումնասիրություն, ստանալ հաստատում և թույլտվություն: Ազգային օրենսդրության համաձայն՝<br>• Շինարարությունն իրականացնող կապալառու կազմակերպությունը պետք է ունենա արտոնագիր,<br>• Շինանյութը պետք է ձեռք բերվի արտոնագիր ունեցող մատակարարներից,<br>• Եթե կապալառուն ցանկանում է  շահագործել սեփական ցեմենտի գործարան (այլ մատակարարներից գնելու փոխարեն), նա պարտավոր է ստանալ |

| | |
|---|---|
| | շահագործման համապատասխան թույլտվություն բնապահպանական կազմակերպություններից:<br>• Շինարարական թափոնների տեղափոխումը աղբավայր կամ էլ հողային աշխատանքների ընթացքում գոյացած իներտ նյութերի կուտակումը թափոնների ժամանակավոր կուտակման վայրերում պետք է համաձայնեցված լինի Արտաշատի տեղական իշխանությունների հետ (հաստատված գրավոր փաստաթղթի տեսքով):<br>Կապալառու շինարարական կազմակերպության ընտրությունից և շինարարական աշխատանքների մեկնարկից հետո շինարարության թույլտվության արտոնագրի կրկնօրինակները և աղբահանության թույլտվության փաստաթղթերը հնարավորության դեպքում, կկցվեն բնապահպանական կառավարման պլանին: Պետք է պահպանվեն համապատասխան ԳՈՍՏ և սանիտարական նորմերն ու կանոնները շինարարական աշխատանքների ողջ ընթացքում: |
| **ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ** | |
| Որտեղ և երբ են տեղի ունեցել հանրային քննարկումները | Կմշակվի տվյալ ենթածրագրին վերաբերող բնապահպանական կառավարման պլան, որը մատչելի կլինի Արտաշատի բնակչության համար և մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը նախապես կքննարկվի բնակիչների հետ խորհրդատվական հանդիպման ընթացքում: |
| **ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ** | |
| Ինստիտուցիոնալ կառույցների կառուցում | [ ] Այո կամ ■ Ոչ |

## ԲԱԺԻՆ Բ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍԿՐԻՆԻՆԳ | | | |
|---|---|---|---|
| | **Գործընթացներ** | **կարգավիճակ** | **Տրիգերային գործողություններ** |
| Կառուցապատման տարածքում իրականացվող գործընթաց | A. Շինության վերանորոգում | ■ Այո [ ] Ոչ | Տես բաժին **Ա** |
| | B. Նոր շինության կառուցում | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Ա** |
| | C. Կեղտաջրերի սեփական մաքրման համակարգ | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Բ** |
| | D. Պատմամշակութային հուշարձաններ և տարածքներ | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Գ** |
| | E. Հողերի զավթում[27] | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Դ** |
| | F. Վտանգավոր կամ տոքսիկ նյութեր[28] | [ ]Այո ■ Ոչ[3] | Տես բաժին **Ե** |
| | G. Ազդեցություն անտառների և/կամ պահպանվող տարածքների վրա | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Զ** |
| | H. Բժշկական թափոնների մշակում/կառավարում | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Է** |
| | I. Երթևեկության և հետիոտների անվտանգություն | [ ] Այո ■ Ոչ | Տես բաժին **Ը** |

[27] Հողերի զրավումը ներառում է մարդկանց տեղաշարժ իրենց բնակավայրից, հողի հանդեպ սեփականության իրավունքի խախտում (հողատարածքների զավթում, տվյալ հողատարածքի վրա բնակվող կամ աշխատանքնային գործունեություն ծավալով մարդկանց իրավունքների խախտում)

[28] Տոքսիկ / վնասակար նյութերը ներառում են ոչ միայն ասբեստ պարունակող նյութեր, այլև տոքսիկ ներկեր, վտանգավոր լուծույթներ, լուծիչներ և այլն.

[3] Կտուրը պատրաստված է մետաղից (այն չի պարունակում ասբեստ)

## ԲԱԺԻՆ C: ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| **0**. Ընդհանուր դրույթներ | Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն | (a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող տեղական վարչությունները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ<br>(b) Հանրությունը պետք է իրազեկվի համապատասխան լրատվամիջոցների կամ հանրության համար մատչելի կայքերի միջոցով<br>(c) Կառուցման կամ վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել<br>(d) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:<br>(e) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն միջազգային ընդունված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)<br>(f) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: |
| **A.** Հիմնանորոգման և /կամ կառուցման աշխատանքներ | Օդի որակ | (a) Առաջին հարկից բարձր հարկերում ինտերիերի քանդման ընթացքում թեքահարթակներ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար<br>(b) Թեքահարթակները պետք է պահպանվեն վերահսկվող տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով<br>(c) Պնևմատիկ դրելով անցք բացելու/ պատերի քանդման ընթացքում գոյացող փոշին պետք է չեզոքացվի ընթացիկ ջրի ցողումով կամ էլ շինհրապարակում փոշուց պաշտպանող հատուկ թաղանթների տեղադրումով<br>(d) Շրջակա տարծքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով<br>(e) Շինանարարական աղբի / թափոնների բաց այրում շինհրապարակում տեղի չի ունենա<br>(f) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: |
| | Աղմուկ | (a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում<br>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն, իսկ սարքավորումը պետք է հնարավորին հեռու տեղադրվի բնակելի տարածքներից: |
| | Ջրի որակ | (a) Շինհրապարակում կգործեն համապատասխան հողերի էրոզիայի և ցեխաջրերի վերահսկման միջոցառումներ, ինչպիսիք են ծղոտի հակեր և/ կամ պատնեշներ ցեխաջրերի արտահոսքը շինհրապարակից, ինչը առաջացնում է մոտակա գետերի պղտորում: |
| | Թափոնների կառավարում | (a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>(b) Քանդման և շինարարության արդյունքում գոյացող քարային թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր |

| | | |
|---|---|---|
| | | աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից դեռ շինհրապարակում և պահեստավորվեն համապատասխան կոնտեյներներում:<br>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել (բացի ասբեստային նյութերից) |
| **B**. Կեղտաջրերի վնասազերծման սեփական համակարգ | Ջրի որակ | (a) Սանիտարական թափոնների և կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է համաձայնեցված լինի տեղական իշխանությունների հետ<br>(b) Մինչ գետը լցվելը` կոյուղաջրերը պետք է մաքրվեն ազգային ուղեցույցներով նախատեսված կոյուղաջրերի մաքրման նվազագույն պահանջներին համապատասխանեցնելու նպատակով<br>(c) Կոյուղու նոր համակարգի մոնիտորինգ պետք է անցկացվի` (մինչև շահագործումը և շահագործումից հետո)<br>(d) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի հոսքը չի աղտոտի բնական ջրամբարները: |
| **C**. Պատմական շինություններ | Կուլտուրական ժառանգություն | (a) Պետք է ապահովվեն պայմաններ հողային աշխատանքների ընթացքում պատահական հնագիտական գտածոների գրանցման, համապատասխան պատասխանատու մարմիններին տեղեկացման և անհրաժեշտության դեպքում շինարարական աշխատանքների հետաձգման կամ էլ ընթացքի փոփոխության համար: |
| **D**. Հողերի զավթում | Հողի հատկացման ընթացակարգ | (a) Եթե հողատարածքի ուսումնասիրություն չի նախատեսվում, բայց պահանջվում է կամ էլ առկա է հողի օրինական կամ էլ անօրինական սեփականատերերի եկամուտների անսպասելի կորստի սպառնալիք` Համաշխարհային բանկի թիմը ղեկավարը պետք է անհապաղ տեղեկացվի.<br>(b) Պետք է իրականացվի հողի հատկացման հաստատված ընթացակարգ (եթե պահանջվում է ծրագրով) |
| **E**. Տոքսիկ նյութեր | Ասբեստ պարունակող նյութերի կառավարում | (a) Շինհրապարակում ասբեստ պարունակող նյութերի առկայության դեպքում, վերջիններ պետք է հստակ պիտակավորվեն որպես վտանգավոր նյութեր,<br>(b) Հնարավորության դեպքում ասբեստ պարունակող նյութերը կհավաքվեն համապատասխան կնքվող կոնտեյներներում` վնասակար ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով,<br>(c) Ասբեստ պարունակող նյութերը, մինչ հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) պետք է խոնավեցվեն` փոշու քանակը պակասեցնելու նպատակով<br>(d) Ասբեստ պարունակող նյութերը պետք է մշակվեն և հեռացվեն փորձառու մասնագետների կողմից<br>(e) Եթե ասբեստ պարունակող նյութերը ժամանակավոր են պահեստավորվում, թափոնները պետք է ապահով տեղավորվեն փակվող կոնտեյներներում, որոնք համապատասխանաբար նշվում են: Անվտանգության միջոցառումներ պետք է ձեռնարկվեն` շինհրապարակից վերոնշյալ թափոնների անօրինական հեռացումը կանխելու նպատակով:<br>(f) Հեռացված ասբեստ պարունակող նյութերը չեն կարող կրկնակի օգտագործվել: |
| | Տոքսիկ / վտանգավոր թափոնների կառավարում | (a) Տոքսիկ կամ վտանգավոր նյութերը ժամանակավոր պահեստավորումը շինհրապարակում պետք է կատարվի ապահով կոնտեյներներում, որոնց պիտակների վրա մանրամասնորեն պետք է գրված լինի կազմը, հատկությունը և մշակման վերաբերյալ տեղեկատվություն<br>(b) Վտանգավոր թափոնները պետք է բեռնված լինեն վակուումային կոնտեյներներում` քայքայումը և |

| | | |
|---|---|---|
| | | արտահոսքը կանխելու համար<br>(c) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ արտոնագիր ունեցող մեքենաներով արտոնագրված հաստատություններ<br>(d) Տոքսիկ կազմ ունեցող ներկանյութերը կամ լուծույթները կամ էլ կապար պարունակող ներկեր չեն կիրառվի |
| **F**. Ազդեցությունը անտառների, ճահճուտների և/ կամ արգելավայրերի վրա | Պաշտպանություն | (a) Բոլոր հայտնի բնական միջավայրերը, ճահճուտները և արգելավայրերը շինարարության անմիջական հարևանությամբ չեն վնասվի կամ շահագործվի, աշխատողներին արգելված կլինի զբաղվել որսորդությամբ, կատարել խոտհունձ, անտառահատում  կամ այլ վնասող գործողություններ.<br>(b) Շինհրապարակի շրջակայքում պետք է իրականացվի մեծ ծառերի հաշվառում և ուսումնասիրություն, մեծ ծառերը պետք է նշվեն և ցանկապատով շրջափակվեն, վերջինների արմատային համակարգը պետք է պաշտպանվի: Անհրաժեշտ է խուսափել ծառերին որևէ վնաս հասցնելուց<br>(c) Գետերի հարակից  տարածքը պետք է պաշտպանված լինի շինհրապարակից տեղի ունեցող արտահոսքից, պետք է ապահովվի հողի էրոզիայի և նստվածքների համապատասխան վերահսկում  ինչը ներառում է , բայց չի սահմանափակվում խոտի դեզերով և հողապատնեշներով:<br>(d) Շինարարական գործընթացում չպետք է ներգրավված լինեն չարտոնագրված հանքեր, քարհանքեր և աղբավայրեր: |
| **G**. Բժշկական թափոնների հեռացում | Բժշկական թափոնների կառավարման կառուցվածքը | (a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն նորակառույց կամ վերանորոգվող բուժհաստատությունում պետք է ապահովի բավարար ենթակառուցվածքներ բժշկական թափոնների մշակման և հեռացման համար, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.<br>▪ Հատուկ հարմարություններ առողջապահական թափոնները այլ տեսակի թափոններից տարանջատելու համար (ներառյալ կեղտոտ գործիքներ “սրածայրեր”, կենսաբանական հյուսվածքներ և հեղուկներ),<br>▪ Բժշկական թափոնների կուտակման համար անհրաժեշտ հարմարությունները առկա են<br>▪ Եթե թափոնների մշակումն իրականացվում է բուժհաստատությունում, համապատասխանպետք է առկա լինեն թափոնների հեռացման համար անհրաժեշտ համապատասխան միջոցներ, սարքին վիճակում: |
| **H.** Հետիոտների և երթևեկության ապահովություն | Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ | (b) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.<br>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ  և շրջանցող ուղիներ<br>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության  գոնայում:<br>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:<br>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար.<br>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները,  խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում: |

## Բաժին D: ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Ինչու | Կատարող |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *Շինարարության փուլ* | | | |
| Շինանյութերի մատակարարում | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Օբյեկտի և մարդկանց առողջության անվտանգության ապահովման վերաբերյալ տեխնիկական պայմանների ներկայացում | ԱԾԻԳ Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն |
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում<br><br>Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում<br>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ<br>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | - Շինհրապարակ<br>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների կարգաբերման ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | -Արտանետումների պատճառով հողի և օդի աղտոտման սահմանափակում<br>–Տեղի բնակչության վրա աղմուկի և վիբրացիայի ազդեցության սահմանափակում<br>– Սահմանափակել երթևեկության խախտումները | ԱԾԻԳ ճանապարհային ոստիկանություն Տեխնիկական հսկողություն |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս կամ գետից առավելագույն հեռավորության վրա | Շինհրապարակ և հարակից շինարարական բազա (եթե վերջինս առկա | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | - Խուսափել յուղերով հողի աղտոտումից սարքավորումների աշխատանքի<br>- Ժամանակին | ԱԾԻԳ Տեխնիկական հսկողություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս կամ հատուկ նշանակված վայրում<br>- Շինարարական տեխնիկայի սպասարկման կետի տեխնիկական պայմանները՝<br>• հատակը պետք է լինի անթափանց կամ աբսորբենտով ծածկված (մանրախճային ավազ, թաղանթ),<br>• ազատ տարածք և անթափանց պաշտպանիչ գոտիներ վառելիքի պահեստի մոտ<br>• Աշխատանքների իրականցման տարածքը ապահոված լինի հակահրդեհային միջոցներով: | է) | | | տեղայնացնել և նվազեցնել վտանգը հրդեհի դեպքում | |
| Հողային աշխատանքներ | - Մինչ աշխատանքների սկիզբը բուսաշերտը հանվում և պահեստավորվում է հատուկ վայրում (աղտոտման դեպքում բուսաշերտը տեղափոխվում է աղբավայր, հնարավորության դեպքում այն կարելի է օգտագործել վերակուլտիվացման համար)<br>- Հանված հողերը պահեստավորում են թույլատրված վայրում ըստ | Շինհրապարակ | Գործընթացների ստուգում | Հողային աշխատանքների ընթացքում | - Սահմանափակել բուսականությանը հասցվող վնասը և նվազեցնել ջրային ռեսուրսների աղտոտումը հողակտորներով<br>- Սահմանափակել հողածածկույթի, մակերեսային և ստորգետնյա ջրերի վնասումը աղտոտված հողի միջոցով | ԱԾԻԳ<br><br>Պատմամշակութային հուշարձանների պահպանության պետական գործակալություն Տեխնիկական հսկողություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հողի պահպանման չափանիշների<br>- Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի տեղափոխում սահմանված վայր<br>- Մշակութային արժեքների հայտնաբերման դեպքում անմիջապես դադարեցնել աշխատանքները և տեղյակ պահել պատմական և մշակութային արժեքների պահպանության պետական մարմիններին: | | | | - Բացառել մշակութային արժեքների վնասումը | |
| Իներտ շինանյութերի արդյունահանում | - Հնարավորության դեպքում իներտ նյութերի գնում գործող մատակարարներից<br>- Իներտ նյութերի արդյունահանման թույլտվությունների ձեռք բերում և դրանց պահանջների պահպանում<br>- Հանքավայրի աշխատանքների կանոնակարգում, խոռոչների լիցք և տեղանքի բարեկարգում ըստ գոյություն ունեցող բնական պայմանների<br>- Ավազի արդյունահանումը իրականացնել ջրային ռեսուրսներից հեռու, ապահովել պաշտպանիչ արգելքներ և չտեղադրել | Իներտ նյութերի հանքավայր | Փաստաթղթերի ստուգում<br><br>Գործընթացների ստուգում | Հանքարդյունա-հանման և հանքի շահագործման ընթացքում | - Սահմանափակել լանջերի էրոզիան և տեղանքի վնասումը<br>- Սահմանափակել գետի ափերի էրոզիան, ջրային հոսքերի աղտոտումը և ջրային կենսաբազմազանության վնասումը նյութերի տարածման հետևանքով | ԱԾԻԳ<br>Բնապահպանության նախարարություն<br>Տեխնիկական հսկողություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | սարքավորումները ջրային հոսքում | | | | | |
| Կտուրի փոխելու ժամանակ ասբեստ պարունակող շինարարական աղբի առաջացում<br>* Կտուրը վերջերս փոխվել է և գտնվում է համեմատական լավ վիճակում և միայն մասնակի կվերանորոգվի: Կտուրը մետաղից է (այն ասբեստ չի պարունակում) | Շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորում հատուկ սահմանված վայրում,<br>- Սահմանված ժամանակում թափոնների տեղափոխում հատուկ հատկացված տարածքներ | Շինհրապարակ, Թափոնների հեռացման վայր | Ստուգման գործընթացներ | Պարբերաբար շինարարության ընթացքում և ավարտից հետո | - Հողածածկի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտման կանխում<br>- Թափոնների և կուտակված շինանյութերի մնացորդների պատճառով հնարավոր պատահարներից կանխում<br>- Շինարարական հրապարակում և մերձակայքում էսթետիկ տեսարանի պահպանում | Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություն<br><br>Արտաշատի քաղաքապետարան |
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում և շինարարական բազայում /եթե այդպիսին կա/<br>- Համաձայնագիր Արտաշատի քաղաքապետարանի հետ աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Շինհրապարակ կամ շինարարական բազա (եթե վերջինս առկա է) | Արտաքին զննում | Շինարարության ողջ ընթացքում | Կենցաղային աղբով հողի և ջրի աղտոտման կանխարգելում | ԱԾԻԳ<br>Տեխնիկական հսկողություն<br>Արտաշատի քաղաքապետարան |
| Հեղուկ թափոնների առաջացում | - Շինհրապարակում և շինարարական բազայում /եթե այդպիսին կա/ զուգարանների տեղադրում, համաձայն սանիտարական նորմերի պահանջների | Շինհրապարակ կամ շինարարական բազա (եթե վերջինս առկա | Արտաքին զննում | Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում<br><br>Աղտոտված | - Կանխել շինարարական հրապարակի հեղեղումը և քայքայումը արտահոսքերի պատճառով | ԱԾԻԳ<br>Տեխնիկական հսկողություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | - Սելավային առուների և դրենաժի կառուցում և մշտական մաքրում<br>- Նստվածքների հավաքման հորի /պարզարան/ կառուցում մեքենաների լվացման կետում | է) | | տեղումների դեպքում | - Նվազեցնել մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտումը | |
| Ասֆալտ բետոնի գործարանի /բետոնախառնիչի/ շահագործում | - Արտանետումների թույլտվության ձեռք բերում շինարարության կապալառուի կողմից և դրա պայմանների պահպանում<br>- Գործարանի համար այնպիսի վայրի ընտրություն, որ նվազագույն լինի արտանետումների, փոշու և աղմուկի ազդեցությունը բնակչության համար<br>- Նստվածքների հավաքման հորի /պարզարան/ կառուցում | Շինարարական հրապարակ և շինարարական բազա /եթե կա/ | Փաստաթղթերի ստուգում<br><br>Գործունեության ստուգում | Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում | - Սահմանափակել մերձակա բնակչությանը պատճառվող անհարմարությունը<br>- Սահմանափակել մթնոլորտային օդի և մակերեսային ջրերի աղտոտումը | ԱՇԻԳ Տեխնիկական հսկողություն Բնապահպանության նախարարություն |
| Շինարարական հրապարակի կանաչապատում և բարեկարգում | Շինարարական բազայի /եթե կա/, շինհրապարակի ժամանակավոր ճանապարհների /եթե կան/ և ասֆալտ բետոնի գործարանի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում<br>- Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում ու կանաչապատում | Շինարարական հրապարակ, շինարարական բազա և ժամանակավոր ճանապարհներ /եթե այդպիսիք առկա են/ | Ստուգման գործընթացներ | Շինարարության ավարտական փուլ | - Նվազեցնել տեղանքի էսթետիկական արժեքներին շինարարական աշխատանքների հետևանքով հասցվող վնասը<br>- Պահպանել Արտաշատի տուրիստական գրավչությունը | ԱՇԻԳ, Տեխնիկական հսկողություն Արտաշատի քաղաքապետարան |
| Աշխատանքի | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և | Շինհրապարակ | Ստուգման | Աշխատանքների | Նվազեցնել | ԱՇԻԳ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվտանգություն | անձնական պաշտպանիչ միջոցներով<br>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն | | գործընթացներ | ողջ ընթացքում | վնասվածքների և դժբախտ պատահարների հնարավորությունը | Տեխնիկական հսկողություն |
| *Գործունեության փուլ* | | | | | | |
| Առողջապահական թափոնների կառավարում | - Բժշկական հաստատությունում գոյացած առողջապահական թափոնների տարանջատում այլ տեսակի թափոններից<br>- Տեղում ձեռնարկվող միջոցառումներ, հատկապես արտոնագրված կազմակերպություն բժշկական թափոնների կանոնավոր արտահանման և տեղափոխման համար ազգային օրենսդրության համապատասխան | Բժշկական կենտրոնի սեփականություն հանդիսացող տարածքում | - ԲԿ տարածքի ստուգում (ինսպեկցիա)<br>- Արտոնագրված աղբահանությամբ զբաղվող կազմակերպության ԲԿ-ի կողմից կնքված պայմագրի առկայության ստուգում | ԲԿ գործունեության ողջ ընթացքում | - ԲԿ-ում պատշաճ սանիտարական պայմանների ապահովում<br>- խուսափել ԲԿ տարածքից ինֆեկցիայի տարածումից<br>- հողի, մակերևույթի և ընդերքի ջրերի աղտոտման սահմանափակում | Պայմանագիր «Եկոպրոտեկտ» ՍՊԸ-ի և «Արտաշատ ԲԿ» ՓԲԸ-ի միջև (Պայմանագիր N 196-15, ամսաթիվ 01/04/2015) |
| Կենցաղային աղբի կառավարում | - Համապատասխան քանակի աղբամանների առկայություն<br>- կենցաղային աղբի ժամանակին հեռացում բժշկական կենտրոնի՝ տարածքից արտահանման և աղբահանության միջոցառումների շրջանակներում | Բժշկական կենտրոնի սեփականություն հանդիսացող տարածքում | - ԲԿ տարածքի ստուգում (ինսպեկցիա)<br>- Արտոնագրված աղբահանությամբ զբաղվող կազմակերպության ԲԿ-ի կողմից կնքված պայմագրի | ԲԿ գործունեության ողջ ընթացքում | - ԲԿ-ում պատշաճ սանիտարական պայմանների ապահովում<br>- հողի, մակերևույթի և ընդերքի ջրերի աղտոտման սահմանափակում | Պայմանագիր Արտաշատի քաղաքային համայնքի և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի միջև (Պայմանագիր N 07, ամսաթիվ 27/01/2015) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | առկայության ստուգում | | | |
| Արագ արձագանքում | Հրդեհի ծանուցման և հակահրդեհային համակարգերի առկայություն, էլեկտրական հոսանքի և ջրամատակարարման վթարային համակարգեր | Բժշկական կենտրոնի սեփականություն հանդիսացող տարածքում | Պարբերական ստուգումներ | ԲԿ գործունեության ողջ ընթացքում | - Նվազեցնել ռիսկերը ԲԿ-ի անձնակազմի և պացիենտների համար,<br>- Խուսափել ԲԿ-ջրամատակարարման, էլեկտրականության մատակարարման խանգարումներից: | Արտաշատի ԲԿ |

* Հավելված 1. Կառուցապատման տարածքի քարտեզ






Արտաշատի ԲԿ-ի տարածքի նկարներ:






TAXI



**Հանրային լսումներ**

**ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական կենտրոնի նախատեսվող վերակառուցման շինարարական աշխատանքների և շահագործման վերաբերյալ**

**Արձանագրություն**

Ք. Արտաշատ 16.03.2016թ.

Օրակարգ՝

ՀԲ ֆինանսավորմամբ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրով արդիականացվող Արտաշատի ԲԿ հիվանդանոցային մասնաշենքի վերակառուցման գործընթացի և ԲԿ շահագործման գործընթացների շրջանակներում մշակված և ՀԲ կողմից համաձայնեցված Արտաշատի ԲԿ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և բնապահպանական կառավարման պլանի քննարկում:

2016 թվականի մարտի 16-ին ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ-ում կայացած հանրային լսումներին մասնակցում էին ՀՀ Արարատի մարզպետարանի, Արտաշատի քաղաքապետարանի, ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ, Արտաշատի ԲԿ ղեկավարության և անձնակազմի, «Էլեկտրոննախագիծ» ՓԲԸ, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ԲԿ տնօրեն Վարդան Հովհաննիսյանը՝ ողջունելով մասնակիցներին: Այնուհետև նա խոսքը տրամադրեց ԱԾԻԳ ՊՀ հիվանդանոցային համակարգի օպտիմալացման բաղադրիչի համակարգող Դավիթ Մելիք-Նուբարյանին: Բաղադրիչի ղեկավարը մանրամասն ներկայացրեց «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող Արտաշատի ԲԿ արդիականացման գործընթացը, հիմնանորոգվող հիվանդանոցի ենթակառուցվածքները, ծառայությունների տեղակայումը և ծավալումը, հիվանդանոցի վերակառուցման շինարարական աշխատանքները և հետագայում շահագործման ընթացքում ձեռնարկվող միջոցառումները՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանմանը: Զեկուցողը նշեց, որ բոլոր միջոցառումներն

ուղղված են լինելու շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները նվազագույնի հասցնելուն՝ կարևորելով բժշկական և շինարարական թափոնների ճիշտ կառավարումը:

Այնուհետև, սկսվեց քննարկում վերոնշյալ հարցերի շուրջ:

Ծանոթանալով փաստաթղթին՝ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության և առողջապահության վարչության պետ Ստեփան Խաչատրյանը նշեց, որ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված փաստաթղթով նախատեսված միջոցառումները կարևոր են, սակայն ոչ պակաս կարևոր են վերջինների արդյունավետ իրականացումը և վերահսկումը:

Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետական, քաղաքաշինական և հողօգտագործման բաժնի պետ Կարեն Պողոսյանը հետաքրքրվեց, թե որքան կտևի ԲԿ վերակառուցումը, նախատեսվում է արդյոք գույքի օտարում, ինչպես նաև տարածքի բարեկարգում, կանաչապատում:

Ծրագրի համակարգող Դավիթ Մելիք-Նուբարյանը պատասխանեց, որ նախատեսվում է բոլոր հիվանդանոցային ծառայությունները տեղակայել կենտրոնի հիմնական մասնաշենքում, իսկ գույքը կօտարվի համաձայն հաստատված ընթացակարգերի:

Ծրագրի նախագծման և շինարարական աշխատանքների համակարգող Արսեն Միրզոյանը պատասխանեց, որ կենտրոնը կշահագործվի շուրջ 27 ամիս հետո՝ սկսած շինարարական աշխատանքների մեկնարկից, նախատեսվում է շինության սեյսմակայունության ուժեղացում, հիվանդանոցին կից տարածքի բարեկարգում, կանաչապատում:

ԲԿ Մոր և մանկան գծով փոխտնօրեն Ֆրունզիկ Ղազարյանը հարցրեց, թե կրճատվելու է արդյոք մահճակալների թիվը և որտեղ են տեղակայվելու ծառայությունները կենտրոնի վերակառուցման ընթացքում:

Ծրագրի համակարգողը նշեց, որ մահճակալների թվի կրճատում չի նախատեսվում, իսկ կենտրոնի տնօրեն Հովհաննիսյանը պատասխանեց, որ վերանորոգման ընթացքում միայն վիրաբուժական ծառայությունը ժամանակավորապես կտեղափոխվի Մասիսի բժշկական կենտրոն:

ԲԿ անձնակազմին հետաքրքրում էր նաև կադրերի կրճատման հարցը:

Մելիք-Նուբարյանը շեշտեց, որ բժշկական կադրերի կրճատում չի նախատեսվում:

Վերջում Դավիթ Մելիք-Նուբարյանը շնորհակալություն հայտնեց հավաքվածներին ակտիվ մասնակցության և հետաքրքիր քննարկման համար:

Ընդհանուր առմամբ ծրագիրը և բնապահպանական կառավարման պլանը արժանացան դրական գնահատականի, որևէ առարկություններ և դիտողություններ չհնչեցին:





Բնապահպանական կառավարման պլանի հանրային քննարկման մասնակիցների ցանկ

1. Ալբերտ Մանուկյան - «Էլեկտրոննախագիծ» ՍՊԸ –ի տնօրեն
2. Նոնա Ղազարյան - ՀՀ Ա Ն ԾԻԳ –ի աշխատակից
3. Դավիթ Մելիք- Նուբարյան - ՀՀ Ա Ն ԾԻԳ –ի աշխատակից
4. Ստեփան Խաչատրյան - Արարատի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության և առողջապահության վարչության պետ
5. Կարեն Պողոսյան - Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետական , քաղաքաշինական և հող օգտագործման բաժնի պետ
6. Ալիկ Իսրաեյան - ԲԿՏՏԱՍ բաժնի վարիչ
7. Վարդիթեր Ղազարյան - Համալսարանական կրթության կանանց ասոցացիա , Արտաշատի մասնաճյուղի նախագահ
8. Գայանե Գրիգորյան - Հասարակական զարգացման աջակցող կանանց ասոցացիա , Արտաշատի մասնաճյուղի նախագահ
9. Պետրոսյան Սամվել – Հասարակական գծով աշխատակից
10. Վարդան Հովհաննիսյան - «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն
11. Ֆրունզիկ Ղազարյան - «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի Մոր և մանկան գծով փոխտնօրեն
12. Էլմիրա Շահբազյան - «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կադրերի բաժնի վարիչ
13. Ռեբեկա Գրիգորյան - «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի գործավար
14. Թագուհի Մինասյան - «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի քարտուղարուհի

# Բաժին IX. Պայմանագրի հատուկ պայմաններ

| Ա. Ընդհանուր հարցեր | |
|---|---|
| ՊԸՊ 1.1 (դ) | Ֆինանսական հաստատությունը՝ "Միջազգային զարգացման ասոցացիա" (ՄԶԱ) |
| ՊԸՊ 1.1 (ժը) | Պատվիրատու՝ "Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ (ԱԾԻԳ ՊՀ)<br>Հասցե՝ Կոմիտասի 49/4 պող., ք.Երևան 0051, ՀՀ<br>Լիազորված ներկայացուցչի անունը՝ Պրն. Նելսոն Զուլոյան, ԱԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար |
| ՊԸՊ 1.1 (իգ) | Ողջ Աշխատանքների նախատեսված ավարտման ժամկետ՝ 27 (քսանյոթ) ամիս |
| ՊԸՊ 1.1 (իզ) | Ծրագրի ղեկավար՝ ԱԾԻԳ ՊՀ-ի Ճարտարապետ / շինարար, շրջակա միջավայրի անվտանգության մասնագետ Սմբատ Սմբատյան<br><br>Հասցե՝ Կոմիտասի 49/4 պող., ք.Երևան 0051, ՀՀ |
| ՊԸՊ 1.1 (իը) | Շինհրապարակը գտնվում է. ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան 116<br>Ներկայացված է ԲԿՊ գծագիր #1-ում |
| ՊԸՊ 1.1 (լա) | Մեկնարկի օր՝ 1 Հուլիս, 2016թ. |
| ՊԸՊ 1.1 (լե) | Աշխատանքներն իրանցից ներկայացնում են.<br>«ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ վերանորոգում»<br><br>«Արտաշատի ԲԿ» հիվանդանոցային մասի երկհարկանի և եռահարկ գոյություն ունեցող մասնաշենքերի վերակառուցում՝ 6950 քմ մակերեսով և 2 ջրի ռեզերվուարների և պոմպակայանի կառուցում, գոյություն ունեցող կաթսայանատ վերակառուցում, թթվածնի 2 ռամպաների կառուցում՝ ներառյալ տարածքի բարեկարգում: |
| ՊԸՊ 2.2 | Աշխատանքների մաս-մաս ավարտ. Կիրառելի չէ |
| ՊԸՊ 2.3(թ) | Հետևյալ փաստաթղթերը նույնպես կազմում են Պայմանագրի մասը՝<br>- Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ) |
| ՊԸՊ 3.1 | Պայմանագրի լեզուն՝ հայերեն<br>Պայմանագրի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները: |

| | |
|---|---|
| ՊԸՊ 5.1 | Ծրագրի ղեկավարը չի կարող փոխանցել իր ցանկացած պարտականություն և պատասխանատվություն: |
| ՊԸՊ 8.1 | Այլ կապալառուների ժամանակացույցեր.Կիրառելի չէ |
| ՊԸՊ 13.1 | **Ապահովագրության և նվազեցման նվազագույն գումարներն են.**<br>(ա) Աշխատանքների, ապրանքնրի և նյութերի կորուստի համար: Ապահովագրության նվազագույն գումարը պետք է հավասար լինի՝ *Աշխատանքների, ապրանքների և նյութերի գնի 100%-ի չափով*<br>(բ) Սարքավորումների կորուստի կամ վնասի համար: *Սարքավորումների գնի 100%-ի չափով*<br>(գ) Պայմանագրի հետ կապված գույքի կորուստի կամ վնաս (բացառությամբ Աշխատանքների, Նյութերի, Կայանքերի ու Սարքավորումների): Ապահովագրության նվազագույն գումարը պետք է հավասար լինի՝ գույքի *գնի 100%-ի չափով*<br>(դ) Անձնական վնաս կամ մահ՝<br>*(i)* կապալառուների աշխատողներ - ապահովագրության նվազագույն գումարը՝ *5,000,000 ՀՀ դրամ*<br>*(ii)* այլ մարդիկ - ապահովագրության նվազագույն գումարը՝ *5,000,000 ՀՀ դրամ* |
| ՊԸՊ 14.1 | **Տվյալներ Շինհրապարակի մասին.** Շինհրապարակը գտնվում է ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ |
| ՊԸՊ 20.1 | **Շինհրապարակի տնօրինման ամսաթվերն են՝** **Պայմանագրի կնքման հաջորդող օրը:**<br>**Տարածքը գտնվում է ՀՀ արարատի մարզի Արտաշատ քաղաքում, Արամ Խաչատրյան 116 հասցեում և Դեպի տարածք ճանապարհները գտնվում է լավ վիճակում:**<br>**Ջրի, կոյուղու, գազի և կապի գծերը պետք է մոնտաժվեն տեխնիկական պայմաններով տրված կետերից:**<br>**Հեռավորությունը ջրմատակարարման կետից կազմում է 400 մ:**<br>**Հեռավորությունը կոյուղու միացման կետից կազմում է 80 մ:**<br>**Էլեկտրամատակարարման աղբյուր է հանդիսանում առկա ենթակայանը:**<br>**Գազամատակարարման միացման կետը 1.3 կմ հեռավորությանից:**<br>**Կապի գծերը գոյություն ունեն:** |
| ՊԸՊ 23.1 և<br>ՊԸՊ 23.2 | Արբիտրին նշանակող լիազոր մարմին՝«ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային դատարան» |
| ՊԸՊ 24.3 | Արբիտրի ժամային դրույքը և փոխհատուցվող ծախսերը՝ **Կահիմանվի պայմանագրի կնքումից առաջ:** |

| | |
|---|---|
| ՊԸԴ 24.4 | Հաստատություն, որի ընթացակարգերը կիրառվելու են արբիտրաժի ժամանակ: **Համաձայն տեղական օրենքների:** Արբիտրաժային հաստատության հասցեն է. **ՀՀ, ք. Երեւան, Խանջյան 11** |
| **Բ. Ժամանակի վերահսկողություն** | |
| ՊԸԴ 26.1 | Կապալառուն պարտավոր է Աշխատանքների ծրագիրը ներկայացնել հաստատմանը Ընդունման նամակը ստանալուց հետո **30 (երեսուն) օրվա** ընթացքում: |
| ՊԸԴ 26.3 | Ծրագրի թարմացման հաճախականությունը **30 (երեսուն) օր** է: Թարմացված ծրագրի ուշացման դեպքում պահվում է **200,000(երկու հարյուր հազար) ՀՀ դրամ**: |
| **Գ. Որակի վերահսկողություն** | |
| ՊԸԴ 34.1 | Թերությունների վերացման ժամանակաշրջանը **365 (երեք հարյուր վաթսունհինգ) օր** է: |
| **Դ. Ծախսերի վերահսկում** | |
| ՊԸԴ 44.1 | ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ |
| ՊԸԴ 45.1 | Պայմանագրի գինը **ենթակա է** ճշգրտման ՊԸԴ 45 կետի համաձայն: Եթե կիրառվում է ինդեքսի նկարագիրը և գործակիցը ներկայացված են գների ճշգրտման տվյալներ համար **աղյուսակ 1-ում:** |
| ՊԸԴ 46.1 | Վճարումներից պահվող համամասնությունը՝ **5 (հինգ) %** |
| ՊԸԴ 47.1 | Վնասների փոխհատուցումը ողջ Աշխատանքների համար՝ **0.10%-ի չափով յուրաքանչյուր օրվա դիմաց**: Վնասների փոխհատուցման առավելագույն գումարը ողջ Աշխատանքների համար՝ **Պայմանագրի վերջնական գնի 10 (տաս) %:** |
| ՊԸԴ 48.1 | Կիրառելի չէ |
| ՊԸԴ 49.1 | Կանխավճարի գումարը կկազմի՝ Պայմանագրի արժեքի **20% (քսան տոկոս) չափով գումար**, որը պետք է վճարվի Կապալառուին ոչ ուշ, քան **15 (տասնհինգ) օրացուցային օրվա** ընթացքում՝ Պատվիրատուի համար ընդունելի բանկի կողմից թողարկված պատշաճ Կանխավճարի բանկային երաշխիքը ստանալուց հետո: |
| ՊԸԴ 50.1 | Կատարման երաշխիքը պետք է լինի **անվերապահ (ցպահանջ) բանկային երաշխիքի ձևով և կազմի Պայմանագրի գնի 10%:** |
| **Ե. Պայմանագրի ավարտում** | |
| ՊԸԴ 56.1 | Շահագործման ու պահպանման ձեռնարկները պահանջվում է ներկայացնել մինչև. **Ավարտական ակտի (Փաստացի ավարտի)** |

| | |
|---|---|
| | բացթողումից 20 (քսան) օրվա ընթացքում<br><br>Կատարողական գծագրերը պահանջվում է ներկայացնել. Ավարտական ակտի (Փաստացի ավարտի) բացթողումից 28 (քսանութ) օրվա ընթացքում |
| **ՊԸՊ 56.2** | Կատարողական գծագրերը և/կամ շահագործման ու պահպանման ձեռնարկները մինչև ՊԸՊ 58.1 ենթակետում նշված ամսաթիվը չներկայացնելու դեպքում պահվում է 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: |
| **ՊԸՊ 57.2 (է)** | Օրերի առավելագույն թիվը՝ 200 (երկու հարյուր) օր: |
| **ՊԸՊ 58.1** | Տոկոսադրույք, որը կիրառվում է չավարտվածաշխատանքներիարժեքի նկատմամբ և ներկայացնում Պատվիրատուի լրացուցիչ ծախսն Աշխատանքներն ավարտելու համար՝ 10%: |

# Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)

Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանումը՝ **«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում վարկային ծրագիր»**
Փոխառության No.՝ 5222-ԱՄ
Պայմանագրի անվանումը՝ **«ՀՀ Արարատի մարզի Արտաշատ ԲԿ վերանորոգում»**
Պայմանագիր **No.**՝ CR4/NCB/B-W/005-16

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Համաշխարհային բանկից «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիրն իրականացնելու համար և մտադիր է այդ միջոցներից մի մասն ուղղել **«ՀՀ Արարատի մարզի Արտաշատ ԲԿ վերանորոգում»** CR4/NCB/B-W/005-16 պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար:

2. ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ (ԱԾԻԳ ՊՀ) հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ **հիվանդանոցային մասի երկհարկանի և եռահարկ գոյություն ունեցող մասնաշենքերի վերակառուցում՝ 6950 քմ մակերեսով և 2 ջրի ռեզերվուարների և պոմպակայանի կառուցում, գոյություն ունեցող կաթսայանատ վերակառուցում, թթվածնի 2 ռամպաների կառուցում՝ ներառյալ տարածքի բարեկարգում և այլ աշխատանքներ**:

3. Մրցույթն անց է կացվելու **Ազգային մրցութային սակարկությունների (ԱՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ *«Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՋՎՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից»* (2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսին): Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ **ԱԾԻԳ ՊՀ-ից (պրն. Հովակիմ Պողոսյան – գնումների մասնագետ, հեռ. (+37 10) 29-75-36, էլ.փոստ: procurement@healthpiu.am)** և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ աշխատանքային օրերին **ժամը 09:30-ից մինչև 17:30 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ):**

5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը հայերեն լեզվով, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **40,000 ՀՀ** դրամ չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը ներքոնշյալ հաշվին.

- ՀՀ Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարան- ***900000902123*** հայկական դրամային հաշիվ

Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է անվճար բեռնվել նաև www.gnumner.am կայքից: Այնուամենայնիվ, ԱԾԻԳ ՊՀ պատասխանատու չէ վերոնշյալ կայքից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցույթային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2016թ. մայիսի 10-ին ժամը 10:00-ին (Երևանի ժամանակով)** կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում **չի թույլատրվում**: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2016թ. մայիսի 10-ին ժամը 10:05-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում**:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն **Մրցութային առաջարկի երաշխիքով**, որի գումարն է. **29,800,000 ՀՀ դրամ** (կամ համարժեք գումար ազատ փոխարկելի արտարժույթով):

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

**ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ**

**Պրն. Նելսոն Զուլոյան, տնօրենի պաշտոնակատար**

Պրն. Սմբատ Սմբատյան-ճարտարապետ/շինարար, շրջակա միջավայրի անվտանգության մասնագետ

Պրն. Հովակիմ Պողոսյան-գնումների մասնագետ

**ՀՀ, Երևան 0051, Կոմիտասի պող. 49/4**

**Հեռ՝ (+37410) 297-536; 297-537; 297-538**

Էլ. փոստ՝ info@healthpiu.am; procurement@healthpiu.am

Վեբ կայք՝ www.healthpiu.am